

ՀԱՅԱՍՏԱՆ 2010

ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Երևան, Հայաստան



Հայաստան 2010. անորոշության տարի

Հեղինակային իրավունքները՝ Միվիլիթաս հիմնադրամի
© Միվիլիթաս հիմնադրամ 2010 թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Տպագրված է Հայաստանում

Միվիլիթաս հիմնադրամ
Հյուսիսային պողոտա 1, գրասենյակ 30
Երևան, Հայաստան
info@civilitasfoundation.org

ՀՏԴ 323(479.25):338(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1
Հ 247

Հ 247 Հայաստան 2010. անորոշության տարի. -Եր.
Միվիլիթաս հիմնադրամ, 2010. – 72 էջ

ՀՏԴ 323(479.25):338(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1

ISBN 978-99941-2-502-9

Զեկույցը հրատարակվել է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության
օժանդակությամբ: Զեկույցում արտահայտված տեսակետները պատկանում են
Միվիլիթաս հիմնադրամին և միշտ չէ, որ արտացոլում են Նորվեգիայի արտաքին գործերի
նախարարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ	6
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ	8
ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.....	38
ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈՂ	54
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ	70

ՆԱԽԱԲԱՆ

Երեք տարի առաջ Սիվիլիթաս հիմնադրամը հրապարակեց իր առաջին տարեկան զեկույցը, որը նպատակ ուներ ներկայացնելու Հայաստանի և տարածաշրջանի վերաբերյալ տեսակետներ՝ հայաստանյան տեսանկյունից, այն ինչ չեն անում միջազգային հանրության համանման զեկույցները:

Տարեվերջին ամփոփված այս գնահատականները նպատակ ունեն ամբողջացնելու անցած տարվա իրադարձություններն ու միտումները, ինչպես նաև ապագայում որոշ խնդիրների լուծման ուղիներ նախանշել:

2010-ը մեզ ընդհուպ մոտեցնում է Հայաստանի անկախության 20-ամյակին: Մասամբ նաև այդ պատճառով, հաշվի առնելով անկախության 20-րդ տարվա նախաշեմին Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների մակարդակը, զեկույցում տեղ գտած որոշ գնահատականներ իրատեսորեն խիստ են ձևակերպված:

2011-ին Հայաստանը կթևակոխի անկախության երրորդ տասնամյակ: Սա առիթ է լրջորեն մտածելու այն խնդիրների շուրջ, որոնց պատճառով ամենատարբեր ցուցիչներով ու սանդղակներով Հայաստանը վատ դիրքերում է թե՛ տնտեսական

և քաղաքական, թե՛ սոցիալական ու ժողովրդավարական ցուցանիշներով:

Իրար հաջորդած կառավարությունները չեն առաջարկել ո՛չ հասարակության մտահոգություններին արձագանքող երկարաժամկետ համապարփակ պատկերացումներ երկրի ապագայի վերաբերյալ, ո՛չ էլ կարճաժամկետ իրագործելի ծրագրեր: Քաղաքացիական հասարակությունն ու լրատվամիջոցները նույնպես չեն ցուցաբերել երկրի ապագայի շուրջ հիմնարար խնդիրների վերաբերյալ հետևողական, բաց և ընդգրկուն բանավեժ ծավալելու պատրաստակամություն և հետևողականություն: Իսկ նման հարցերը շատ են:

- Որո՞նք են Հայաստանի անվտանգության բավարար պահանջները:
- Ինչպե՞ս կարելի է բարեփոխել Հայաստանի քաղաքական համակարգը այն առողջացնելու և ընդգրկուն դարձնելու համար:
- Ինչպիսի՞ն պետք է լինի կրթական համակարգը, որպեսզի պահպանելով ազգային ինքնությունը, նաև հնարավորություն ընձեռի փոքր ժողովրդին համաշխարհային բեմում մրցունակ դառնալ:
- Ո՞րն է անձի ազատության և համընդհանուր բարեկեցության համադրման համար անհրաժեշտ փոխզիջման չափը:
- Որքանո՞վ է հայ հասարակությունը պատրաստ պաշտպանել ամենախոցելի խավերի իրավունքները:

ՆԱԽԱԲԱՆ

- Ինչպե՞ս է հնարավոր խելամտորեն և իրականում տարանջատել քաղաքական և գործարար շահերը:
- Ինչպե՞ս անել, որ բաց, ազատական կառավարությունը աջակցի խորը, կայուն և բազմակողմանի տնտեսական աճին:
- Ի՞նչ գին է պատրաստ Հայաստանը վճարել շրջակա միջավայրը պաշտպանելու համար՝ առողջ բնապահպանական ու տնտեսական արդյունքներ ստանալու համար:
- Ինչպե՞ս հնարավոր դարձնել հանրության համար մատչելի որակյալ առողջապահական համակարգի ներդրումը:
- Ինչպե՞ս վերականգնել հույսն ու հավատը արդարադատության համակարգի հանդեպ:
- Ինչպե՞ս ապահովել զինվորի՝ որպես անհատի և բանակի՝ որպես հաստատության բարոյականությունն ու ազնվությունը:
- Ինչպե՞ս հասնել Հայաստան-սփյուռք հարաբերությունների անհրաժեշտ մակարդակի:

Տարեդարձները հնարավորություն են ընձեռում հետ նայելու և միևնույն ժամանակ մեծացնում են ապագայի հանդեպ ակնկալիքները: Անկախ Հայաստանի 20-րդ տարին հենց այդպիսի տարի է լինելու:

Որո՞նք են քաղաքականության նպատակները մարդկանց ամենօրյա կյանքի այս բոլոր կարևորագույն ոլորտներում: Պատասխանը պետք է փնտրել Սահմանադրության մեջ ամրագրված դրույթներում՝ Հայաստանը դարձնելու համար ինքնիշխան, ժողովրդական, սոցիալական և իրավական պետություն:

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Այս հրատարակությունը անդրադառնում է Հայաստանում անցած տարվա քաղաքական և տնտեսական իրադարձություններին, ինչպես նաև տարածաշրջանային և համաշխարհային այն զարգացումներին, որոնք ազդել են տարածաշրջանի վրա:

2009-ը մենք բնութագրել էինք որպես խոստումի և այլ իրականության տարի: Այդ տարին մեզ խոստանում էր շատ ավելին, քան ի վերջո տվեց՝ ներքին և տարածաշրջանային իրողությունների հետևանքով:

2010-ին Հայաստանում ակնհայտ աղետներ կամ տեսանելի ձեռքբերումներ չեղան, թեև տնտեսական և քաղաքական խնդիրները շարունակում էին մնալ չլուծված: Այն, որ նման լճացումը ինքնին խոչընդոտ էր տնտեսական և քաղաքական առաջընթացի համար ակնհայտ դարձավ հենց այն քայլերով, որոնք չիրականացվեցին: 2010-ին տարածաշրջանի ներքին անորոշություններին գումարվեցին տարածաշրջանի հանդեպ համաշխարհային անորոշությունը: Մասամբ, նախորդ տարվա ԱՄՆ-Ռուսաստան մերձեցման, մասամբ ստիպված կամ կամավոր ընդունված որոշումների հետևանքով Ռուսաստանի

ազդեցությունը Կովկասում ավելի զգալի դարձավ:

Հայաստանը չբարելավեց հարաբերությունները արևելյան և արևմտյան հարևանների հետ: Հայ-թուրքական արձանագրությունների սառեցումից հետո սառեցին նաև Անկարա-Երևան պաշտոնական հարաբերությունները: Սրա արդյունքում լավատեսները հիասթափվեցին, միջնորդները շփոթվեցին իսկ քննադատների հոռետեսությունն արդարացվեց:

Ղարաբաղյան բանակցությունները 2010-ին մտան անորոշության, անկանխատեսելիության և վտանգի փուլ:

Ներքին գործընթացներում հայ հասարակության մեջ գնալով աճեց լարվածությունը անձնական ազատության և ավելի մեծ քաղաքացիական ազատությունների ակնկալիքի միջև: Արդյունքում, քաղաքական տեսանկյունից աննկատ տարում ծնվեցին մի շարք քաղաքացիական շարժումներ:

Միջին խավը փորձում էր հասնել բարգավաճման և բարեկեցության տնտեսապես և քաղաքականապես անկանխատեսելի և ոչ թափանցիկ միջավայրում: Արդյունքում, միջին խավի գոհունակության փոխարեն, որ կարող էր լավատեսների երկիր ստեղծել, միջին խավի դժգոհությունը լրացրեց հոռետեսների աճող շարքերը: Այս միտումն ավելի խորացավ այն համոզմունքից, որ տնտեսական և հանրային ոլորտի հաստատությունները՝ դպրոցներից մինչև ոստիկանություն, կառուցվածքային փոփոխությունների չենթարկվեցին, և հավանաբար այդ պատճառով ընկավվեցին անփոփոխելի: Միջազգային հանրությունը և երկրի քաղաքացիները սա համարեցին ոչ

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Թե անորոշության մեծ ալիք, այլ նահանջի մշտական իրավիճակ:

Տնտեսական ոլորտում, կառավարությունը սպառեց տնտեսական ճգնաժամից ելք գտնելու բոլոր մատչելի հարկաբյուջետային և դրամավարկային միջոցները: Կառավարությունը որոշակի հաջողության հասավ՝ թույլ չտալով, որ ֆինանսական խնդիրները էլ ավելի խորանան: Բայց 2010-ին կառավարությունը չկարողացավ քաղաքականապես զգայուն բարեփոխումներ իրականացնել: Դրա հետևանքով՝ տնտեսական բազմազանեցման և մրցակցության պակասը, ինչպես նաև բիզնեսի և կառավարության ներկայացուցիչների փոխկապակցվածությունը մնացին տնտեսական աճի հիմնական խոչընդոտները:

2010-ին, իրոք, տնտեսական աճին խոչընդոտում էին կառուցվածքային հիմնարար բազմաթիվ քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրներ: Տարին ավարտվեց այնպես, ինչպես սկսվեց՝ անորոշությամբ, անհատական և ազգային մակարդակում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայաստանի կամ Հարավային Կովկասի շուրջ իրադրությունը չփոխվեց ո՛չ Միացյալ Նահանգներ-Ռուսաստան հարաբերությունների նոր մեկնարկից և ո՛չ էլ Թուրքիայի «գրո հիմնախնդիրներ հարևանների հետ» քաղաքականությունից: Աբխազիան և Հարավային Օսիան շարունակում են կռվախնձոր մնալ Վրաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում նույնիսկ նվազագույն առաջընթաց չգրանցվեց, և Թուրքիա-Հայաստան սահմանը փակ մնաց:

2010 թվականը **Ռուսաստանի** դիրքերի ամրապնդման տարի էր ոչ միայն Հարավային Կովկասում, այլև ամբողջ նախկին խորհրդային տարածքում:

Ուկրաինայում Ռուսաստանի համար ընդունելի Վիկտոր Յանուկովիչի հաղթանակը նախագահական ընտրություններում, Ղրղզստանում նախագահ Կուրմանբեկ Բակիևի ստիպողական հեռացումը նախագահի պաշտոնից և երկրից, ինչպես նաև Միխեիլ Սաակաշվիլու նկատմամբ Ռուսաստանի որդեգրած արհամարհական վերաբերմունքը Մոսկվայի համար միջոցներ էին ցույց տալու, որ Արևմուտքի կողմից

հավանության արժանացած և պաշտպանած «գունավոր» հեղափոխությունները ձախողվել են:

Հարավային Կովկասում Ռուսաստանի կեցվածքն առավել վստահ ու հաստատակամ էր: Վրաստանի դեպքում Ռուսաստանը պարզապես որդեգրել է սպասողական դիրքորոշում մինչև նախագահական հաջորդ ընտրությունները: Մինչդեռ Հայաստանի ու Ադրբեջանի դեպքում նրա կեցվածքն այլ էր:

Կրեմլն ավելի ամրապնդեց իր ռազմական ներկայությունը Հայաստանում՝ մինչև 49 տարվա հասցնելով Գյումրիի 102-րդ ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը: Դեռ 2009 թվականի սեպտեմբերին նույնպես 49 տարվա ռազմական պայմանագիր էր ստորագրել Հարավային Օսիայի, իսկ 2010-ի փետրվարին՝ Աբխազիայի հետ: Բացի այդ, Ռուսաստանի դերն ընդլայնվեց և՛ Հայաստանի տնտեսության մեջ, և՛ տարածաշրջանի օրակարգային հարցերում:

Հայաստանի և Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսյանն ու Դմիտրի Մեդվեդևը տարվա ընթացքում հանդիպեցին ինն անգամ: Շփումների նման աննախադեպ հաճախությունն իր դրոշմը թողեց ինչպես գործնական առումով՝ Հայաստանի ներքաղաքական կյանքում, այնպես էլ ունեցավ խորհրդանշական նշանակություն:

Ադրբեջանը նույնպես ավելի թեքվեց դեպի հյուսիս: Ադրբեջանը զգալի կերպով ավելացրեց գազի վաճառքի ծավալները Ռուսաստանին՝ պակասեցնելով Եվրոպական Միության կողմից պաշտպանվող Նաբուկո գազատարի կառուցման ծրագրի հավանականությունը:

ՏԱՐԱԾԱՆՇՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները ևս բարելավվեցին: Նախագահ Դմիտրի Մեդվեդևի Անկարա այցի ընթացքում ստորագրվեցին բազմաթիվ համաձայնագրեր, այդ թվում՝ երկու երկրների միջև մուտքի արտոնագրերը վերացնելու մասին: Ռուսաստանի և Թուրքիայի միջև նախագծվեց նավթախողովակաշար կառուցելու միջկառավարական համաձայնագիր: Խողովակաշարը Սև ծովի հյուսիսային ափամերձ թուրքական Սամսուն քաղաքից ձգվելու է մինչև հարավային Ջեյհան նավահանգիստ: Այս նավթատարը Մոսկվային հնարավորություն է տալու տարեկան մատակարարել 25 միլիոն տոննա նավթ, հետագայում այդ ծավալները երեք անգամ ավելացնելու հեռանկարով:

Թուրքիայի համար 2010 թվականը տարածաշրջանում ավելի լայն ներգրավվածության տարի էր՝ համահունչ նրա տարածաշրջանային ուժ դառնալու ձգտումներին: Թուրքիայի շրջադարձը դեպի Մերձավոր ու Միջին Արևելք կարող է որակվել նեո-օսմանիզմ, հիշեցնելով Թուրքիայի բազմամշակույթ և կայսերական անցյալը: Շատերը դա Թուրքիայի կողմից տարածաշրջանում իր հին սխալներն ուղղելու փորձեր համարեցին: Մի կողմից Թուրքիան կարողացավ իր հարաբերությունները նոր մակարդակի հասցնել անմիջական հարևաններ և նախկին հակառակորդներ Ռունաստանի, Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ, մյուս կողմից, ի զորու չեղավ կարգավորել առկա խնդիրները Կիպրոսի և Հայաստանի հետ, ինչպես նաև իր ներքին մարտահրավերը՝ քրդական հարցը, երկրի արևելյան և հարավ-արևելյան շրջաններում:

Այս երեք կարևորագույն հարցերում հաջողության բացակայությունը կասկածի տակ դրեց «զրո հիմնախնդիրներ

հարևանների հետ» հռչակված արտաքին քաղաքականության արդյունավետությունը: Ավելին, թեև Թուրքիան առավել քան երբևէ դրական ընկալում ունի արաբական աշխարհում շնորհիվ իր հակա-իսրայելյան և ի պաշտպանություն Պաղեստինի քայլերի, Անկարայի դերը մերձավորարևելյան ամենախճճված հարցի կարգավորման մեջ՝ պաղեստինա-իսրայելյան բանակցություններում, շատ նվազեց:

Կրեմլն ավելի ամրապնդեց իր ռազմական ներկայությունը Հայաստանում՝ մինչև 49 տարվա հասցնելով Գյումրիի 102-րդ ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը:

Այդուհանդերձ, Թուրքիան իրեն սպառնալիք համարող երկրների ցուցակից հանեց Հայաստանը, Իրանը ու Սիրիան: Փոխարենը ցուցակին ավելացավ Իսրայելը, այսպիսով առավել հակասական ու ոչ միանշանակ դարձնելով տարվա հարցադրումը՝ արդյո՞ք Թուրքիան Արևմուտքից շրջադարձ է կատարում դեպի Արևելք:

Չնայած Միջին Արևելքում ունեցած ինքնավստահությանը, Թուրքիայի հայտարարությունները մատնանշում են, որ նա շարունակում է հավատարիմ մնալ Եվրոպական Միությանը անդամակցելու իր տասնամյակների մտադրությանը: Այս տարվա սկզբում Անկարան մերժեց Ֆրանսիայի և Գերմանիայի՝ Եվրոպական

ՏԱՐԱԾԱՆՇՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Միության հետ Թուրքիայի «արտոնյալ գործընկերության» առաջարկը, որը մի փոքր պակաս կլիներ լիիրավ անդամակցությունից: Եվ տարվա վերջում անդամակցության գործընթացը կրկնվող հետաձգումների պատճառով համարյա դադարել էր. բանակցությունների որևէ նոր հատվածի մեկնարկ չտրվեց, առաջընթացի ընդհանուր պակասի պատճառաբանություններով:

խզման: Թբիլիսին շարունակեց արգելափակել Ռուսաստանի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելու ճանապարհը, ինչպես նաև բազմիցս վերահաստատեց ՆԱՏՕ-ին ու Եվրոպական Միությանը միանալու մտադրությունը և վերագինվելու իր իրավունքը (չնայած Միացյալ Նահանգների դժկամությանը՝ մատակարարելու Վրաստանի համար ցանկալի զենք-զինամթերքը):

Թուրքիան ի գորու չեղավ կարգավորել առկա խնդիրները Կիպրոսի և Հայաստանի հետ, ինչպես նաև իր ներքին մարտահրավերը՝ քրդական հարցը, երկրի արևելյան և հարավ-արևելյան շրջաններում:

Ունենալով մտավախություններ և դառնացած, որ կարող է «զոհաբերվել» հանուն ռուսամերիկյան հարաբերությունների նոր մեկնարկին՝ «վերաբեռնմանը», **Վրաստանը** ավելի ամրապնդեց իր կապերը Թուրքիայի հետ, ինչպես նաև նոր մակարդակի հասցրեց հարաբերություններն Իրանի հետ: 2010-ի ողջ ընթացքում պահպանվեց Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների խիստ լարվածությունը, որ արդյունք էր 2008 թվականի օգոստոսյան պատերազմի, հետագայում Մոսկվայի կողմից Աբխազիայի և Չարավային Օսիայի ճանաչման որպես անկախ, ինքնիշխան պետություններ, և ի պատասխան՝ Վրաստանի կողմից դիվանագիտական հարաբերությունների

Բացի այդ, Թբիլիսին ձեռնարկեց նոր ռազմավարություն, որի նպատակն էր սեպ խրել Մոսկվայի ու Չյուսիսային Կովկասի բնակչության միջև: Վրացական իշխանությունները սկսեցին ինտերնետով ռուսերեն հեռարձակում իրականացնել Չյուսիսային Կովկասի համար, որի նպատակն էր, ըստ վրացական իշխանությունների հայտարարության, այլընտրանքային տեղեկատվություն տարածել տարածաշրջանի զարգացումների շուրջ: Թբիլիսիում կազմակերպվեց մի ակադեմիական խորհրդաժողով, որը նվիրված էր 1864 թվականին ցարական Ռուսաստանի կողմից չերքեզների արտաքսմանն ու սպանություններին: Այնուհետև Թբիլիսին ավելի գրգռեց Մոսկվային՝ Չյուսիսային Կովկասի բնակչությանը միակողմանիորեն ազատելով Վրաստանի մուտքի արտոնագրի պահանջից մինչև իննսուն օր այցերի համար: Այդ որոշմանը հաջորդեցին Չեչնիայի նախագահ Ռամզան Կադիրովի և ռուսական պաշտոնյաների մեղադրանքները, թե Վրաստանը թաքուն օգնություն է տրամադրում Չյուսիսային Կովկասի իսլամական ծայրահեղականներին:

Նոյեմբերի վերջերին վրացական խորհրդարանը համաշխարհային լրատվամիջոցներով մի արշավ սկսեց, որի նպատակն էր կարծիք ձևավորել, թե

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Ռուսաստանը «բարոյական իրավունք չունի» սպանությունների վայրերում (նկատի ունի Աբխազիայի մոտիկությունը) հյուրընկալել 2014 թվականի ձմեռային օլիմպիական խաղերը, չնայած 2007-ին նախագահ Սաակաշվիլին ողջունել էր 2014 թվականի ձմեռային խաղերը Սոչիում անցկացնելու Օլիմպիական կոմիտեի որոշումը:

Վրացի բարձրաստիճան պաշտոնյաները, ներառյալ նախագահ Սաակաշվիլին, շարունակաբար հայտարարում են, որ պատրաստ են առանց նախապայմանների բանակցություններ սկսել այն հարցերի շուրջ, որոնք հիմնարար են երկկողմ հարաբերությունների համար՝ Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուսական զորքերի դուրսբերումը և Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը: Իր հերթին՝ Կրեմլն է բացառում որևէ հարաբերություն Թբիլիսիի հետ, քանի դեռ Վրաստանում իշխանության գլուխ է Միխեիլ Սաակաշվիլին: Վարչապետ Վլադիմիր Պուտինը նույնիսկ տարբեր առիթներով Մոսկվայում ընդունել է Վրաստանի ընդդիմադիր մի քանի գործիչներին:

Վերանորոգման պատճառաբանությամբ մի քանի տարի փակ մնալուց հետո, գարնանը վերաբացվեց վրաց-ռուսական Կազբեկ-Վերին Լարս սահմանադուռը: Դա տեղի ունեցավ նաև Հայաստանի միջնորդության շնորհիվ, որովհետև բեռնատարների համար նախատեսված այս սահմանային անցակետի բացումը կենսական է Հայաստանի համար: Տարվա սկզբին վերսկսվել էին 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո դադարեցված ուղիղ չվերթները Մոսկվայի և Թբիլիսիի միջև:

Միևնույն ժամանակ, որոշակի լարվածություն նկատվեց նաև Աբխազիայի ու Հարավային Օսիայի և Ռուսաստանի

միջև հարաբերություններում: Աբխազիայի ղեկավարությունը Մոսկվայի կողմից ճնշումների տակ է, որպեսզի իր համաձայնությունը տա վերականգնելու այն քաղաքացիների անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, ովքեր լքել են Աբխազիան 1992-1993 թթ. պատերազմի ընթացքում և հետագայում ձեռք բերել ռուսական քաղաքացիություն: Աբխազիայի ընդդիմությունը հակառակ է նման զիջումների գնալուն: Հարավային Օսիայում Մոսկվան փորձում է դադարեցնել հակամարտության հետևանքները վերականգնելու նպատակով տրամադրված միլիարդավոր ռուբլիների շարունակվող զեղծարարությունը:

Վրաստանը ավելի ամրապնդեց իր կապերը Թուրքիայի հետ, ինչպես նաև նոր մակարդակի հասցրեց հարաբերություններն Իրանի հետ:

Ադրբեջանի և Թուրքիայի հետ (որը նրա ամենախոշոր առևտրային գործընկերն է, տարեկան մեկ միլիարդ դոլարի հասնող ապրանքաշրջանառությամբ) Վրաստանի հարաբերությունների հիմքում ընկած է տնտեսական պրագմատիզմը: Մայիսին վերսկսվեցին Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարության աշխատանքները, որոնք դադարեցվել էին 2009-ի դեկտեմբերին: Վրաստանի, Ադրբեջանի և Ռումինիայի միջև ստորագրվեց եռակողմ համաձայնագիր ադրբեջանական բնական գազը Եվրոպա

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

տեղափոխելու նախագծի վերաբերյալ:
Աջարիայում շարունակվում էր ամրապնդվել
Թուրքիայի տնտեսական ներկայությունը:

**Ադրբեջանը,
խանդավառված
Թուրքիայի և Հայաստանի
միջև մերձեցման
գործընթացի սառեցումից,
հիմա ավելի է կարևորում
իր համագործակցությունը
Թուրքիայի և Իրանի
հետ, երբ լարվել են
ադրբեջանա-ամերիկյան
հարաբերությունները:**

Թբիլիսիսի նաև նոր հարաբերություններ
նախաձեռնեց Թեհրանի հետ մայիսին,
շաբաթներ անց այն բանից, երբ Միացյալ
Նահանգները չկազմակերպեց հանդիպում
Բարաք Օբամայի և Վաշինգտոնում
Միջուկային անվտանգության
գագաթաժողովին մասնակցող
Միխեիլ Սաակաշվիլիի միջև: Վրացի
պաշտոնատարները պնդում են, որ
Թեհրանի հետ սերտ հարաբերությունները
չպետք է ընկալվեն ի հաշիվ կամ ընդդեմ
վրաց-ամերիկյան ռազմավարական
դաշինքի, հաշվի առնելով, որ վրաց-
իրանական հարաբերություններում
առաջնահերթությունը տնտեսական
համագործակցությունն ու առևտուրն են:
Նոյեմբերին Իրանի արտգործնախարարի
Վրաստան այցի ընթացքում
ստորագրվեցին մուտքի արտոնագրերի
վերացման, Բաթումիում իրանական
հյուպատոսության բացման և Թբիլիսիի

ու Թեհրանի միջև ուղիղ թռիչքներ սկսելու
մասին համաձայնագրեր: Ադրբեջանը,
խանդավառված Թուրքիայի և Հայաստանի
միջև մերձեցման գործընթացի
սառեցումից, հիմա ավելի է կարևորում իր
համագործակցությունը Թուրքիայի և Իրանի
հետ, երբ լարվել են ադրբեջանա-ամերիկյան
հարաբերությունները:

Հայ-թուրքական արձանագրությունների
սառեցումից անմիջապես հետո, Թուրքիայի
վարչապետը և արտգործնախարարը
հրապարակավ վերահաստատեցին
Թուրքիայի պարտավորությունը, համաձայն
1921 թ. Կարսի պայմանագրի, պաշտպանելու
Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի
ինքնավար հանրապետությունը Հայաստանի
«սպառնալիքներից»:

Թուրքիան և Ադրբեջանը վերջապես
ստորագրեցին երկար սպասված համաձայ-
նագիրը, որով բանակցություններ են սկսվում
Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա
ադրբեջանական գազի արտահանումների
մասին: Ըստ նախնական գնահատումների,
Շահ Դենիզ հանքավայրի շահագործման
երկրորդ փուլը կսկսվի 2016-2017 թթ.:

Օգոստոսի կեսերին Բաքու այցի ընթացքում
Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը
Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևի
հետ ստորագրեց ռազմավարական
համագործակցության և փոխօգնության
հռչակագիր: Մեկ ամիս անց Ալիևը
այցելեց Անկարա, որտեղ նրա ու
վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի
միջև համաձայնություն ձեռք բերվեց
Ռազմավարական գործընկերության խորհուրդ
ձևավորելու մասին: Նոյեմբերին Ադրբեջանի
կառավարությունը և թուրքական մի
ընկերություն ստորագրեցին համաձայնագիր
107 մմ և 122 մմ տրամագծով հրթիռներ
արտադրելու համատեղ ծրագրի մասին:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Այդուհանդերձ, Բաքուն չվերացրեց Թուրքիայի քաղաքացիների համար առանց մուտքի արտոնագրերի Ադրբեջան այցելության կարգը, ի տարբերություն Անկարայի, որը ադրբեջանցիների համար մուտքի արտոնագրերը վերացրել էր 2009 թվականին: Նույն կերպ Թեհրանն էր 2010 թվականի փետրվարին վերացրել մուտքի արտոնագրի պահանջը մինչև երկու շաբաթով Իրան այցելող Ադրբեջանի քաղաքացիների համար, սակայն այս դեպքում ևս Բաքուն փոխադարձ քայլ չէր արել:

Չնայած Ադրբեջանը և Ռուսաստանը «ռազմավարական դաշնակիցներ» չեն, ինչպես Ռուսաստանն ու Չայաստանը, այդուհանդերձ ռուս-ադրբեջանական հարաբերությունները շարունակում էին ընդլայնվել: Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը սեպտեմբերին այցելեց Բաքու, որի ընթացում ստորագրվեց համաձայնագիր երկու երկրների միջև սահմանագծման մասին, ինչը, համաձայն որոշ վերլուծաբանների, չէր բխում Դադստանի շահերից: Մեդվեդևի այցի ընթացքում նաև հերթական համաձայնագիրը ստորագրվեց ռուսական Գազպրոմի կողմից ադրբեջանական գազ գնելու վերաբերյալ, որով 2009 թվականին նախատեսված տարեկան 500 միլիոն խորանարդ մետր գազ գնելու պայմանավորվածությունը 2010-ին դարձավ մեկ միլիարդ խորանարդ, իսկ 2011-ին՝ երկու միլիարդ և այսպես շարունակ: Լուրերը, որ Ադրբեջանը Ռուսաստանից գնել է U-300 համակարգեր, չէին հերքվում ոչ մեկի կողմից:

Ադրբեջանա-իրանական հարաբերությունների ընթացքը խոսում է Բաքվի նկատմամբ Վաշինգտոնի նվազող ազդեցության մասին: Մյուս կողմից, Ադրբեջանն օգուտներ է քաղում թուրք-իրանական սերտացող հարաբերություններից: Ադրբեջանը պարտավոր է կատարել Անվտանգության

խորհրդի 1929 բանաձևը, սակայն Բաքուն ակնհայտորեն չի ցանկանում խաթարել Իրանի հետ առևտրային կապերը, կատարելով Իրանի հանդեպ Միացյալ Նահանգների և Եվրոպական Միության հավելյալ պատժամիջոցներից բխող պարտավորությունները:

Օգոստոսի կեսերին Բաքու այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ ստորագրեց ռազմավարական համագործակցության և փոխօգնության հռչակագիր:

Ադրբեջանցի պաշտոնյաները մեղադրեցին Իրանին՝ սահմանային ջրամբարից միանգամից շատ ջուր բաց թողելու հետևանքով Ադրբեջանի տարածքում ջրհեղեղներ պատճառելու համար: Իրանը բողոքեց Ադրբեջանում մի քանի մզկիթների քանդման կամ կիսաքանդման դեմ: Դրանցից մեկի դեպքում Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը հայտարարեց, որ այն տեխնիկական պատճառով է քանդվում: Բայց մայիսին Իրանի հոգևոր ղեկավարությունը սպառնաց համապատասխան վճիռ արձակել, եթե շարունակվի մզկիթի քանդումը:

Իրանի նկատմամբ ամերիկյան ու եվրոպական տնտեսական մեկուսացման քաղաքականությունը չի խոչընդոտում նրա

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ներգրավվածությանը տարածաշրջանային գործընթացներին: Նոյեմբերի վերջերին հայտարարվեց, որ Թեհրանում ծրագրվում է իրանցի, ադրբեջանցի և թուրք արտգործնախարարների ժողով, եռակողմ համագործակցության քննարկման նպատակով, ներառյալ Թուրքիայի, Իրանի և Նախիջևանի սահմաններին տնտեսական գոտու ձևավորման հնարավորությունը: Մինչ այդ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը Թեհրանում եռակողմ հանդիպում էր ունեցել Թուրքիայի վարչապետի և Բրազիլիայի նախագահի հետ:

Ադրբեջանա-իրանական հարաբերությունների ընթացքը խոսում է Բաքվի նկատմամբ Վաշինգտոնի նվազող ազդեցության մասին:

Իրանը շարունակում է պահպանել լավ հարաբերություններն իր անմիջական հարևաններ Աֆղանստանի ու Իրաքի հետ և ազդել վերջիններիս ներքաղաքական զարգացումների վրա:

Ինչ վերաբերում է Իրան-Ռուսաստան հարաբերություններին, Վաշինգտոնը կարծես ի վերջո կարողացավ հասնել Թեհրանի հանդեպ ավելի չեզոք դիրքորոշման Մոսկվայի կողմից, Հարավային Կովկասում Ռուսաստանի ավելի ընդգրկուն դերակատարության դիմաց: Մոսկվան միացավ Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ ու սահմանափակումներ սահմանող բանաձևին, որն ընդունվեց 2010-ի ամռանը, ինչպես նաև հրաժարվեց Թեհրանին մի քանի միավոր U-300 համակարգեր վաճառելու ավելի վաղ ձեռք

բերված պայմանավորվածությունից, սակայն մյուս կողմից՝ ավարտին հասցրեց Իրանի հարավ-արևմուտքում Բուշերի ատոմակայանի կառուցումը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

Հայաստանն ու Իրանը առողջ քաղաքական հարաբերություններ ունեն: Իրանը, բացառությամբ միջազգային տարբեր կառույցներում Լեռնային Ղարաբաղին վերաբերող բանաձևերում հոգուտ Ադրբեջանի քվեարկելու ավանդույթի, շարունակում է իր հավասարակշիռ, չեզոք քաղաքականությունը՝ խտրականություն չդնելով Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերություններում: Իր հերթին Հայաստանը, հակառակ արևմտյան քաղաքական ու տնտեսական ծնշումների, զերծ է մնում քայլերից, որոնք Իրանը կարող էր ընկալել ընդդեմ իր կենսական շահերի: Երևանի և Թեհրանի միջև այս փոխադարձ քայլերը առողջ հիմքերի վրա են դնում հայ-իրանական քաղաքական օրակարգը՝ չնայած տարածաշրջանում անորոշությանը, ապահովելով երկկողմ տնտեսական հարաբերությունները պահպանելու և զարգացնելու հեռանկարը:

Վերջին տարիներին Իրանը և Հայաստանը միասին երկու էներգետիկական նախագծեր իրականացվեցին՝ Իրան-Հայաստան գազատարը, որի շինարարությունն ավարտվեց 2007-ին, և 220 կիլովատ հզորությամբ երկու բարձրավոլտ էլեկտրական հաղորդալարերի կառուցումը: Հոկտեմբերին, երկու երկրների էներգետիկայի նախարարների մասնակցությամբ, Երևանից մոտ 50 կիլոմետր հյուսիս գտնվող Հրազդան քաղաքի մոտ տեղի ունեցավ երրորդ՝ 400 կիլովատ հզորությամբ էլեկտրահաղորդման գծի հիմնարկեքի արարողությունը, որի

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

երկարությունը Հայաստանի տարածքում 275 կիլոմետր է և ձգվելու է Հրազդանի 5-րդ էներգաբլոկից մինչև հայ-իրանական սահման, որտեղ միանալու է Իրանի էներգահամակարգին:

Էներգետիկայի նախարարների հանդիպման ընթացքում ստորագրվեց մեկ այլ նախագծի սկիզբն ազդարարող փաստաթուղթ՝ Արաքս գետի վրա երկու հիդրոէլեկտրակայանների կառուցման վերաբերյալ: Իրանական կողմը իր միջոցներով պիտի կառուցի 323 միլիոն դոլար արժողությամբ ՀԷԿ-երը, դրանք շահագործի 15 տարի և տարեկան արտադրված 793 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիան տեղափոխի Իրան, որից հետո ՀԷԿ-երը պետք է անհատույց փոխանցվեն հայկական կողմին: Սպասվում է, որ շինարարությունը կսկսվի 2011-ին և կտևի հինգ տարի:

Մի շարք այլ ծրագրեր, մնալով օրակարգի վրա, ձգձգվում են: Դրանցից կարևորագույնը Հայաստան-Իրան երկաթուղին է, 313 կիլոմետր երկարությամբ, որի արժեքը կարող է հասնել մինչև 4 միլիարդ դոլարի: Նման ենթակառուցվածքի շինարարության դժվարությունն այն է, որ ո՛չ Իրան-Հայաստան, ո՛չ Իրան-Հայաստան-Վրաստան բեռնափոխադրումները բավարար չեն, որպեսզի ապահովեն երկաթուղու տնտեսական նպատակահարմարությունը: Այդ է հավանաբար պատճառը, որ դեռևս ոչ մի միջազգային ֆինանսական կազմակերպություն հետաքրքրություն չի արտահայտել երկաթուղու շինարարության ֆինանսավորման հարցում: Երկաթուղին տնտեսական արժեք կունենար, եթե վերանար Հայաստանի շրջափակումը Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից: Այդ դեպքում էլ սակայն կկորչեր նրա հրատապությունը, քանի որ կսկսեր գործել Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին:

Ակնհայտորեն, հետաքրքրություն չկա նաև Մեղրիում՝ հայ-իրանական սահմանի մոտ նախատեսված նավթագտարանի կառուցման հարցում: Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարարը հոկտեմբերին հայտարարեց, որ կողմերը որոշել են սառեցնել ծրագիրը՝ տնտեսապես շահավետ չլինելու պատճառով: Հստակ չեն ծրագրերը նաև Իրանից Հայաստան վերամշակված նավթամթերք տեղափոխող խողովակաշարի և նավթային պահեստարանի կառուցման հարցում, թեև Հայաստանի վարչապետի Թեհրան այցի ընթացքում հայտարարվեց, որ առաջիկայում սկսվելու է շինարարությունը:

Հայ-իրանական քաղաքական հարաբերություններում երբեմն նաև գրանցվում են միջադեպեր, որոնց նկատմամբ զգայուն է հատկապես Իրանը:

Կողմերը չկարողացան պահել այն աշխուժությունը, որ կար հայ-իրանական հարաբերություններում տնտեսական, էներգետիկայի և հեռահաղորդակցությունների ոլորտներում: Պատճառների շարքում էին Հայաստանում և Իրանում գրանցված հետընտրական, ողբերգական ցնցումները, միջազգային ֆինանսական կազմակերպությունների շահագրգռված չլինելը հյուսիս-հարավ էներգետիկական և տրանսպորտային առանցքը ուժեղացնելու մեջ և անշուշտ Իրանի նկատմամբ կիրառվող տնտեսական սահմանափակումներն ու

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

պատժամիջոցները: Տարիներ շարունակ օրակարգի վրա գտնվող հայ-իրանական շատ նախագծեր մնում են բարի ցանկությունների մակարդակում:

Երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը չի գերազանցում տարեկան 200 միլիոն դոլարը, ինչը մոտավորապես այնքան է, որքան Թուրքիայից Վրաստանի տարածքով Հայաստան մտնող ապրանքների ընդհանուր գումարը: Վերջին տարիներին կտրուկ ավելացել են իրանցի զբոսաշրջիկների այցելությունները Հայաստան, հատկապես իրանական ամանորի՝ Նոռուզի շաբաթը: 2010-ին Հայաստան է այցելել շուրջ 80 հազար իրանցի:

Վերջին տարիներին Իրանը և Հայաստանը միասին երկու էներգետիկական նախագծեր ավարտեցին՝ Իրան-Հայաստան գազատարը, որի շինարարությունն ավարտվեց 2007-ին, և 220 կիլովատ հզորությամբ երկու բարձրավոլտ էլեկտրական հաղորդալարերի կառուցումը:

Հայ-իրանական քաղաքական հարաբերություններում երբեմն նաև գրանցվում են միջադեպեր, որոնց նկատմամբ զգայուն է հատկապես Իրանը: Նոբելյան դափնեկիր, իրավապաշտպան Շիրին Էբադիի ապրիլյան

այցը Երևան, որը կայացավ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովի շրջանակներում, որոշակի լարվածություն մտցրեց հայ-իրանական հարաբերություններում: Հայաստանի իշխանությունները, հակառակ Իրանի ակնկալությունների, թեև չխոչընդոտեցին Էբադիի այցը, սակայն իրենք ևս դժգոհ մնացին, երբ իրավապաշտպանը հայտարարությամբ իր աջակցությունը հայտնեց Հայաստանի ընդդիմության պահանջներին:

Որպես հետևանք, հայ-իրանական մի քանի բարձր մակարդակի պաշտոնական այցեր որոշ ժամանակով հետաձգվեցին: Տարվա ընթացքում Հայաստանի պաշտպանության նախարարն ու արտգործնախարարը, ապա վարչապետը այցելեցին Թեհրան: Հայաստան այցելեցին Իրանի արտգործնախարարը, էներգետիկայի նախարարը և խորհրդարանի նախագահը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

Արտաքին քաղաքական տարբեր, երբեմն իրար հակասող առաջնահերթությունները Հայաստան-Վրաստան երկկողմ հարաբերությունների խորացման ամենալուրջ խոչընդոտն են: Այդ հակասությունները միշտ չէ, որ օրակարգի հարց են դառնում Երևան-Թբիլիսի բարձր մակարդակի բանակցություններում, սակայն հաճախ հենց այդ առաջնահերթությունների տարբերությունն է, որ ուրվագծում է հայ-վրացական հարաբերությունների որակը, խորությունն ու ծավալը: Կողմերը պատշաճ ուշադրություն չեն դարձնում հարաբերությունները ռազմավարական մակարդակի հասցնելուն կամ գոնե երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր լուծելուն, ինչպես օրինակ՝ մաքսային

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

բարելավված ռեժիմի հաստատումն է կամ ավելի բաց սահմաններ ունենալը:

Հակասությունները, որոնք խոչընդոտում են ռազմավարական դաշինքը, մի քանիսն են. Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու ձգտումները, Հայաստանի՝ Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքն այն դեպքում, երբ վերջինիս հետ Վրաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ, ինչպես նաև Վրաստանի՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ տնտեսական ու քաղաքական կապերը, երբ Հայաստանը այս երկուսի հետ չունի հարաբերություններ: Բացի այդ, Հայաստանն ու Վրաստանը հակադիր դիրքորոշում ունեն ինքնորոշման իրավունքի հարցում: Վրաստանն ունի երկու անջատողական շրջաններ ու հետևաբար ինքնորոշման սկզբունքի ջատագովը չէ: Հայաստանը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը: Վերջապես, Վրաստանի քաղաքականությունը իր հայ փոքրամասնության նկատմամբ Հայաստանի տեսակետից մտահոգիչ է: Նույնիսկ այս ամենը հաշվի առնելով, Հայաստանը Վրաստանից անհամաչափ կերպով կախում ունի ու հետևաբար ստիպված է հաշվի նստել այս հակասությունների հետ և ձգտել խաղաղ ու կայուն փոխհարաբերություններ պահպանել նրա հետ:

Ռուսաստանի հետ 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանի համար արտաքին քաղաքական կողմնորոշման այլընտրանք չի մնացել: Ռուսաստանից սպառնալիքը կամ դրա ընկալումը Վրաստանին մղում է դեպի Արևմուտք: Եթե մինչև 2005թ. Ռուսաստանը Վրաստանի թիվ մեկ առևտրային գործընկերն էր, ապա վերջին հինգ տարիներին այդ տեղը զբաղեցնում է Թուրքիան, որին հետևում է Ադրբեջանը:

Տնտեսական, առաջին հերթին էներգետիկական կապերն են դրդում Վրաստանին հաշվի առնել ադրբեջանական շահը միջազգային համաժողովներում քվեարկությունների ժամանակ: Իր հերթին, Երևանը դեմ է քվեարկում Վրաստանի առաջադրած բանաձևերին, որոնք ուղղված են ընդդեմ Աբխազիայի և Հարավային Օսիայի: Սեպտեմբերին ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում մի բանաձև ընդունվեց, որը պաշտպանում է հայրենի տներ՝ Աբխազիա և Հարավային Օսիա վերադառնալու վրացի փախստականների և ներքին տեղահանվածների իրավունքը: Հայաստանը, Ռուսաստանի և 15 այլ երկրների հետ դեմ քվեարկեց այդ բանաձևին: Վրաստանի արտգործնախարարությունը ափսոսանք հայտնեց, միաժամանակ հավելելով, որ դա չպետք է ճեղքվածք առաջացնի Թբիլիսի-Երևան հարաբերություններում:

Արտաքին քաղաքական տարբեր, երբեմն իրար հակասող առաջնահերթությունները Հայաստան-Վրաստան երկկողմ հարաբերությունների խորացման ամենալուրջ խոչընդոտն են:

Սահմանագծման ու սահմանազատման շարունակվող գործընթացը հայ-վրացական հարաբերությունների խոչընդոտներից է: Արդեն 15 տարի է, որ այդ աշխատանքները ընթացքի մեջ են, սակայն գործընթացի ավարտը չի երևում: Դա վկայում է ոչ այնքան

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

հարաբերությունների լարվածության, որքան այդ հարաբերությունների ոչ հրատապ լինելու մասին:

Երկկողմանի հարաբերությունների օրակարգում լարվածություն առաջացնող ամենամեծ հարցը Վրաստանում հայ փոքրամասնության նկատմամբ վերաբերմունքն է: Ըստ վերջին մարդահամարի տվյալների՝ Թբիլիսիում ապրող հայերի թիվը հասնում է 90 հազարի, բայց հայկական դպրոցների թիվը գնալով կրճատվում է: Հայերը հայտարարում են, որ սա ազգային ինքնությունը թուլացնելու չքողարկված փորձ է: Վրացական իշխանությունները նշում են, որ հայերը նախընտրում են իրենց երեխաներին ուղարկել ռուսական, իսկ վերջին տարիներին՝ նաև վրացական դպրոցներ, և այդ պատճառով են փակվում հայկական դպրոցները: Վրացական կառավարությունն ասում է, որ իր նպատակն է հայերի ինտեգրումը, մինչդեռ վիրահայ փոքրամասնությունը մեղադրում է իշխանություններին՝ բռնի ձուլման ակնհայտ փորձերի մեջ:

Վրաստանն ունի երկու անջատողական շրջաններ ու հետևաբար ինքնորոշման սկզբունքի ջատագովը չէ: Հայաստանը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը:

Հայ-վրացական հարաբերություններին սրություն հաղորդող մյուս գործոնը Վրաստանում հայկական եկեղեցու

կարգավիճակի խնդիրն է: Ի հակադրություն Հայաստանի, որտեղ օրինական կարգով գրանցում ունեն և գործում են ավելի քան 60 կրոնական կազմակերպություններ, Վրաստանում միակ կրոնական կազմակերպությունը, որը իրավական առումով օրինական է և իրավունք ունի գրանցվել, վրաց ուղղափառ եկեղեցին է: Հայ առաքելական եկեղեցին, որը հարյուրամյակների պատմություն ունի այսօրվա Վրաստանի տարածքում, որպես կրոնական կառույց, գրանցված չէ և կարող է գրանցվել միայն որպես հասարակական կազմակերպություն: Նույն վիճակում են նաև քրիստոնեական մյուս եկեղեցիները, ինչպես նաև հրեական և մուսուլմանական համայնքները:

Կրոնական փոքրամասնություններն իրերի այս վիճակն անընդունելի են համարում մի շարք պատճառներով. հասարակական կազմակերպությունները սահմանափակ իրավունքներ ունեն, նրանց կարգավիճակը վրացական քաղաքացիական և դատական իշխանությունների հանդեպ տարբեր է, հսկայական տարբերություն կա հարկային և բարեգործական ծրագրերի կանոնակարգման հարցերում, և ի վերջո նրանք պարզապես ձգտում են արժանանալ նույնական վերաբերմունքի առանց խտրականության:

Երկու դեպքում էլ հակասությունների աղբյուրը պատմության ու ինքնության տարբեր ընկալումներն են: Վրաստանի ղեկավարությունը հետևողականորեն շրջանառության մեջ է դնում ունիտար Վրաստանի տեսլականը՝ վրացական ազգայնությունը: Մինչդեռ վիրահայերը, ովքեր Թբիլիսիում և Ջավախքում բնակվում են հարյուրամյակներ, համարում են, որ դա իրենց հայրենիքն է: Դա է լարվածության պատճառը: Բացի այդ, Վրաստանի

ՏԱՐԱԾԱՆՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

կառավարության՝ արևմտյան արժեքների ու կողմնորոշման ձգտումների մասին հրապարակային հայտարարությունները հայ փոքրամասնությանը ոգևորում է արևմտյան արժեքներին համապատասխան վերաբերմունք ակնկալել:

Բարձրաստիճան պաշտոնյաների հաճախակի փոխալյցերն օգնում են, որպեսզի իրավիճակը բարելավվի: Վրաստանը գիտակցում է, որ իր բյուջեի մուտքերի մի ստվար հատված գոյանում է ոչ միայն դեպի Հայաստան տանող տարանցիկ երկաթուղուց ստացվող հարկերից, այլ նաև հայ զբոսաշրջիկներից, որոնց քանակը 2010-ին գրեթե հասավ 100 հազարի: Քանի դեռ Հայաստանը շարունակում է շրջափակման մեջ մնալ Վրաստանի ռազմավարական գործընկերներ ու անմիջական հարևաններ Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից, Վրաստանն ինքնըստինքյան ավելի կարևոր է դառնում Հայաստանի համար, քան հակառակն է: Սակայն Հայաստանի կարևորությունն էլ գիտակցվում է Թբիլիսիում, մասնավորապես Ռուսաստան-Վրաստան դիմակայության հանդեպ Հայաստանի որդեգրած դրական չեզոքության լույսի ներքո:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ

Հայաստան-Թուրքիա ապրանքաշրջանառությունը հասավ մոտ 200 միլիոն դոլարի, և չի ակնկալվում, որ փակ սահմանի պայմաններում այն էականորեն կավելանա: 2010-ը հաստատեց, որ տեսանելի ապագայում Թուրքիան փակ է պահելու սահմանը: Թուրքիա-Հայաստան նորմալացման գործընթացը, որը հրապարակայնություն էր ստացել 2008-ին, երբ Հայաստանի նախագահն իր թուրք

գործընկերոջը հրավիրեց Երևան՝ միասին դիտելու ֆուտբոլային հանդիպումը, անցնող տարի փլուզվեց: Սա ի վերջո հիասթափեցրեց լավատեսներին, շփոթեցրեց միջնորդներին և արդարացրեց քննադատներին:

**Հայաստան-Թուրքիա
գործընթացում
արագությունն ու
լավատեսությունը, որով
առաջ էին շարժվում երկու
կողմերը, հիմնված էին
երկու հիմնական սխալ
հաշվարկների վրա:**

Հայաստան-Թուրքիա գործընթացում արագությունն ու լավատեսությունը, որով առաջ էին շարժվում երկու կողմերը, հիմնված էին երկու հիմնական սխալ հաշվարկների վրա: Հայկական կողմը հավատում էր, թե Թուրքիան, որ 1993-ին թուրք-հայկական սահմանը փակել էր ի համերաշխություն Ադրբեջանի, կարող է այն բացել առանց դարաբաղյան հարցում առաջընթացի, ինչը կբավարարեր Բաքվի ակնկալիքները: Թուրքական կողմն էլ իր ենթադրությունների վրա էր հենվում: Նրանք հավանաբար մտածել էին, թե կարող են Ադրբեջանին համոզել, որպեսզի վերջինիս դիրքորոշումն ավելի ձկուն լինի, և Բաքուն տեսնի տարածաշրջանի անվտանգության համար բաց սահմանների շահեկան լինելը: Ավելին, ըստ թուրքական իշխանությունների հաշվարկի, դարաբաղյան գործընթացն արագ ու դրական հունով բավականին առաջացած կլիներ այն պահին, երբ Թուրքիան ու Հայաստանը համաձայնության կհասնեին արձանագրությունների հարցում: Նրանք ակնկալում էին, որ դարաբաղյան հարցում

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Ադրբեջանի համար շոշափելի առաջընթաց գրանցված կլինի, ինչը հնարավորություն կտա Անկարային բացել սահմանը:

Հաշվարկները սխալ դուրս եկան: Արձանագրությունները սառեցվեցին, և երկու կողմերը սկսեցին մեղադրել միմյանց: Փոխադարձաբար արվող այդ բացահայտ ու հրապարակային մեղադրանքները և առարկությունները էականորեն տարբեր են, զարմանալիորեն ոչ դիվանագիտական ու անորոշ:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով մտահոգություններն ու հրապարակային դիմադրությունը, փորձեց նվազեցնել առկա մտահոգությունները:

Գործընթացը դադարեց 2010-ի ապրիլի 22-ին, ոչ պատահականորեն ճիշտ մեկ տարի անց, երբ հայտարարվեց «Ճանապարհային քարտեզի» մասին: Ապրիլյան այդ օրերի կարևորությունը շատերի համար ակնհայտ էր և հետագայում հաստատվեց Վիկիլիքսի բացահայտումով: Թուրքիան եռանդուն կերպով շահարկում էր երկու արձանագրությունները, մասնավորապես դրանց վավերացման հեռանկարը, որպեսզի ճնշումներ գործադրի ամերիկյան առաջնորդների վրա ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության և Ադրբեջանի համար նպաստավոր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցերում:

Այլ խոսքերով, 2009-ին Երևանն ու Անկարան հարաբերությունների նորմալացման ծրագրի մասին հայտարարեցին ընդամենը երկու օր առաջ այն ամսաթվից, երբ ամեն տարի ոգեկոչվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Դա Միացյալ Նահանգների նախագահին հնարավորություն տվեց խուսափել իր նախընտրական խոստումից և ապրիլքսանչորսյան ուղերձում չօգտագործել «ցեղասպանություն» բառը:

«Ճանապարհային քարտեզի» մասին հայտարարությունից գրեթե անմիջապես հետո Թուրքիայի վարչապետը հրապարակավ Թուրքիա-Հայաստան գործընթացը պայմանավորեց ղարաբաղյան հարցում առաջընթացով: Մինչև 2009-ի հոկտեմբերի 10-ը, երբ Միացյալ Նահանգները, Եվրոպական Միությունը, Ռուսաստանը և Ֆրանսիան ներկայացնող բարձրաստիճան դիվանագետների ներկայությամբ ստորագրվեցին արձանագրությունները, երկու գործընթացների՝ հայ-թուրքականի և ղարաբաղյան կարգավորման փոխկապակցվածությունը, «բաց գաղտնիք» էր, մի բան, որ հետևողականորեն հիշեցնում էին թուրքերը և նույնքան հետևողական կերպով հերքում էին հայերը: Փաստորեն, խնդիրն այնքան վիճելի էր, կողմերի դիրքորոշումներն այնքան տրամագծորեն տարբեր էին, որ Ցյուրիխի ստորագրման արարողությունը ձախողման եզրին էր, քանի որ համաձայնություն չկար ստորագրումից հետո հրապարակային հայտարարությունների վերաբերյալ:

Ստորագրումից հետո Հայաստանի կառավարությունը արձանագրություններն ուղարկեց Սահմանադրական դատարան: Քննադատության արժանացավ ժամանակի ընտրության պահը. չափազանց ուշ էր

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ստորագրման վրա ազդելու համար և չափազանց վաղ որևէ օրենսդրական ուղղում մտցնելու իմաստով, սակայն դատարանը, այդուհանդերձ, վճիռ կայացրեց: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով մտահոգություններն ու հրապարակային դիմադրությունը, փորձեց նվազեցնել առկա մտահոգությունները: 2010 թ. սկզբին Սահմանադրական դատարանը որոշեց, որ արձանագրությունների դրույթները չեն կարող որևէ ձևով վերաբերել ո՛չ Հայոց ցեղասպանության հավաստիությանը և ո՛չ էլ դարաբաղյան հակամարտությանն ու նրա լուծմանը:

Այնուհետև, Հայաստանի նախագահը արձանագրություններն ուղարկեց Ազգային ժողով և միջազգային հանրությանը հավաստիացրեց, որ խորհրդարանը պատրաստ է վավերացնել այդ փաստաթղթերը: Թուրքիայի արտգործնախարարը հայտարարեց, որ իր երկրի խորհրդարանում արձանագրությունները կարող են երեք օրում վավերացվել, սակայն դա չի արվում դարաբաղյան հարցի չկարգավորվածության պատճառով:

Թուրքիան, որ վերջին կես տարվա ընթացքում ամենաբարձր մակարդակով պնդում էր, թե արձանագրությունները, ըստ էության, ներառում են վերոնշյալ երկու հարցերը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի որոշումը՝ Հայաստանին մեղադրեց սաբոտաժի մեջ: Հայկական կողմը գիտակցեց, որ թուրքերը չեն կարող կամ չեն բացելու սահմանը, և հետևաբար ապրիլին սառեցրեց գործընթացը:

Հրամանագիրը հաջորդեց ԱՄՆ նախագահ Օբամայի և Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ Վաշինգտոնում, ապա Ռուսաստանի նախագահ Մեդվեդևի հետ Մոսկվայում

նախագահ Սարգսյանի հանդիպումներին: Հայաստանի իշխանությունները վերջապես ստիպված եղան ընդունել, որ այլևս հնարավոր չէ ցանկալին իրականության տեղ ներկայացնել:

Թուրքիան, որ վերջին կես տարվա ընթացքում ամենաբարձր մակարդակով պնդում էր, թե արձանագրությունները, ըստ էության, ներառում են վերոնշյալ երկու հարցերը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի որոշումը՝ Հայաստանին մեղադրեց սաբոտաժի մեջ:

Հայ-թուրքական արձանագրությունների գործընթացի կնքահայրերը՝ ԱՄՆ-ը, Շվեյցարիան ու եվրոպական մի քանի երկրներ, գոհունակություն արտահայտեցին, որ Հայաստանը վերջ չդրեց գործընթացին, այլ միայն սառեցրեց այն: Թուրքական կողմը շտապեց հայտարարել, որ կասեցման քայլը Հայաստանի միակողմանի որոշումն էր: Այսպիսով, Թուրքիան փորձեց միջազգայնորեն հասարակական կարծիք ձևավորել, որ ինքը պատրաստ է շարունակել հայ-թուրքական երկխոսությունը, մինչդեռ Հայաստանն է, որ դուրս է գալիս գործընթացից:

Ավելին, թուրքական կողմը տարբեր մակարդակներում հայտարարեց,

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Թե Հայաստանի և Թուրքիայի միջև շարունակվում է «լուռ դիվանագիտությունը», փորձելով միջազգայնորեն հասարակական կարծիք ստեղծել, թե գործընթացը մեռած չէ, և դրանով կասեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Այդ նպատակին է ծառայում նաև Անկարայի հատուկ ուղեցույցը աշխարհի տարբեր պետություններում հավատարմագրված թուրքական դեսպանություններին: 2010 թվականի վերջին ամիսներին Հայաստանը ժամանակ առ ժամանակ ստիպված էր հայտարարել, որ չկա ոչ «լուռ դիվանագիտություն», ոչ «Ցյուրիխ 2», և ոչ էլ որևէ նոր գործընթաց:

Որոշները հույս ունենին, թե Թուրքիան այնքան համարձակություն կունենա, որ մի կողմ կդնի Ադրբեջանի իրական կամ ընկալվող սպառնալիքները, վստահ լինելով, որ բաց սահմաններով տարածաշրջանը վերջիվերջո շահեկան է Ադրբեջանի համար:

Ավելորդ է ասել, որ լավատեսները հիասթափվեցին: Որոշները հույս ունենին, թե Թուրքիան այնքան համարձակություն կունենա, որ մի կողմ կդնի Ադրբեջանի իրական կամ ընկալվող սպառնալիքները, վստահ լինելով, որ բաց սահմաններով տարածաշրջանը վերջիվերջո շահեկան է Ադրբեջանի համար: Բացի այդ, լավատեսները հուսով էին, որ

արձանագրություններում չներառելով «ցեղասպանություն» և «Ղարաբաղ» բառերը և միայն աղոտ կերպով հղում անելով դրանց, ինչ-որ կերպ հնարավոր կլինի շրջանցել նման տարակարծություններով լի և բարդ հարցերը:

Տարբերակներից ոչ մեկը չաշխատեց: Ամենուրեք տիրում էր հիասթափություն: Թուրքիան հաստատեց հայերի վատթարագույն երկյուղները, երբ թուրքերն ի վերջո մի կողմ թողեցին ձևակերպումների միտումնավոր անորոշությունը և բաց տեքստով հայտարարեցին նախապայմանների մասին:

Միջնորդները շփոթմունքի մեջ էին: Նրանք հասել էին Ցյուրիխ, ներկա գտնվել ստորագրման արարողությանը, նախագահների մակարդակով հանդիպումներին, սակայն չէին հասկացել նրբությունները կամ ցանկանում էին դրանք անտեսել: Մինչդեռ հենց այդ նրբություններն էին, որ խաթարեցին ողջ գործընթացը:

Բայց քննադատները զարմացած չէին: Նրանք, ովքեր ի սկզբանե ահազանգում էին, որ գործընթացը անիրագործելի է, իսկ փաստաթղթերը իրավիճակին անհամարժեք՝ ձիշտ դուրս եկան: Այն մտավախությունները, որ անփույթ գործընթացը կարող է հանգեցնել ձախողման, արդարացվեցին: Ավելին, կանխատեսումները, որ դրա հետևանքով երկկողմ հարաբերությունները ավելի թշնամական կդառնան, նույնպես իրականություն դարձան:

Նրանք, ովքեր պնդում էին, որ ավելի լավ է փորձելը, քան ոչինչ չանելը, կամ որ «փորձը փորձանք չի», հիմա կանգնած են իրավիճակի կտրուկ փոփոխության առաջ՝ 2008-ի անհիմն ոգևորությունը 2010-ին փոխարինվեց անիմաստ թշնամանքով:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Կողմերն իրենց հասարակություններին ու միջազգային հանրությանը բացատրելու շատ բան ունեն, բայց ուղերձները դեռ շատ անորոշ են: Որպես հետևանք, ներկա բանավեճը սահմանափակվում է միմյանց մեղադրելով ու փոխադարձ անվստահությամբ:

Եվ վերջապես, միայն սառեցնելով արձանագրությունները և դրանցից չիրաժարվելով, հայկական կողմն ըստ էության ստեղծել է մի իրավիճակ, երբ Թուրքիայի վրա ամենափոքր իսկ ճնշումը չկա սահմանի բացման համար: Փոխարենը, Թուրքիան ակտիվ միջնորդի դեր է ստանձնել դարաբաղյան հարցում, շարունակելով մնալ Ադրբեջանի շահերի պաշտպանը:

Միևնույն ժամանակ Թուրքիան քաղաքական և դրամական միջոցներ է ներդնում Հայոց ցեղասպանության ժխտման գործում և պաշտոնապես ձեռնոց է նետում նրանց, ովքեր այն ճանաչում են: Գարնանը ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին կապերի հանձնաժողովը, ապա Շվեդիայի խորհրդարանը ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր: Անկարան սպառնալի հայտարարություններ արեց: ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Զինթոնն անձամբ դիմեց Կոնգրեսին, որպեսզի չքվեարկվի թիվ 252 բանաձևը: Շվեդիայի վարչապետը զանգահարեց իր թուրք գործընկերոջը և ներողություն խնդրեց:

Մյուս կողմից, 2010 թվականին Թուրքիայի ներսում տեղի ունեցան մի շարք աննախադեպ իրադարձություններ հայ-թուրքական հարաբերությունների երկու տասնամյակների պատմության համար: Թուրքիայում առաջին անգամ նշվեց Ապրիլ 24-ը՝ Ստամբուլի կենտրոնական

հրապարակներից մեկում հավաքվեցին մի քանի տասնյակ թուրքեր և հայեր:

Նրանք, ովքեր ի սկզբանե ահազանգում էին, որ գործընթացը անիրագործելի է, իսկ փաստաթղթերը իրավիճակին անհամարժեք՝ ճիշտ դուրս եկան:

Ամիսներ անց, սեպտեմբերին, թուրքական կառավարությունը ի վերջո զիջեց և թույլատրեց Վան քաղաքի մերձակայքում՝ Ախթամար կղզում 10-րդ դարում կառուցված պատմական Սուրբ Խաչ եկեղեցու վերածումը: Որպես թանգարան վերանորոգված եկեղեցին այժմ կարող է տարեկան մեկ անգամ ծառայել կրոնական արարողություններ անցկացնելու նպատակով: Պատարագը մատուցվեց, բայց վերջին պահին, հիմնականում այն պատճառով, որ տեղական ընտրությունների նախաշեմին իշխող կուսակցությունը չէր ուզում զայրացնել պահպանողական ընտրողներին, խաչ տեղադրելու խնդրանքը մերժվեց: Շատերի համար իրավիճակը պարզապես հաստատեց, որ դա թուրքական կառավարության համար քարոզչական արշավ էր, ոչ թե իրական հանդուրժողականության արտահայտություն: Շատերն էլ փորձեցին չնսեմացնել Թուրքիայում պատմական Հայաստանի ներկայությունը ճանաչելու այդ օգտակար ու դրական քայլը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Եթե 2010 թվականի ղարաբաղյան բանակցային գործընթացը նկարագրելու լինենք մեկ նախադասությամբ, ապա կարելի է ասել, որ այն մտել է **անորոշության, անկանխատեսելիության և վտանգավոր** մի փուլ:

Անորոշության պատճառը պայմանավորված է մի իրավիճակով, երբ վերջին հինգ տարիների ընթացքում առաջին անգամ գոյություն չունի մի փաստաթուղթ, որը հակամարտության բոլոր կողմերն ընդունեն որպես բանակցային տեքստ:

Եթե 2010 թվականի ղարաբաղյան բանակցային գործընթացը նկարագրելու լինենք մեկ նախադասությամբ, ապա կարելի է ասել, որ այն մտել է անորոշության, անկանխատեսելիության և վտանգավոր մի փուլ:

Մադրիդյան փաստաթուղթը ծնվել է Պրագայի գործընթացի մի քանի տարիների ընթացքում և 2008 թվականին հանձնվել ԵԱՀԿ քարտուղարություն: Այդ փաստաթուղթը եռանախագահող պետությունների ավագ դիվանագետները 2007 թ. նոյեմբերին ներկայացրել էին Մադրիդի ԵԱՀԿ նախարարական հանդիպմանը: Հակամարտության կողմերը Մադրիդյան փաստաթուղթը ճանաչել էին որպես հենք

հետագա բանակցությունների համար, չնայած կողմերից յուրաքանչյուրն ուներ իր մտահոգություններն ու վերապահումները:

Մադրիդյան առաջարկները շարունակեցին մնալ բանակցվող փաստաթուղթ 2008-ի ապրիլից հետո, երբ Հայաստանի նոր վարչակազմը ստանձնեց երկրի կառավարումը: Այն բանակցությունների սեղանին մնաց ողջ 2009 թվականի ընթացքում, երբ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո հանդիպեցին վեց անգամ:

Նախագահների 2010 թվականի առաջին հանդիպումը տեղի ունեցավ Ռուսաստանի Սոչի քաղաքում հունվարին և, ինչպես տարվա ընթացքում տեղի ունեցած մյուս երկու հանդիպումները, անցավ Ռուսաստանի նախագահի միջնորդությամբ:

Այդ հանդիպման նախօրեին Մինսկի խմբի համանախագահները ներկայացրին Մադրիդյան փաստաթղթի վերամշակված մի տարբերակ: Այն անվանվեց Նորացված Մադրիդյան և միակողմանիորեն այնչափ էր նորացվել, որ արդեն ընդունելի էր Ադրբեջանի համար: Հրապարակային հայտարարություններից շատ արագ պարզ դարձավ, որ Հայաստանը չի կարող ընդունել Նորացված Մադրիդյան փաստաթուղթը, պնդելով, որ դա լոկ աշխատանքային տարբերակ է, և միակ օրինական բանակցային փաստաթուղթը շարունակում է մնալ այն, որը Մադրիդում ներկայացվել էր 2007-ի նոյեմբերին:

Հունիսին, նախագահների երկրորդ հանդիպման ընթացքում, կրկին Մեդվեդևի միջնորդությամբ, այս անգամ՝ Սանկտ-Պետերբուրգում, փաստաթուղթը ենթադրաբար այն այստիճան էր փոխվել, որ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Ադրբեջանի նախագահը հրապարակային կերպով հիասթափված լքեց Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքը: Ադրբեջանը հայտարարեց, որ փաստաթղթի նոր տարբերակը օրինական չէ, քանի որ այն միայն ռուսական կողմն է ներկայացրել, առանց մյուս համանախագահների ներկայության ու հավանության: Ժամեր անց գրանցվեց 1994-ի մայիսին ստորագրված անժամկետ հրադադարից հետո ամենամեծ սադրանքներից մեկը: Շփման գծի հյուսիս-արևելքում ադրբեջանական դիվերսիոն խմբին հաջողվեց անցնել արցախյան բանակի թիկունք և չորս հայ զինծառայողների սպանել:

Նախքան նախագահների երրորդ հանդիպումը, որ կայացավ հոկտեմբերին Աստրախանում, կողմերը հրապարակավ միմյանց հասցեին մեղադրանքներ ու սպառնալիքներ էին հնչեցրել: Լարվածությունն արտահայտվել էր հրադադարի աննախադեպ խախտումների քանակով ու շփման գծի երկայնքով դիպուկահարների ակտիվությամբ:

Եթե ավելի վաղ փուլերում հրապարակային բանավեճերն ընթանում էին բանակցվող փաստաթղթի բովանդակության շուրջ, ապա այժմ բանավեճն այն է, թե որն է փաստաթուղթը, որի հենքով պետք է ընթանան բանակցությունները:

Աստրախանում նախագահներն այս հարցին պատասխան չտվեցին, սակայն ստորագրեցին մեկ այլ հռչակագիր, վերահաստատելով 2008-ի նոյեմբերի Մայենդորֆի հռչակագրի դրույթները, ինչպես նաև որոշելով իրականացնել ռազմագերիների փոխանակում և զոհվածների մարմինների վերադարձ՝ Մինսկի խմբի համանախագահների և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ: Գերիների փոխանակում միշտ եղել էր, բայց առաջին անգամ էր

փաստաթուղթ ստորագրվում այդ մասին: Չարկ է նշել, որ այս փաստաթղթում Ղարաբաղի անունը որևէ կերպ չէր հիշատակվում:

Մադրիդյան փաստաթուղթը ծնվել է Պրագայի գործընթացի մի քանի տարիների ընթացքում: Մադրիդյան առաջարկները շարունակեցին մնալ բանակցվող փաստաթուղթ 2008-ի ապրիլից հետո, երբ Հայաստանի նոր վարչակազմը ստանձնեց երկրի կառավարումը:

Այսպիսով, նման անորոշության ընթացքում քաղաքական **անկանխատեսելիությունը** նույնպես աճեց: Տարվա վերջում Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովից սպասումները մեծ էին: Գագաթաժողովից մեկ-երկու ամիս առաջ ակնկալիքներ կային, որ Մինսկի խմբի համանախագահող պետությունների նախագահները կհանդիպեն Չայաստանի ու Ադրբեջանի նախագահների հետ: Ոչ միայն նման հանդիպում չկայացավ, այլ անգամ տեղի չունեցան Չայաստանի ու Ադրբեջանի առաջնորդների միջև սովորական դարձած բանակցությունները: Փաստը, որ երկու նախագահները միևնույն քաղաքում էին, մասնակցում էին նույն համաժողովին և որևէ պատճառ ու ցանկություն չունեցան առիթն օգտագործել ու հանդիպել և թեկուզ չնչին առաջընթաց արձանագրել, գործընթացի անկանխատեսելիության ցուցիչն է: Դրա

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ապացույցն է տարվա ընթացքում երկու երկրների իշխանությունների կամ նրանց խոսնակների կողմից հրապարակային հայտարարություններում հարգանքի կամ դիվանագիտական մոտեցման խստաբացակայությունը:

Եթե ավելի վաղ փուլերում հրապարակային բանավեճերն ընթանում էին բանակցվող փաստաթղթի բովանդակության շուրջ, ապա այժմ բանավեճն այն է, թե որն է փաստաթուղթը, որի հենքով պետք է ընթանան բանակցությունները:

Հակամարտության պատմության անորոշ ու անկանխատեսելի փուլն այսպիսով դառնում է **վտանգավոր**: Շփման գծի երկայնքով գրանցվող պատահարների քանակն ու հաճախականությունը լուրջ տագնապ են առաջացնում: Պաշտոնապես հաղորդվում է, որ հրադադարի ռեժիմը օրական խախտվում է ավելի քան երեսուն անգամ: Բացի այդ, Ադրբեջանը զգալիորեն ավելացրել է իր ռազմական ծախսերը: 2011 թվականի համար Ադրբեջանի ռազմական ծախսերը ավելի քան երեք միլիարդ դոլար կամ պետական բյուջեի մոտ 20 տոկոսը, գերազանցում են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բյուջեների գումարին: Այս միտումներն առաջիկա տարիներին ավելի են խորանալու, քանի որ Ադրբեջանի նավթային եկամուտների աճը շարունակվելու է դեռ 4-5 տարի, որոնց

շնորհիվ են հիմնականում ձևավորվում Ադրբեջանի բյուջեն և ընկալումները:

Թուրքիայի միջազգայնորեն շարունակվող ներգրավվածությունը ևս սնում է Ադրբեջանի ընկալումները: Թուրքիան բացատրում է իր ներգրավվածությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ, քանի որ հրապարակավ հայտարարել է, որ միայն Ղարաբաղի հարցի լուծումը հնարավոր կդարձնի սահմանի բացումը:

Ճնշումները բոլոր կողմերից են, այդ թվում՝ ՄԱԿ-ից, որի օրակարգի մեջ այս տարի Ադրբեջանը հերթական անգամ մտցրեց «Իրավիճակը գրավյալ տարածքներում» բանաձևը: Ավելի ուշ, նրանք հետ վերցրին բանաձևը, պայմանով, որ կրկին փաստահավաք խումբ մեկնի Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներ, որպես շարունակություն հինգ տարի առաջ նմանօրինակ առաջին այցելության:

Չնայած նման ճնշումներին ու շարունակվող ակնկալիքներին, որևէ հստակ բան չկատարվեց տարվա կարևորագույն համաժողովում՝ Աստանայի ԵԱՀԿ գագաթաժողովում: Բարձր մակարդակի ԵԱՀԿ տարեկան հանդիպումը սովորաբար իր քաղաքական հռչակագրում ներառում է մեկ պարբերություն, որը համաձայնեցված է լինում կողմերի ու համանախագահների միջև ու արտահայտում է տարվա ընթացքում գրանցված առաջընթացը: Այս տարի նման պարբերություն չկար: Փոխարենը եղավ համանախագահող երեք երկրների պատվիրակությունների ղեկավարների ու Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների համատեղ հայտարարությունը:

Մինսկի գործընթացին աջակցող մեկ այլ նախագահական հայտարարություն արվեց հունիսին Կանադայում, Մեծ Քսանյակի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

գազաթաժողովում: Այս հայտարարությունը, փաստացի, կրկնում էր մեկ տարի առաջ Իտալիայի Ակվիլա քաղաքում նախագահներ Մեդվեդևի, Օբամայի ու Սարկոզիի համատեղ հայտարարությունը: Բոլոր երեք հայտարարություններում Ֆրանսիան, Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը վերահաստատում էին կարգավորման հիմնարար հետևյալ սկզբունքները.

- Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ,
- Լեռնային Ղարաբաղին տրամադրել միջանկյալ կարգավիճակ, անվտանգության երաշխիքներ և ինքնակառավարում,
- Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշում նրա բնակչության իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով,
- տեղահանվածների և փախստականների վերադարձ:

Մինչ քննարկումները շարունակվում էին, Հաագայի Միջազգային քրեական դատարանը հրապարակեց Կոսովոյի իրավական կարգավիճակի մասին դատավճիռ, ինչն առաջ բերեց հակասական արձագանքներ: Ադրբեջանը կրկնեց միջազգային հանրության տեսակետն առ այն, որ Կոսովոյի դեպքը առանձնահատուկ է և չի վերաբերում Ղարաբաղին: Մյուս կողմից հայերը հայտարարեցին, որ Կոսովոյի անկախացման գործընթացը ցույց տվեց, որ միջազգային հարաբերություններում ինքնորոշումը գերակա նորմ է:

Լեռնային Ղարաբաղում 2010 թվականին անցկացվեցին թվով հինգերորդ

խորհրդարանական ընտրությունները՝ վերահաստատելով նրա փաստացի ինքնիշխանությունը: Խորհրդարանի 33 պատգամավորները ներկայացնում են երեք կուսակցություններ: Ադրբեջանում ևս կայացան խորհրդարանական ընտրություններ, որի ընթացքում երկրի նախագահի կուսակցությունը ապահովեց տեղերի մեծամասնությունը:

Չնայած Հայաստանի ու Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների փոխադարձ այցերը գրեթե բացակայում են, 2010-ին տեղի ունեցավ մի աննախադեպ այց: Ապրիլին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն 12 ժամով այցելեց Բաքու՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի և Կովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Ջադեի հրավերով՝ մասնակցելու հոգևոր առաջնորդների համաշխարհային երկրորդ գազաթաժողովին: Չնայած նախկինում Հայոց կաթողիկոսն ու Կովկասի մահմեդականների առաջնորդը Մոսկվայում և այլ մայրաքաղաքներում մի քանի անգամ հանդիպել էին, սա առաջին անգամն էր, երբ երկու հոգևոր առաջնորդներից մեկը հյուրընկալում էր մյուսին: Կաթողիկոսն ու մուֆթին մեկ անգամ ևս հաստատեցին, որ հակամարտությունը կրոնական բնույթ չունի, դարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի միայն խաղաղ ճանապարհով, մերժեցին ուժի կիրառումը և խրախուսեցին կողմերի միջև երկխոսության շարունակումը: Բաքու կարճ այցի ընթացքում կաթողիկոսը երկար հանդիպում ունեցավ նաև նախագահ Ալիևի հետ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի հարաբերությունները ուժային երեք կենտրոնների՝ Ռուսաստանի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ այս տարի տարբեր մակարդակների էին: Ռուսաստանն

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ավելի վճռորոշ դեր ունենալու երկուսի համեմատությամբ: 2010-ին բարձր մակարդակի հանդիպումներ տեղի ունեցան ԱՄՆ-ի և Եվրոպական Միության ու Հայաստանի և տարածաշրջանի այլ ղեկավարների հետ, ինչպես նաև Եվրոպական Միության հետ նոր մակարդակի ինտեգրման խոստում ուրվագծվեց:

Ադրբեջանը զգալիորեն ավելացրել է իր ռազմական ծախսերը: 2011 թվականի համար Ադրբեջանի ռազմական ծախսերը՝ ավելի քան երեք միլիարդ դոլար կամ պետական բյուջեի մոտ 20 տոկոսը, գերազանցում են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բյուջեների գումարին:

Ռուսաստանի կողմից ավելի մեծ ակտիվությունը և ներգրավվածությունը արտահայտվեցին բազմաթիվ բարձր մակարդակի հանդիպումներով և լրացուցիչ օժանդակությամբ ու Հայաստանի ավելի մեծ կախվածությամբ Ռուսաստանից: Նույնը չի կարելի ասել Հայաստանի հարաբերությունների մասին մյուս երկու ուժային կենտրոնների հետ:

Առերևույթ, Հայ-ամերիկյան հարաբերությունների առանցքում ոչ թե երկկողմ խնդիրներն էին, այլ Միացյալ Նահանգների կողմից հայ-թուրքական հարաբերությունների հանդեպ ցուցաբերվող

հետաքրքրությունը: Երկկողմ դաշտում հարաբերությունները նախորդ մոտ երկու տասնամյակների նման շարունակեցին նրբորեն տատանվել ԱՄՆ կողմից զարգացման աջակցության և ժողովրդավարական կառավարման բարելավման ակնկալիքների միջև: Հայ-եվրոպական հարաբերությունները, որ անհամեմատ ավելի անհստակ էին, երկու կողմերին էլ չէին բավարարում, քանի որ ոչ մեկն էլ համոզված չէր, թե մյուսն ինչ է ակնկալում:

2010-ին տարածաշրջանի ամենադրական զարգացումը կարելի է համարել Ռուսաստանի և Վրաստանի միջև, մասամբ Հայաստանի միջնորդությամբ իրականացվող, ձգձգված բանակցությունների հանգուցալուծումը: Մարտի 1-ին կողմերը համաձայնեցին վերաբացել Լարսի անցակետը, որը չորս տարվա ընդմիջումից հետո նորից սկսեց ցամաքային բեռնաշրջանառություն ապահովել **Հայաստանի և Ռուսաստանի** միջև:

Հայաստան-Ռուսաստան առևտրային հարաբերություններում դրական միտումներ նկատվեցին: Երկկողմանի առևտրի շրջանառությունը 2010-ի առաջին ինն ամիսներին կազմեց 700 միլիոն դոլար, որը վատ չէր 2008-ի մեկ միլիարդ դոլարի համեմատությամբ, երբ դեռ համաշխարհային տնտեսությունը չէր սկսել դանդաղել:

Տարվա ընթացքում հայ-ռուսական բարձր մակարդակի երկխոսությունը բավական ակտիվ էր. Հայաստանի նախագահը Ռուսաստան այցելեց ութ անգամ և օգոստոսին Երևանում հյուրընկալեց Ռուսաստանի նախագահին, ով իր երկկողմ այցը համատեղեց 2010-ին Հայաստանում անցկացվող ՀԱՊԿ գագաթաժողովի հետ:

Վերջինիս այցելության ժամանակ էր, որ համաձայնագիր ստորագրվեց հայ-

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ռուսական ռազմական պայմանագիրը երկարաձգելու վերաբերյալ: Ի պատասխան Ռուսաստանի առաջարկի՝ Հայաստանը համաձայնեց երկարացնել ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում մինչև 2044 թվականը:

Այս քայլով Ռուսաստանն ավելի էր ամրապնդում իր ռազմական դիրքերը նախկին ԽՍՀՄ-ի հարավում: Դրանից մի քանի ամիս առաջ Ռուսաստանը նման համաձայնագրով երկարաձգել էր իր նավատորմի ներկայությունը Ուկրաինայում և պաշտոնականացրել էր իր ռազմական ներկայությունը Աբխազիայում և Հարավային Օսիայում:

Մինչ ենթադրվում է, որ Հայաստանում ընդհանուր առմամբ հասարակական ու քաղաքական համաձայնություն կա ռուսական ռազմական ներկայության շուրջ, որը կազմված է գրեթե երեք հազար զինվորականներից և, որ առավել կարևոր է, ռազմական ինքնաթիռներից և ժամանակակից երկիր-օդ հրետանային զորախմբերից, այնուհանդերձ, 1995 թվականի պայմանագրի ժամկետի երկարաձգման շուրջ քննադատություն հնչեց:

Քննադատությունները երկու հիմնական հարցերի էին վերաբերում: Եթե Ուկրաինայի, Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում Ռուսաստանը ֆինանսական օժանդակություն էր առաջարկում բնական գազի գների նվազեցման կամ տնտեսական աջակցության տեսքով, ոչ մի նման ակնհայտ փոխհատուցում չկար Հայաստանի հետ գործարքում, որը կարծես միայն պայմանավորված էր Ռուսաստանի նախագահի այցելության ժամանակացույցով և քիչ ժամանակ էր թողել քննարկումների համար Հայաստանում:

Պայմանագրի փոփոխված տեքստը ակնարկում էր, որ այսուհետ ռուսական ռազմական ուժերը նաև հայկական շահերն են պաշտպանելու (և ոչ միայն Ռուսաստանի), որը նորից ակնկալիքներ առաջ բերեց Հայաստանին Ռուսաստանի կողմից ժամանակակից ռազմական տեխնիկա տրամադրելու վերաբերյալ: Բայց անհայտ էր, թե երբ և ինչ է փոխանցվելու, ինչպես նաև ինչպիսին կլինի ռուսական ուժերի կեցվածքը, եթե Հայաստանը ենթարկվի հարձակման:

Առերևույթ, հայ-ամերիկյան հարաբերությունների առանցքում ոչ թե երկկողմ խնդիրներն էին, այլ Միացյալ Նահանգների կողմից հայ-թուրքական հարաբերությունների հանդեպ ցուցաբերվող հետաքրքրությունը:

Գործարքը քննադատողները մատնանշում էին Հայաստանի համար ամենահավանական սպառնալիք հանդիսացող երկրի՝ Ադրբեջանի հետ ռազմական համագործակցությունը մեծացնելու Ռուսաստանի ծրագրերը: Նշվում էր, որ Ռուսաստանը ծրագրում է Ադրբեջանին վաճառել երկիր-օդ հրետանային համակարգեր, որ ավելի կատարելագործված են, քան Հայաստանում տեղադրվածները, որ Ադրբեջանում արդեն եղած ռազմական ինքնաթիռների քանակությունը կարող է Հայաստանի նկատմամբ զգալի ռազմական առավելություն ապահովել օդում:

Հակաօդային պաշտպանության միջին հեռահարության զենիթափոթիռային

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

այս համակարգը ունի հիմնականում պաշտպանական նշանակություն, օգտագործվում է ինքնաթիռներ և հրթիռներ ոչնչացնելու նպատակով, թեև կարող է նաև հարվածել ցամաքային թիրախների:

Մինչ ենթադրվում է, որ Հայաստանում ընդհանուր առմամբ հասարակական ու քաղաքական համաձայնություն կա ռուսական ռազմական ներկայության շուրջ, այնդուհանդերձ, 1995 թվականի պայմանագրի ժամկետի երկարաձգման շուրջ քննադատություն հնչեց:

Ռուսաստանը որոշ ժամանակ առաջ հաստատել էր, որ վերջին տարիներին տանկեր ու զրահամեքենաներ էր վաճառել Ադրբեջանին: Ըստ լուրերի Մոսկվան նաև օժանդակել էր, որ Բելառուսից ու Ուկրաինայից գնված ռազմական համակարգերը տեղափոխվեն Ադրբեջան: Նման քայլերը կարծես չէին համապատասխանում Ռուսաստանի դաշնակցային հանձնառություններին Հայաստանի նկատմամբ և տարածաշրջանային անվտանգություն ապահովելու հայտարարություններին:

Ռուսաստանի նախագահը շարունակում էր իր առաջատար դերը Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումները նախաձեռնելու գործում: Այս տարվա

ընթացքում նման երեք հանդիպում տեղի ունեցավ, թեպետև դրանք մնացին Մինսկի խմբի շրջանակներում:

Նախագահի պաշտոնը զբաղեցնելուց ի վեր առաջին անգամ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ նաև Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ՝ Մոսկվայում:

Սեպտեմբերին ղարաբաղյան շփման գծում զինադադարի խախտման դեպքերը բավականաչափ լուրջ մտահոգությունների տեղիք էին տալիս, և խնդիրը քննարկման առարկա էր ԱՄՆ-ի և Ռուսաստանի պաշտպանության նախարարների հանդիպման ընթացքում: Բացառված չէ, որ հենց դրա արդյունքում հաջորդ շաբաթ տեղի ունեցավ Բարաք Օբամայի առաջին հանդիպումը Ադրբեջանի նախագահի հետ Նյու Յորքում, ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի օրերին, որի ընթացքում ԱՄՆ նախագահը կոչ արեց Ալիևին հարգել զինադադարը:

Հաշվի առնելով, որ **Հայաստանը և Ամերիկայի Միացյալ Նահանգները** ունեին ընդհանուր արտաքին քաղաքականության նպատակներ, և Հայաստանը պատրաստակամ մտել էր Ամերիկայի կողմից հովանավորվող Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի մեջ, հայ-ամերիկյան հարաբերությունները պետք է շատ լավ ու ակտիվ լինեին: Մինչդեռ դրանց մեջ չկային իրական վստահություն կամ որոշակիություն:

Ապրիլին Հայաստանի նախագահ Սարգսյանն առաջին անգամ հանդիպեց ԱՄՆ նախագահ Օբամայի հետ: Հայաստանի ղեկավարը հրավիրված էր Վաշինգտոն միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին մասնակցելու նպատակով: Այս գագաթաժողովը առիթ դարձավ վերջին ինը տարիների ընթացքում Հայաստանի

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

նախագահի առաջին այցելության համար ԱՄՆ մայրաքաղաք:

Սերժ Սարգսյանի այցելությունը Վաշինգտոն նման էր պարզևավճարի ի ճանաչումն նրա նախաձեռնության մտնել հետագայում ԱՄՆ-ի կողմից միջնորդավորված հայ-թուրքական քաղաքականապես վիճահարույց գործարքի մեջ և միևնույն ժամանակ սփոփանք էր, երբ այդ գործընթացը չունեցավ Հայաստանին խոստացված արդյունքը:

Այցելությունից հետո Սարգսյանը անսաց ԱՄՆ խնդրանքին վերջնականապես չմերժել Թուրքիայի հետ 2009-ին ստորագրած արձանագրությունները և հայտարարեց, որ նորմալացման գործընթացն ընդամենը «սառեցված» է:

Միևնույն ժամանակ Օբաման նորից չկատարեց իր նախընտրական խոստումը իր ամենամյա հայտարարության մեջ Հայոց ցեղասպանության առիթով: Առավել՝ ԱՄՆ նախագահի վարչակազմը հակադրվեց Կոնգրեսի կողմից ցեղասպանության վերաբերյալ բանաձևին, չնայած այն ընդունվել էր Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից:

Հոկտեմբերին տարածվեց ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի մի տեսագրությունը, որտեղ նա ասում էր, որ Սարգսյանը պատրաստ էր զոհել ցեղասպանության ճանաչումը հանուն Թուրքիայի հետ հարաբերությունների, և իրականում նրան է պետք մեղադրել Օբամայի դիրքորոշման համար, ոչ Օբամային: Դրան անմիջապես հետևեց հերքում թե՛ Հայաստանի նախագահի գրասենյակից, թե՛ Հայաստանում ԱՄՆ դեսպանատնից:

ԱՄՆ նման դիրքորոշման լույսի ներքո, Թուրքիայի կողմից եղած փոքրիկ

շահագրգռվածությունը՝ շարունակել Հայաստանի հետ մերձեցման գործընթացը, լիովին մարեց, և ապրիլից ի վեր երկկողմ հանդիպումներ չեն եղել:

Հուլիսին պետքարտուղար Քլինթոնն այցելեց Հայաստան ի թիվս հինգ երկրների: Այդ 24-ժամյա այցելությունը խորհրդանշական էր՝ Քլինթոնն այցելեց ցեղասպանության հուշահամալիր, որը հայտարարվեց որպես «անձնական այցելություն»: Դա նաև ԱՄՆ պետքարտուղարի առաջին այցելությունն էր Հայաստան 1992-ից ի վեր:

Սերժ Սարգսյանի այցելությունը Վաշինգտոն նման էր պարզևավճարի ի ճանաչումն նրա նախաձեռնության մտնել հետագայում ԱՄՆ-ի կողմից միջնորդավորված հայ-թուրքական քաղաքականապես վիճահարույց գործարքի մեջ և միևնույն ժամանակ սփոփանք էր, երբ այդ գործընթացը չունեցավ Հայաստանին խոստացված արդյունքը:

Նախագահ Սարգսյանի հետ հանդիպումից հետո Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ հանդիպման ընթացքում Քլինթոնը հայտարարեց, որ նախագահ Սարգսյանի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

հետ զրույցի ժամանակ իր մտահոգությունն է հայտնել Հայաստանում մամուլի ազատության հետ կապված հարցերի առնչությամբ, ինչպես նաև ողջունեց ազատ և արդար ընտրությունների անցկացման, առողջապահության մատչելիության, տեղեկատվության բարելավման և պատմության վերքերը ամոքելու ուղղությամբ քաղաքացիական հասարակության կատարած աշխատանքը:

Երբ հանրապետականները հաղթեցին Ներկայացուցիչների պալատում, հայերը մի քանի կարևոր դաշնակիցներ կորցրին Կոնգրեսում, որոնք Դեմոկրատական կուսակցության ղեկավարությունից էին: **Ղեկավարությունից էին:**

Ամերիկայի հայկական համայնքը կարծես համակերպվեց, որ ԱՄՆ հերթական վարչակազմը չկատարեց իր նախընտրական խոստումը ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ, մանավանդ որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն ամենացածր մակարդակին էին վերջին մի քանի տասնամյակի ընթացքում: Հայ ակտիվիստները կարողացան ապահովել, որ Կոնգրեսը որոշում ընդունի մեծացնել ԱՄՆ օգնությունը Ղարաբաղին՝ հասցնելով տարեկան 10 միլիոն դոլարի: 1998-ից ի վեր ԱՄՆ ծրագրերը Ղարաբաղում կազմել էին 35 միլիոն դոլար, այն դեպքում, երբ

Կոնգրեսի կողմից նախատեսված լրացուցիչ 25 միլիոն դոլարը մնացել էր չծախսված: Սա կարող է բացատրվել Ղարաբաղին օգնություն հատկացնելու միջոցով Կոնգրեսի անդամների՝ իրենց հայ ընտրազանգվածին գոհացնելու, միևնույն ժամանակ Ադրբեջանին չզայրացնելու նպատակով գործնականում գումարը չծախսելու քաղաքականությամբ:

Երբ հանրապետականները հաղթեցին Ներկայացուցիչների պալատում, հայերը մի քանի կարևոր դաշնակիցներ կորցրին Կոնգրեսում, որոնք Դեմոկրատական կուսակցության ղեկավարությունից էին: Բայց փոքր հույս կա, որ նոր մեծամասնությունը, որ սովորաբար խիստ ակտիվ է արտաքին քաղաքականության հարցերում և պատրաստ է հաշվի չնստել Սպիտակ տան մտահոգությունների հետ, կարող է ավելի վճռական դառնալ Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի նկատմամբ, որպես սպառնալու ձև Իրանի և Իսրայելի նկատմամբ նրա քաղաքականության:

Ցեղասպանության ճանաչման մի այլ «ձևակառուցում» ամերիկահայերը մի բարդ ու երկարատև դատական պայքար են սկսել հուլիսին Լոս Անջելեսում, թուրքական առևտրական շահերի դեմ Ամերիկայում, որպես օսմանյան հայերից բռնազանձված հարստության ժառանգներ: Նոյեմբերին դաշնային դատարանի որոշմամբ անվավեր ճանաչվեց 2009 թվականի մի որոշում, ըստ որի ցեղասպանության տարիների ապահովագրական պահանջները Կալիֆոռնիայի դատարաններում ոչ սահմանադրական են, այդպիսով ուղի հարթելով նոր պահանջների համար:

Վաշինգտոնում հայկական լոբբին արգելք դրեց Մեթյու Բրայդայի նշանակմանը որպես ԱՄՆ դեսպան Ադրբեջանում: Բրայդային քննադատում էին իր աշխատանքի համար

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

որպես ԱՄՆ ներկայացուցիչ ղարաբաղյան բանակցություններում և մեղադրում էին Ադրբեյջանի ղեկավարության հետ նրա սերտ կապերը:

Հայերի լոբբին շարունակում էր աշխատել նաև ԱՄՆ-Հայաստան ազատ առևտրի պայմանագրի իրականացման ուղղությամբ: 2010-ի հունվար-հուլիս ամիսներին երկկողմ առևտրի ընդհանուր ծավալը կազմում էր շուրջ 150 միլիոն դոլար, որը գրեթե 30 տոկոսով ավել էր 2009 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ: Աճը պայմանավորված էր դեպի Ամերիկա արտահանվող հայկական փայլաթիթեղի ծավալներով:

ԱՄՆ օժանդակության ծավալը Հայաստանին 2010 թվականին գրեթե նույն մակարդակի էր, ինչ 2009-ին: Երկարաժամկետ կտրվածքով, այնուամենայնիվ, նվազման միտումներ են նկատվում: Հազարամյակի մարտահրավեր ծրագրով նախատեսված 235 միլիոն դոլարը անցյալ տարի նվազեց 175 միլիոնի Հայաստանում ժողովրդավարական կառավարման իրավիճակի վատթարացման պատճառով: Արդյունքում այդ ճանապարհաշինական ծրագիրը չի հասնի ավարտի: Միայն ոռոգվող գյուղատնտեսական ծրագիրը կավարտվի, բայց այն էլ չի շարունակվի 2011-ից հետո:

Հազարամյակի մարտահրավերների ֆինանսավորման կրճատման արդյունքում Եվրոպական Միությունը անկախությունից ի վեր առաջին անգամ կարող է փոխարինել ԱՄՆ-ին որպես Հայաստանի հիմնական արտաքին օժանդակության աղբյուր: 2011-2013 թվականներին Եվրոպական Միությունը Հայաստանին տրամադրելու է 157,3 միլիոն եվրո տարբեր ծրագրեր իրականացնելու համար:

Բրյուսելը շարունակում է Հայաստանը ներառել եվրոպական գործընթացներում: Զարգացման օժանդակության ծրագրերի հետ մեկտեղ, այս տարվա հուլիսից սկսվեցին **Հայաստան-Եվրոպական Միություն** պաշտոնական բանակցությունները (մյուս երկու հարավկովկասյան պետությունների հետ միաժամանակ) ասոցիացման պայմանագրերի շուրջ: Հայաստանը շարունակում է ասել, որ իր ներգրավումը եվրո-ատլանտյան կազմակերպություններում առաջնահերթություն է, բայց նաև դեռ չի կողմնորոշվել, թե ինչ է ուզում Եվրոպական Միությունից և մասնավորապես Արևելյան գործընկերության ծրագրից:

Ասոցիացման մեխանիզմն առաջարկում է ավելի մեծ տնտեսական համագործակցություն, խորը և համապարփակ ազատ առևտրի պայմանագրերի ու մուտքի արտոնագրերի հետզհետե դյուրացման միջոցով, ինչպես նաև ավելի սերտ քաղաքական մերձեցում:

Ասոցիացման մեխանիզմն առաջարկում է ավելի մեծ տնտեսական համագործակցություն, խորը և համապարփակ ազատ առևտրի պայմանագրերի ու մուտքի արտոնագրերի հետզհետե դյուրացման միջոցով, ինչպես նաև ավելի սերտ քաղաքական մերձեցում: Հայաստանն ուզում է օգտվել առևտրային արտոնություններից, մինչդեռ

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Եվրոպան շարունակում է պնդել, որ ստանդարտիզացիան, արտոնագրման, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և պետական գնումների գործընթացները պետք է համապատասխանեցվեն եվրոպական չափանիշներին, և տնտեսական մենաշնորհները պետք է վերանան, որպեսզի առավելագույն օգուտ ապահովվի նոր հնարավորություններից: Հայտնի չէ, թե Հայաստանի իշխանությունները որքանով են պատրաստ այս պայմանների ապահովմանը:

2009 թվականի ապրիլից Հայաստանում գործում է ԵՄ խորհրդականների խումբը, որը տարբեր բնագավառներում Հայաստանի կառավարությանն օգնում է որոշում ընդունելու հարցում և եվրոպական մասնագետների ներգրավման մի բացառիկ օրինակ է:

Եվրախորհրդարանը մայիսին ընդունեց թիվ 2216 բանաձևը, որի կետերից մեկով պահանջում էր «հայկական ուժերը դուրս բերել գրավյալ ադրբեջանական տարածքներից՝ թույլ տալով տեղահանվածներին վերադառնալ իրենց օջախները»: Եվրախորհրդարանը պնդում է, որ «հայկական ուժերը պետք է արագորեն լքեն Լեռնային Ղարաբաղին հարող բոլոր գրավյալ ադրբեջանական տարածքները»:

Բանաձևի ընդունման հաջորդ իսկ օրը Ազգային ժողովի նախագահը և արտգործնախարարը իրենց դժգոհությունը հայտնեցին, նշելով, որ բանաձևում օգտագործված բառապաշարը հակասում է 1998-ից ի վեր Եվրոպական խորհրդարանի ընդունած նախկին բանաձևերին, ինչպես նաև ԵԱՀԿ ու ԵՄ դիրքորոշումներին:

Դեկտեմբերին կայացած ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովը իր հանդիպումն ավարտեց մի փաստաթղթի ընդունումով, որը կոչ

էր անում Հայաստանի ղեկավարությանը գործնական քայլեր կատարել բիզնեսը քաղաքականությունից տարանջատելու համար, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխանեցնել ոստիկանության կողմից ձերբակալության և հետաքննության պրակտիկան:

Առևտրային կապերը ԵՄ երկրների հետ շարունակեցին ամրապնդվել և ընդարձակվել 2010-ին: Գերմանիան, Նիդեռլանդները և Բելգիան Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներն էին: Այս տարի, համեմայն դեպս, Հայաստանի թիվ մեկ առևտրային գործընկերը դարձավ Բուլղարիան՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին 107 միլիոն դոլար առևտրային ծավալով:

Փետրվարին Հայաստանը խաղաղարար մի խումբ ուղարկեց Աֆղանստան, գերմանական զորամիավորումների կազմում: Հայաստանը շարունակում էր նաև մասնակցել ՆԱՏՕ-ի Կոսովոյի առաքելությանը:

2010 թվականին Հայաստանի նախագահը չորս եվրոպական մայրաքաղաքներ այցելեց՝ փետրվարին Լոնդոն, մարտին Փարիզ, մայիսին Բրյուսել, որտեղ նա հանդիպեց Եվրոպական խորհրդի նախագահի հետ, և հունիսին Բեռլին:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ հանդիպման ժամանակ Սարգսյանը կոչ արեց դաշինքին Ղարաբաղի վերաբերյալ դիրքորոշումը համահունչ դարձնել ԵԱՀԿ-ի հետ և տարածքային ամբողջականությանը հղում չանել առանց ինքնորոշման իրավունքին հղում անելու:

Բայց երբ նոյեմբերին պարզ դարձավ, որ ՆԱՏՕ-ի գազաթափողովի հայտարարությունը անփոփոխ է մնալու,

ՏԱՐԱԾԱՆՇՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Սարգսյանը որոշեց չգնալ Լիսաբոնի գազաթաժողով: Հայաստանի իշխանական կուսակցությունը սա նկարագրեց որպես «հասկանալի բոյկոտ»: Բայց հասկանալի չէր, թե ինչպես է բոյկոտը հայերին օգնելու միջազգային հանրությանը հայկական կողմի դիրքորոշումը բացատրելու հարցում:

ՀԵՌԱՆԿԱՐ

2011-ին անորոշությունը շարունակվելու է պահպանվել Արևելք-Արևմուտք հարաբերություններում: ԱՄՆ-Ռուսաստան նոր մեկնարկը որակական փոփոխություններ չի բերելու Կովկասում: Եվրոպայում նոր անվտանգության համակարգի կերտումը, որը ջատագովում է Ռուսաստանը, դիմադրության է հանդիպում Արևմուտքից: Շարունակվելու են տարակարծությունները Հարավային Օսիայի ու Աբխազիայի հարցերում: Ռուսաստանը շարունակելու է խորացնել իր ներգրավվածությունը Կովկասում:

Ռուսաստան-Վրաստան հարաբերություններում իրավիճակը մնալու է կայուն լարված: Վրաստանը, մի կողմից օրակարգային հարց պահելով ռուսական ուժերի դուրս բերումը Աբխազիայից և Հարավային Օսիայից, մյուս կողմից՝ շարունակելու է պատրաստակամություն հայտնել բանակցել Ռուսաստանի հետ: Մոսկվան, սակայն, հաստատական է մնալու Թբիլիսիի հետ չբանակցելու իր քաղաքականության հարցում, քանի դեռ նախագահի պաշտոնում Սաակաշվիլին է:

Ռուսաստան-Ադրբեջան երկկողմ համագործակցությունը շարունակելու է պահպանել նախորդ տարիների դրական ինտերգրիան հատկապես էներգետիկ ոլորտում: Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու համար Մոսկվան փորձելու է հավասարահեռ

հարաբերություններ ձևավորել մրցակիցներ Հայաստանի ու Ադրբեջանի միջև՝ հրապարակային հայտարարություններում շարունակելով նախնառաջ Հայաստանին որակել իր ռազմավարական գործընկերը տարածաշրջանում:

Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում ջերմացումը շարունակվելու է պահպանվել, հատկապես էներգետիկ հատվածում: Մոսկվա-Անկարա քաղաքական կապերը կամրապնդվեն նաև այն դեպքում, եթե Թուրքիան իրեն շարունակի որոշակի հեռու պահել ԱՄՆ-ից ու Եվրոպական Միությունից և կարողանա ամրապնդել անկաշկանդ խաղացողի տարածաշրջանային իր հավակնությունները:

Թուրքիան շարունակելու է ջատագովել «զրո հիմնախնդիրներ հարևանների հետ» քաղաքականությունը, սակայն դրա հավաստիությունը և արդյունավետությունը նվազելու է, քանի դեռ Անկարան շարունակում է կոշտ դիրք բռնել Կիպրոսի ու Հայաստանի հետ հարաբերություններում, ինչպես նաև քրդերի հարցում: Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ նոր շեշտադրումներ հնարավոր է ակնկալել միայն հունիսին նախատեսված խորհրդարանական ընտրություններից հետո, եթե իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը կարողանա պահել իր դիրքերը և ունակ լինի միայնակ ձևավորել կառավարություն:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններում նոր առաջընթացը քիչ հավանական է նաև Թուրքիայի ընտրությունների պատճառով: Թուրքիան շարունակելու է մի կողմից առաջընթացի հնարավորությունը կապել դարաբաղյան գործընթացում տեղաշարժի՝ ստատուս քվոյի փոփոխության հետ, մյուս կողմից փորձելու է միջազգայնորեն տպավորություն ստեղծել, որ հայ-թուրքական

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

գործընթացը չի մահացել, որպեսզի խոչընդոտի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդեն իսկ դանդաղած գործընթացը:

Ղարաբաղյան կարգավորման գործընթացը կմնա անորոշ: Կողմերը կշարունակեն վիճել ոչ թե փաստաթղթի մանրամասների, այլ թե որ փաստաթուղթն է սեղանի վրա:

Ադրբեջանը արտաքին քաղաքականության մեջ շարունակելու է տարփողել ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով «կարգավորելու» հռետորությունը:

ԼՈՒԹՈՒՄՆԵՐ

Հայաստանը պետք է շարունակի նախորդ տարիների իր դրական չեզոքության քաղաքականությունը և հավասարակշռված մոտեցումներ պահպանի Ռուսաստան-Վրաստան և Իրան-Արևմուտք հակասություններում:

Հայաստանը պետք է փորձի դուրս գալ արտաքին քաղաքականության և առաջին հերթին ղարաբաղյան ու հայ-թուրքական հարցերում ստեղծված անորոշությունից: Ղարաբաղյան կարգավորման գործընթացում անորոշությունը առաջին հերթին վերաբերում է բանակցվող փաստաթղթին: Սա լուրջ վտանգ է ներկայացնում հայերի համար, իսկ դրա շարունակումը կարող է բերել նրան, որ վտանգվի ինքնորոշման դրույթի առկայությունը բանակցություններում և ներկայացվելիք նոր փաստաթղթում:

Հայաստանը չպետք է Ադրբեջանի ռազմական սպառնալիքներին պատասխանի

Լեռնային Ղարաբաղը դե-յուրե ճանաչելու «սպառնալիքով»: Լեռնային Ղարաբաղի դե-յուրե ճանաչումը պետք է լինի ոչ թե հակաքայլ Հայաստանի կողմից, այլ բանակցությունների փիլիսոփայություն և վերջնարդյունք:

Բաքուն քարոզում է, թե պատրաստ է Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման հնարավորություն տալ, բայց Ադրբեջանի սահմաններում: Հայաստանը պետք է միջազգային հանրությանը հստակ բացատրի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման չափորոշիչները:

Չնայած Ադրբեջանի նախագահի՝ երկրի հասարակական կազմակերպություններին Հայաստան ու Լեռնային Ղարաբաղ չայցելելու հրահանգին, Հայաստանը պետք է քաջալերի հայերի ու ադրբեջանցիների միջև շփումները լրագրողների, հասարակական կազմակերպությունների, արվեստագետների և այլ մակարդակներում:

Հայաստան-Թուրքիա գործընթացում անորոշությունը հստակեցնելու ժամանակն է: «Սառեցված» այս իրավիճակում, երբ սահմանը շարունակում է մնալ փակ, Հայաստանը ոչինչ չի ստանում, մինչդեռ Թուրքիան հնարավորություն է ստանում միակողմանիորեն շահարկել և՛ ղարաբաղյան հակամարտության, և՛ ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Քանի որ ակնկալիքները նվազ են, որ Թուրքիան վերջ կտա Հայաստանի շրջափակումը և կամ կվերաբացվեն Ադրբեջան-Հայաստան կոմունիկացիաները, Հայաստանը պետք է հնարավորինս խորացնի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՊԱՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Երկկողմ կապերը իր անմիջական մյուս երկու հարևանների՝ Վրաստանի ու Իրանի հետ: Հաշվի առնելով վերջին շրջանում նկատվող Վրաստան-Իրան մերձեցումը, Հայաստանը պետք է փորձի դառնալ հյուսիսային ու հարավային հարևաններին ցամաքով կապող տարանցիկ օղակ:

Եվրոպական ինտեգրումն այն քիչ ուղղություններից է, որ ընդհանուր է Հայաստանի ու Վրաստանի համար: Քանի որ ԵՄ-ի հետ համագործակցությունը խորանում է, Հայաստանը և Վրաստանը պետք է այդ ուղղությամբ միասին աշխատեն: Ժողովրդավարության, տնտեսական ազատականության ցուցանիշներով և արժեքային համակարգերի իմաստով գրեթե նույն մակարդակի վրա գտնվող Վրաստանն ու Հայաստանը միասին ավելի գրավիչ են, նաև որպես շուկա, ԵՄ-ի համար:

Չինաստանի և Ռուսաստանի շունչն ավելի ու ավելի է զգացվում Հարավային Կովկասում: Աշխարհում տնտեսապես մեծությամբ երկրորդ պետության՝ Չինաստանի հետ, պետք է նոր որակի հասցնել երկկողմ համագործակցությունը:

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի քաղաքական տարին Հայաստանում ավարտվեց այնպես, ինչպես մեկնարկել էր՝ ամրապնդելով ստատուս քվոն ներքին կյանքում, և չառաջացնելով համակարգային լուրջ փոփոխությունների ակնկալիք հասարակության մեջ:

2008 թվականի նախագահական ընտրություններից հետո խորացած հանրային-քաղաքական ճգնաժամի պատճառների և հետևանքների առումով էական քայլ չկատարվեց դեպի հանգուցալուծում: Չեղան նաև այդ ճգնաժամի հետևանքները մեղմացնելու նպատակով երկրի ներքին կյանքում իրական ազատականացման փորձեր: Այսպիսով անցյալը մնաց մութ, ապագան՝ աղոտ, ներկան՝ հեղիեղուկ:

Վերնախավի և հասարակության լայն զանգվածների միջև անջրպետը ավելի խորացավ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական առումով:

Վերնախավի և հասարակության լայն զանգվածների միջև անջրպետը ավելի խորացավ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական առումով: Հասարակության մի զգալի հատվածն անմասն մնաց քաղաքական և հասարակական ինստիտուտների գործունեության մեջ դերակատարումից՝

ականատես լինելով, թե ինչպես է իշխող Հանրապետական կուսակցությունն էլ ավելի սեղմ օղակի մեջ առնում երկրի կյանքի ամենատարբեր ոլորտները:

Մյուս կողմից, որոշիչ գործընթացներում առավել ներգրավված քաղաքական և տնտեսական վերնախավը, գնալով ավելի թերահավատ դարձավ քաղաքական և տնտեսական կյանքում որոշակի կանխատեսելիություն ապահովելու, ուղղություններ ու հստակ քաղաքականություն մշակելու և կարգ ու կանոն հաստատելու իշխող կուսակցության կարողության հանդեպ:

Ներքաղաքական գործընթացների վրա մեծապես ազդեցություն ունեցան տարածաշրջանային զարգացումները և շարունակվող տնտեսական ճգնաժամը: Քաղաքական ուժերի վերադասավորումները բավական անհստակ քաղաքական դաշտ ձևավորեցին: Նախորդ տարի հայ-թուրքական գործընթացի կապակցությամբ իշխանության քաղաքականության հետ անհամաձայնության պատճառով իշխող կոալիցիայից դուրս էր եկել Հայ հեղափոխական դաշնակցությունը: 2010-ին սակայն ՀԶԴ-ն այդպես էլ որևէ այլ օրակարգ չներկայացրեց, և կուսակցության քաղաքական հավակնությունները նոր իրավիճակում մնացին անորոշ:

Կոալիցիայի մեկ այլ անդամ՝ Բարգավաճ Հայաստանը, 2010-ին ցուցաբերեց Հանրապետականի հետ մրցակցության հավակնության առնվազն արտաքին նշաններ: Ընդդիմադիր հիմնական ուժը՝ Հայ ազգային կոնգրեսը, դրսևորեց հետևողականության և հստակ ուղերձի պակաս թե՛ գործելաժողով, թե՛ քաղաքական հայտարարություններում, ինչի արդյունքում զգալիորեն թուլացրեց իր պոտենցիալը:

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով քաղաքական և տնտեսական բևեռացվածության գործակիցները մեծացան, քանի որ քաղաքական և տնտեսական գործընթացները շարունակեցին զարգանալ անորոշության ու քաղաքական անկանխատեսելիության պայմաններում:

Տարվա առաջին քաղաքական իրադարձությունը հունվարին թիվ 10 ընտրատարածքում տեղի ունեցած Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորի մեծամասնական ընտրությունն էր: Ընտրատարածքի պատգամավորը Հայաստանի առաջատար գործարարներից մեկը՝ Խաչատուր Սուքիասյանն էր, որ նաև քաղաքականություն մուտք գործած առաջին գործարարն էր:

2008-ի նախագահական ընտրություններին նա հրապարակայնորեն աջակցել էր Լևոն Տեր-Պետրոսյանին և հետընտրական իրադարձություններից հետո շատ ընդդիմադիր գործիչների նման որոշ ժամանակ քրեական հետապնդման մեջ էր: Փախուստից վերադառնալուց հետո Սուքիասյանը չէր ձերբակալվել: Սակայն նա վայր էր դրել պատգամավորական մանդատը և հետագայում զերծ էր մնում հրապարակային քաղաքական գործունեությունից: Ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրեց Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը, ով ի տարբերություն Սուքիասյանի մինչ օրս գտնվում է անազատության մեջ՝ դատապարտված լինելով զանգվածային անկարգությունների կազմակերպման մեղադրանքով:

Ընտրության պաշտոնական տվյալով հաղթող ճանաչվեց իշխանամետ «Ազգային միաբանություն» կուսակցության անդամը:

Հայ ազգային կոնգրեսը հայտարարեց, որ ընտրությունը անցել է բազմաթիվ անօրինականություններով: Ընտրության արդյունքի վերաբերյալ արձանագրությունը չստորագրեց նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ՀՀԴ ներկայացուցիչը:

Կենտրոն համայնքի 10 ընտրատարածքում ընտրությունները նաև նշանավորվեցին բավական ցածր մասնակցությամբ՝ մոտ 20 տոկոս: Արտահերթ ընտրությանը բնորոշ ցածր մասնակցությամբ հանդերձ, սա խոսում էր հասարակության աճող անտարբերության մասին:

Ընտրություններից ինն օր անց Նիկոլ Փաշինյանի գործով դատավարությունն ավարտվեց և յոթ տարվա ազատազրկման վճիռ արձակվեց: Հետագայում Նիկոլ Փաշինյանի պատժաչափը կիսվեց:

Քաղաքական ուժերի վերադասավորումները բավական անհստակ քաղաքական դաշտ ձևավորեցին:

Լինելով ազատազրկման մեջ՝ Փաշինյանն այնուամենայնիվ որոշակի դերակատարություն ունի ներքաղաքական կյանքում՝ Լևոն Տեր-Պետրոսյանին սատարող և իշխանություններին քննադատող ամենօրյա խմբագրականների միջոցով: Շատերի կարծիքով հենց այդ պատճառով տարվա վերջին Փաշինյանը տեղափոխվեց Երևանից զգալի հեռավորության վրա գտնվող Արթիկի կալանավայր, որպեսզի բարդանա ամենօրյա հրապարակումները թերթին հասցնելու խնդիրը:

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանում մինչ այդ այլ փոփոխություններ ևս տեղի ունեցան: Տարեսկզբին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության հիմնական կազմից դուրս մնաց ընդդիմադիր ժառանգություն խմբակցության անդամ և Եվրոպայում Հայաստանի ներքին խնդիրներն առավել հաճախ բարձրաձայնող Զարուհի Փոստանջյանը: Պաշտոնական պատճառաբանությունն այն էր, որ ՀՅԴ-ն դուրս է եկել իշխող կոալիցիայից և համարվում է ընդդիմություն, նրա փոխարեն կոալիցիայի մյուս կուսակցության՝ Օրինաց երկրի ներկայացուցիչն է տեղ գտնում հիմնական կազմում, իսկ ընդդիմության ներկայացուցիչ ինքնաբերաբար դառնում է ՀՅԴ ներկայացուցիչը, քանի որ ՀՅԴ-ն ժառանգությունից ավելի բազմամանդատ խորհրդարանական ուժ է:

համեմատ: Գարնանը Հայաստանի հարցով համազեկուցողները իշխանությանը նամակ գրեցին՝ առաջարկելով կազմել և ներկայացնել բարեփոխումների ժամանակացույց: Մինչ իշխանությունը կարճազանքեր դրան, արձագանքեց ընդդիմությունը՝ Հայ ազգային կոնգրեսը: Մարտի 1-ին հրավիրած հանրահավաքի ժամանակ ՀԱԿ-ը ներկայացրեց ընդդիմության առաջարկը թե՛ իշխանությանը, թե՛ Եվրակառույցներին: Ոչ իշխանությունը, ոչ Եվրոպան առաջարկությունների այդ փաթեթին չարձագանքեցին: Առանձնակի արձագանք չգտավ նաև ընդդիմության հրապարակած և հանրությանն ու Եվրոպական երկրների դեսպաններին ներկայացրած տնտեսական վերափոխման «100 քայլ» անվանված ծրագիրը: ՀԱԿ-ն ինքը չնախաձեռնեց այդ ծրագրերի շուրջ լուրջ հանրային քննարկումներ:

**Քաղաքական
և տնտեսական
բևեռացվածության
գործակիցները մեծացան,
քանի որ քաղաքական
և տնտեսական
գործընթացները
շարունակեցին
զարգանալ անորոշության
ու քաղաքական
անկանխատեսելիության
պայմաններում:**

Հայ ազգային կոնգրեսը այդուհանդերձ հետևողականորեն օգտվում էր Երևանում Եվրոպական քաղաքականության և կարծիք մշակողների ներկայությունից, ներքաղաքական խնդիրների վերաբերյալ մտահոգությունները բարձրաձայնելու առումով:

Հոկտեմբերին ՀԱԿ-ը բողոքի ցույց կազմակերպեց Եվրոպայի խորհրդի կողմից Երևանում անցկացվող «Հանուն ժողովրդավարության ապագայի» միջազգային համաժողովի օրերին: Դրանից առաջ՝ ապրիլին, Երևանում կայացած Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի խորհրդաժողովի ընթացքում կազմակերպված ընդդիմության հանրահավաքին մասնակցեցին նաև խորհրդաժողովի մասնակիցները՝ այդ թվում հայտնի իրավապաշտպաններ տարբեր երկրներից՝ միանալով ձերբակալված քաղաքական գործիչներին ազատ արձակելու կոչին:

Ամեն դեպքում, 2010 թվականին Եվրոպայի խորհրդի մասնակցությունը Հայաստանի ներքաղաքական խնդիրների քննարկմանը նվազագույնն էր նախորդ տարիների

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդաժողովը տեղի էր ունենում Օպերայի շենքում, իսկ հանրահավաքը՝ Մատենադարանի հարթակում, քանի որ Օպերայի հրապարակը շարունակում էր փակ մնալ հանրային հավաքների համար 2008-ի մարտի մեկից ի վեր: Այն տարբեր պատճառաբանություններով պարբերաբար «զբաղեցվում էր» տարատեսակ տոնավաճառներով և զվարճություններով, իսկ ՀԱԿ-ի՝ Օպերայի հրապարակում հանրահավաք անցնակցներու դիմումները մշտապես մերժվում էին:

Ընդհանուր առմամբ 2010-ը անորոշության ու ներքին մարտահրավերների տարի էր նաև ՀԱԿ-ի համար: Տարվա ընթացքում ՀԱԿ-ը շարունակեց ոչ պարբերական հանրահավաքների շարքը, պարբերաբար հայտարարելով դադարի և սպասվող զարգացումների մասին: Խորհրդարանական կամ այլ քաղաքական լծակների բացակայության, ինչպես նաև ներքաղաքական կյանքում ակտիվ դերակատարության առերևույթ նվազման պայմաններում ՀԱԿ-ի ներսում սկսեցին զարգանալ թերևս նման իրավիճակներում սպասելի երևույթներ:

Հայ ազգային կոնգրեսի առանցքային ուժ հանդիսացող և Հայաստանի անկախության պատմության մեջ էական դերակատարում ունեցած Հայոց համազգային շարժման ներսում տեղի ունեցան որոշակի խմորումներ: Հրաժարական ներկայացրեցին ՀՀ վարչության նախագահն ու փոխնախագահը: Մեղադրանքներ հնչեցին, որ վերջիններս գործարքի մեջ էին իշխանության հետ: ՀՀ համագումարում տեղի ունեցան վարչության նոր ընտրություններ: ՀՀ նոր վարչության ընտրությունը կեղծ որակեց ՀՀ անդամ, ԱԺ նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինյանը: Նա հայտարարեց, թե ՀՀ-ում գործում է Լևոն Տեր-Պետրոսյանի միանձնյա թելադրանքը, չկա բազմակարծություն:

ՀՀ-ում ազատականության պակասի մասին հայտարարեց նաև ՀՀ անդամ, նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը:

Թեև այս խոսակցությունները այլ որոշիչ զարգացում չունեցան, այդուհանդերձ դա բացասաբար ազդեց ընդդիմության հասարակական ընկալման վրա:

Հայ ազգային կոնգրեսը
այդուհանդերձ
հետևողականորեն օգտվում
էր Երևանում Եվրոպական
քաղաքականության և
կարծիք մշակողների
ներկայությունից,
ներքաղաքական
խնդիրների վերաբերյալ
մտահոգությունները
բարձրաձայնելու առումով:

Իշխող կոալիցիայի ներսում հարաբերությունները նույնպես անորոշության փուլ մտան՝ նախընտրական տարուն ընդառաջ: Բարգավաճ Հայաստան կուսակցությունը պահեց նախարարական իր պորտֆելները, բայց փոխեց իր նախարարներից երկուսին: ԲՀ-ն փոխեց նաև ԱԺ ԲՀ-ական փոխխոսնակին: Փոփոխությունները գրեթե որևէ մեկնաբանության չարժանացան ո՛չ կոալիցիոն գործընկերների, ո՛չ կառավարության կողմից: Դա հրապարակայնորեն համարվեց ԲՀ-ի ներքին գործը:

Թեև որոշակի վերադասավորումներ տեղի ունեցան նաև կոալիցիայի մյուս

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

անդամ Օրինաց երկիր կուսակցությունում, ԲՀԿ-ի վերադասավորումներն ու վերադիրքավորումներն էին, որ առավել մեծ ուշադրության կենտրոնում հայտնվեցին՝ առիթ տալով ենթադրություններ անելու կուսակցության ղեկավար, խոշոր գործարար, պատգամավոր Գագիկ Ծառուկյանի և իշխող ՀՀԿ-ի լարվող հարաբերությունների մասին:

Արձանագրությունների դեմ համախմբված ուժերը համախմբման այլ թեմա չգտան, այսպիսով փակելով նաև իշխանության արտաքին քաղաքական ձախողումը ներքաղաքական խնդրի վերածելու՝ շատերի կողմից կանխատեսվող հնարավորությունը:

ԲՀԿ-ն հրապարակայնորեն փորձեց ավելի ինքնուրույն խաղացողի կերպար ձևավորել: Դրան նպաստեցին Ծառուկյանի հաճախակի դարձած լայնորեն հրապարակայնացվող հանդիպումները օտարերկրյա հյուրերի, ինչպես նաև պոտենցիալ ընտրազանգվածի տարբեր խմբերի հետ: Հաճախակի դարձան նաև կուսակցության ղեկավարի և մյուս անդամների կողմից կառավարությանն ուղղված քննադատական ակնարկները: Գագիկ Ծառուկյանը մեղադրեց Էկոնոմիկայի ՀՀԿ-ական նախարարին ոչ կոմպետենտ լինելու մեջ: Թեև տարեվերջին իշխող ՀՀԿ-ն այնուամենայնիվ աշխատանքից ազատեց Էկոնոմիկայի նախարարին, ամռանը

Հանրապետական կուսակցությունը բավական խիստ արձագանքեց քննադատությանը:

Երբ գրեթե միաժամանակ կառավարության հասցեին քննադատությամբ հանդես եկավ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որ զերծ էր մնում քաղաքական լուրջ հայտարարություններից, մամուլում ենթադրություններ հնչեցին ԲՀԿ-ի միջոցով Քոչարյանի քաղաքականություն վերադառնալու մտադրությունների մասին: Այլ քաղաքական հայտարարություններ սակայն Քոչարյանը մինչև տարեվերջ չարեց:

Հայ հեղափոխական դաշնակցությունը միացավ այս տնտեսական քննադատություններին: Բայց նրանց ուշադրության կենտրոնում հայ-թուրքական արձանագրություններն էին: Հայ-թուրքական արձանագրությունների նպատակահարմարության մասին բուռն քննարկումների փուլում մեկ տասնյակից ավելի քաղաքական ու հասարակական կազմակերպություններ ՀՀԿ-ի հետ նախաձեռնեցին «ՈՉ» քաղաքացիական շարժումը: Երբ 2010-ի ապրիլին հայտարարվեց արձանագրությունների վավերացման գործընթացի սառեցման մասին, «ՈՉ» շարժումն ինքնըստինքյան մարեց:

Սահմանները մնացին փակ, հարաբերությունների բարելավման հեռանկարները դարձան էլ ավելի մշուշոտ իսկ արձանագրությունների դեմ համախմբված ուժերը համախմբման այլ նյութ չգտան, այսպիսով փակելով նաև իշխանության արտաքին քաղաքական ձախողումը ներքաղաքական խնդրի վերածելու՝ շատերի կողմից կանխատեսվող հնարավորությունը:

Հատկանշական է, որ իշխանության ներկայացուցիչները, այն նույն գործիչները, ովքեր անցյալ տարի ամեն կերպ սատարում

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

էին գործընթացին և հայտարարում հարաբերությունների կարգավորման և սահմանների բացման մոտալուտ հաջողության մասին, կարելի է ասել սեփական քարոզարշավ նախաձեռնեցին՝ բարձրաձայնելով հիմա էլ ծայրահեղ հակաթուրքական հայտարարություններ:

Արտաքին քաղաքականության և տնտեսության ոլորտում ձեռքբերումների բացակայության և որոշ ակնհայտ ձախողումների առկայության պայմաններում, իշխող ՀՀԿ-ն տարեվերջին ներքին դաշտում որոշ անսպասելի վերադասավորումներ նախաձեռնեց: Առաջին հիշարժան իրադարձությունը դեկտեմբերի սկզբին Երևանի ՀՀԿ-ական քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի և նախագահի աշխատակազմի ներկայացուցչի միջև Բեգլարյանի հրահրած ծեծկռտուքն էր: Նախագահի նստավայրը շատերի համար անսպասելի խիստ արձագանքեց նման պահվածքին, և Բեգլարյանը ստիպված էր հրաժարական ներկայացնել: Նոր քաղաքապետ ընտրվեց Հայռուսզազարդի տնօրեն Կարեն Կարապետյանը:

Վարչապետի հանձնարարականը չկատարելու պատճառաբանությամբ աշխատանքից ազատվեց նաև Արդարադատության նախարարը: Նրա փոխարեն նշանակվեց երիտասարդ իրավաբան Հրայր Թովմասյանը, որ տարիներ առաջ ընդդիմադիր ՀԺԿ առաջնորդի թիմակիցներից էր, այնուհետև միջազգային կազմակերպություններից մեկում փորձագետ էր և իրավաբանական շրջանակներում հայտնի մասնագետ է:

Վերադասավորումներ տեղի ունեցան կառավարության տնտեսական բլոկում: Պաշտոնից ազատված Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին, ով վերջերս էր դարձել ՀՀԿ անդամ, փոխարինեց

Ֆինանսների նախարարը, իսկ ֆինանսների նախարար նշանակվեց տնտեսության ոլորտում բարձրակարգ մասնագետի համարում ունեցող Կենտրոնական բանկի փոխնախագահ Վաչե Գաբրիելյանը: Բոլոր երեքն էլ համարվում են վարչապետ Տիգրան Սարգսյանի թիմակիցները:

Արտաքին քաղաքականության և տնտեսության ոլորտում ձեռքբերումների բացակայության և որոշ ակնհայտ ձախողումների առկայության պայմաններում, իշխող ՀՀԿ-ն տարեվերջին ներքին դաշտում որոշ անսպասելի վերադասավորումներ նախաձեռնեց:

Իրար հաջորդած փոփոխություններն ու վերադասավորումները կառավարությունում առիթ տվեցին ենթադրելու, որ ՀՀԿ-ն կամ, ավելի ծիշտ՝ նախագահը դրանք նախաձեռնել է նախընտրական տարուն ընդառաջ՝ թե՛ հանրային կարծիքի վրա ազդեցության ակնկալիքով, թե՛ նաև կառավարության կազմում մարտավարական փոփոխությունների մտադրությամբ:

Համակարգային փոփոխությունների գնահատականը 2010-ին հուսադրող չէր: «Ֆրիդըմ հաուս» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը 2010-ին Հայաստանը շարունակում էր դասել «մասամբ ազատ» երկրների շարքին, արդեն երկրորդ տարին

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

շարունակ Հայաստանին տալով 6 միավոր, որ ընդամենը մեկ միավորով է պակաս «ոչ ազատ» երկրների շարքին դասվելու համար:

2010-ն առանձնացավ նաև նրանով, որ գործնական արդյունավետ քայլերով աչքի ընկան քաղաքացիական շարժումները: Թեև քաղաքացիական նախաձեռնությունները մնացին կոչերի մակարդակին, չունենալով գործողությունների ռազմավարություն, այդուհանդերձ նրանց հաջողվեց հասարակական աջակցություն ստանալ երկրի տարբեր հատվածներում, տարբեր խնդիրների համար պայքարում:

«Թրանսփերենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կազմակերպության կոռուպցիայի ընկալման ցուցիչի վարկանիշային ցուցակում Հայաստանը 180 երկրների ցանկում զբաղեցնում է 120-րդ տեղը: «Իքոնըմիստ» հանդեսի վերլուծական միավորի՝ «Իքոնըմիստ Ինթելիջենս յունիթի» գնահատականով Հայաստանը ժողովրդավարության մակարդակով թեև նախորդ տարվա համեմատ 4 կետով

առաջընթաց է արձանագրել, այդուհանդերձ 167 երկրների շարքում 109-րդ տեղում է: (Հարևան Ադրբեջանը 137-րդ տեղն է զբաղեցնում, իսկ Վրաստանը՝ 104):

2010-ն առանձնացավ նաև նրանով, որ գործնական արդյունավետ քայլերով աչքի ընկան **քաղաքացիական շարժումները**: Թեև քաղաքացիական նախաձեռնությունները մնացին կոչերի մակարդակին, չունենալով գործողությունների ռազմավարություն, այդուհանդերձ նրանց հաջողվեց հասարակական աջակցություն ստանալ երկրի տարբեր հատվածներում, տարբեր խնդիրների համար պայքարում: Առավել ակտիվ էին այդ շարժումներից մի քանիսը՝ «Մենք ենք այս քաղաքի տերը» անունը կրող նախաձեռնությունը, որը փորձում է կառուցապատումից պաշտպանել քաղաքային այգիները, «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցներին» նախաձեռնությունը, որը փորձում է կանխել Հայաստանի հանրակրթության և լեզվի մասին օրենքներում կառավարության նախաձեռնած փոփոխությունը, որով Հայաստանում կանաչ լույս է վառվում օտար լեզվով հանրակրթական հաստատություններ բացելու համար: Քաղաքացիական բողոքի արդյունքում «Հանրակրթության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունները վերածնակերպվեցին, սակայն առավել մեծ հակազդեցության արժանացած «Լեզվի մասին» օրենքում փոփոխություններն այնուամենայնիվ ընդունվեցին: Աչքի ընկավ նաև Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճի պահպանման կողմնակիցների շարժումը, որի շնորհիվ դահլիճն ի վերջո չքանդվեց:

Ակտիվ էին նաև բնապահպանները, որոնց մի զգալի մասի համար տարվա ընթացքում հիմնական խնդիրը Թեղուտի անտառի պաշտպանությունն էր:

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Տարեվերջին հասարակական մեծ շարժում սկսվեց նաև նվազագույնից բարձր աշխատավարձ ստացող ապագա մայրերի համար հղիության նպաստների կրճատում ենթադրող նոր օրենքի դեմ, ինչի արդյունքում օրենքը ընդունվելուց հետո, այն դարձյալ հետ ուղարկվեց կառավարություն և խոստացվեց, որ կենթարկվի փոփոխությունների:

Ընտանեկան բռնությունների դեմ պայքարը նույնպես հայտնվեց քաղաքացիական շարժումների օրակարգում, երբ ամուսնու և ընտանիքի այլ անդամների կողմից բռնությունների հետևանքով երիտասարդ կնոջ մահվան մասին դեպքը հանրային մեծ արձագանք ստացավ: Այն վկայում էր ընտանեկան բռնությունների վերաբերյալ օրենսդրության թերի լինելու մասին: Իսկ երեխաների նկատմամբ բռնության դեպքերը հատուկ կրթության գիշերօթիկ դպրոցում հասարակական ալիք բարձրացրեցին օրենսդրության կատարման անարդյունավետության առումով:

Հասարակական կազմակերպությունների և կառավարության միջև պայքարն ընթացավ վայրիվերումներով: Հասարակական կազմակերպությունների տարբեր հանդիպումների ու բողոքի գործողությունների արդյունքում հնարավոր եղավ կանխել Ազգային ժողովում նրանց վերաբերող օրենքի անցկացումը:

Մյուս կողմից, Արդարադատության նախարարությունը օգտագործեց վարչական որոշում ընդունելու իր իրավունքը և տարվա կեսին ձևավորեց հասարակական կազմակերպությունների հարկային և վարչական գործունեությունը և հարկային հաշվետվություններ ներկայացնելու պահանջը վերահսկող մի մարմին:

Պակաս մտահոգիչ չէր իրավիճակը **նստիկանությունում**: Ապրիլին նստիկանության Չարենցավանի բաժնում մահացավ 24-ամյա երիտասարդ, ում բերման էին ենթարկել

գողության կասկածանքով: Ոստիկանապետը դեպքի հաջորդ օրը հայտարարեց, որ կատարվածն ինքնասպանություն է: Սակայն ընդամենը մի քանի օր անց, Հատուկ քննչական ծառայությունը պարզեց, որ ձեռքարկվածի նկատմամբ բռնություն է կիրառվել: Այդուհանդերձ, ինքնասպանության վարկածը պահպանվում է, թեև դատական գործընթացը կասկածի տակ դրեց այդ վարկածի իսկությունը: Փաստաբանները, ոստիկանության տարբեր աշխատակիցներ ու վկաներ սպանության մեջ մեղադրանքի շրջանակներում հնչեցնում են տարբեր անուններ: Ամեն դեպքում կասկածյալների ու մեղադրյալների շրջանակը սահմանափակվում է իրավապահ համակարգի աշխատակիցներով:

Քաղաքացիական համախմբված շարժումների առաջին քայլերը հույս ներշնչեցին, որ քաղաքական մեխանիզմների գրեթե չգոյության պարագայում, հասարակությունը կարող է առնվազն որոշ խնդիրների վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտել քաղաքացիական շարժումների միջոցով: Այս առումով զգալի դեր է վերապահված **լրատվամիջոցներին**, որոնք սակայն 2010-ին աչքի ընկան քաղաքական ազատության և ֆինանսական անկախության պակասով, ինչն իր հերթին, ինչպես և նախորդ տարիներին, արտահայտվում էր լուրերի և վերլուծությունների անհամարժեք մատուցմամբ:

Հայաստանը շարունակում է բավական ցածր տեղեր զբաղեցնել միջազգային տարբեր կազմակերպությունների մամուլի ազատությանը վերաբերող վարկանիշային ցուցակներում: 2010-ին ըստ Փարիզում տեղակայված «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության ցուցիչի, Հայաստանը 178 երկրների շարքում զբաղեցնում է 101-րդ հորիզոնականը: 2009-ի համեմատ, այդուհանդերձ, Հայաստանն

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

իր դիրքերը բարելավել է 10 աստիճանով: Առաջընթացի հարցում նշանակություն է ունեցել լրագրողների հանդեպ բռնությունների դեպքերի նվազումը:

Քաղաքացիական համախմբված շարժումների առաջին քայլերը հույս ներշնչեցին, որ քաղաքական մեխանիզմների գրեթե չզոյության պարագայում, հասարակությունը կարող է առնվազն որոշ խնդիրների վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտել քաղաքացիական շարժումների միջոցով:

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը 2010-ին մնաց ճաղերի հետևում՝ դատապարտված լինելով զանգվածային անկարգությունների կազմակերպման մեղադրանքով:

Մարտին Ազգային ժողովի կողմից՝ լրատվամիջոցներին վերաբերող մի շարք օրենքներում փոփոխություններից մեկով զրպարտությունը և վիրավորանքը ապաքրեականացվեցին: Բայց այլ փոփոխություններով զրպարտանքի դեպքում ավելի խստացվեցին ֆինանսական պատժամիջոցները: Լրատվամիջոցների գործունեությանը հետևող տեղական կազմակերպությունները մտահոգված են, որ նման ֆինանսական լծակները կարող են անկախ կամ ընդդիմադիր

լրատվամիջոցներին լռեցնելու հնարավորություն տալ իշխանություններին:

Հայաստանի կառավարությունը ներքին և միջազգային ուժգին քննադատության արժանացավ, երբ Ազգային ժողովը հունիսին ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում կառավարության առաջարկած մի շարք փոփոխություններ, որոնք տեղական հեռարձակողներին պարտադրում են մինչև 2013 թվականի հուլիս անցնել թվային հեռարձակման: Հայաստանյան առաջատար լրատվական կազմակերպությունները մտահոգված են, որ սրանով իշխանությունների իրական նպատակն է մեծացնել լրատվական հաղորդումների նկատմամբ իրենց լիակատար վերահսկողությունը՝ նվազեցնելով հեռուստաընկերությունների թիվը:

Այս մտահոգություններին արձագանքեց ԵԱՀԿ-ն ու մասնավորապես այս կազմակերպության մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը: Նրա գրասենյակի՝ հայաստանյան իշխանություններին փոխանցված հատուկ առաջարկներում ասվում էր, որ դրանց իրականացումը կվերացներ «մամուլի ազատության անհարկի սահմանափակումները», որը նախատեսում է կառավարության կողմից հավանություն արժանացած օրինագիծը: Կառավարությունը պնդում է, թե ընդունել է առաջարկների մեծ մասը նախքան այն հավանության է արժանացել խորհրդարանում երկրորդ և վերջին ընթերցման ժամանակ: Այդուհանդերձ, ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը պնդեց, որ «կարևորագույն նշանակություն ունեցող» իր առաջարկներն անտեսվել են:

ԵԱՀԿ-ն, ինչպես նաև Եվրոպական Միությունն ու Միացյալ Նահանգները Հայաստանի իշխանություններին հորդորեցին օրինագծում հավելյալ փոփոխություններ կատարել: Նախագահ Սերժ Սարգսյանը ԱՄՆ պետքարտուղար

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հիլարի Քլինթոնի հետ հուլիսին Երևանում կայացած հանդիպման ընթացքում խոստացել էր դա անել: Նախագահ Սարգսյանի առաջարկով՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի լրամշակման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի ղեկավարությամբ կազմավորվեց պետական պաշտոնյաների և մամուլի փորձագետների աշխատանքային խումբ:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) հայտարարած լիցենզավորման մրցույթը տեղի ունեցավ դեկտեմբերին: Միայն երկու կապուղիների դեպքում կար մեկից ավելի մրցակից: 2002 թվականին եթերազրկված Ա1+ անկախ հեռուստաընկերությունը պայքարում էր Արմնյուզ հեռուստաընկերության դեմ: Ա1+ ընկերությունը նորից պարտվեց: Լիցենզիա չստացավ նաև պոպուլիստական, բայց անկանխատեսելի համարվող ԱԼՄ հեռուստաընկերությունը, որը պատկանում է նախագահական նախկին թեկնածուի, և փաստորեն եթերից կզրկվի արդեն 2011-ի հունվարից:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի լրամշակված տարբերակը հարցականի տակ դրեց նաև մեկ այլ անկախ հեռուստակայանի՝ Գյումրիի ԳԱԼԱ-ի հետագա գործունեությունը: 2015 թվականից հետո, ըստ լրամշակված տարբերակի, Հայաստանի մարզերից յուրաքանչյուրում չի կարող գործել ավելի քան մեկ հեռուստաընկերություն: Այսօր Գյումրիում և Շիրակի մարզում գործում են չորս մարզային հեռուստաընկերություններ: Բացի ԳԱԼԱ-ն, մյուս երեքը կառավարության նկատմամբ լոյալ են: Մրցույթում պարտվելով՝ ԳԱԼԱ-ն կզրկվի եթերից 2015 թվականին:

Մինչ իշխանությունները շարունակում են խիստ հսկողության տակ պահել հեռուստաեթերը, տպագիր և առցանց լրատվամիջոցները համեմատաբար

ազատ են: Հայկական տպագիր մամուլի մի զգալի մասը խիստ քննադատաբար է տրամադրված կառավարության նկատմամբ, քննադատելով կառավարության ամեն քայլ կամ նախաձեռնություն: Նրանից մի քանիսը, այդ թվում ամենալավ վաճառվող երկու թերթերը, սերտորեն կապվում են արմատական ընդդիմության հետ: Տարբեր գնահատականներով, երկու թերթերը՝ «Հայկական ժամանակն» ու «Զորրոդ ինքնիշխանությունը» միասին ունեն ավելի քան 10 հազար օրինակ տպաքանակ: Որքանով են սակայն դրանք շահութաբեր կամ ֆինանսապես առողջ, հստակ չէ:

Հայաստանի կառավարությունը ներքին և միջազգային ուժգին քննադատության արժանացավ, երբ Ազգային ժողովը հունիսին ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում կառավարության առաջարկած մի շարք փոփոխություններ, որոնք տեղական հեռարձակողներին պարտադրում են մինչև 2013 թվականի հուլիս անցնել թվային հեռարձակման:

Տպագիր մամուլը օր-օրի ավելի է զգում ինտերնետային թերթերի մրցակցությունը: Վերջիններս տրամադրում են շատ ավելի

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

հրատապ և որպես կանոն՝ պակաս կողմնապահ լրատվություն: Ավելի քան երկու տասնյակ առցանց լրատվական գործակալություններ և թերթեր Հայաստանից ամենօրյա լրատվություն են հաղորդում: Նրանցից առնվազն երեքը հիմնադրվել են 2010-ին: Առաջատարներն ավելի շատ օրական մուտք ունեն, քան ամենաշատ ընթերցվող տպագիր թերթերը:

Մինչ տպագիր մամուլում գովազդը վերջին երկու տարիների ընթացքում զգալիորեն նվազել է, որոշ գնահատականներով առցանց լրատվամիջոցներում այն ավելացել է 20 տոկոսով:

Որոշ առցանց լրատվամիջոցներ այս տարի ավելացրել են նաև լրատվական տեսանյութերի բաժիններ: Սա կարող է լուրջ հակակշիռ դառնալ հեռուստա-ընկերություններին, որտեղ եթերային ժամանակի մեծ մասը շարունակում են զբաղեցնել զվարճալի հաղորդումները և արտասահմանյան կամ տեղական արտադրության սերիալներն ու ֆիլմերը: Հեռուստատեսային լրատվությունը շարունակում է կամ քաղաքականապես չեզոք թեմաների անդրադառնալ, կամ հիմնականում իշխանամետ տեսանկյունից լուսաբանել քաղաքական խնդիրները:

2010-ն աչքի ընկավ կառավարության կողմից հաստատված «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրի» ընդունմամբ, ինչպես նաև մի քանի համակարգային փոփոխություններով, որոնց հայտարարված նպատակը համակարգի արդիականացումն էր:

Համակարգային փոփոխությունները և կառավարության ծրագիրը, կառուցված էին կրթության շուրջ բոլոր բանավեժների հիմքում եղած մի քանի խնդիրների շուրջ. կրթության մատչելիություն ու սոցիալական

բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների ստեղծում, կրթության որակի բարելավում և արդյունավետ կառավարում:

Կառավարության ծրագիրը որևէ քաղաքականություն չի առաջարկում երկրում օտար լեզուների դասավանդման ուղղությամբ: Այնինչ հենց այս խնդրի շուրջ էր կրթության բնագավառում տարվա ամենաթեժ բանավեժը:

Մարտին խորհրդարան ներկայացվեց հապշտապ և առանց հանրային քննարկումների մշակված «Լեզվի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որի նպատակն ըստ էության Հայաստանում օտարալեզու դպրոցների վերաբացման համար օրինական ճանապարհ բացելն էր:

Նախագծի ընդունման դեմ շարժումը բուռն թափ ստացավ հունիսին, Ազգային ժողովի օրակարգ մտնելուց հետո: Ձևավորվեց «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների բացմանը» քաղաքացիական նախաձեռնությունը, ու պաշտոնական և ոչ պաշտոնական ամբիոններում քննարկումները թեժացան: Տարեվերջին սակայն «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունները, չնայած բողոքի բազմաթիվ ակցիաների, ընդունվեցին: Կես տարուց ավելի տևած բանավեժն այդուհանդերձ մի շարք կարևոր հարցերի պատասխաններ չտվեց.

- Արդյո՞ք Հայաստանն ունի հանրակրթական համակարգում օտար լեզուների ուսուցման հայեցակարգ:
- Ինչպե՞ս են սեփական լեզու ունեցող այլ փոքր երկրները լուծել այս խնդիրը:
- Ինչպե՞ս կարելի է խնդիրը դիտարկել երկու հարթության վրա՝

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ուսուցանել ու ուժեղացնել մայրենի լեզուն ու ազգային ինքնությունը և միևնույն ժամանակ ուսուցանել օտար լեզուներ առանց վտանգելու պետական լեզվի դիրքերը՝ երկրի միջազգային ինտեգրումն ու մրցունակությունն ապահովման համար:

2010-ին կրթության բնագավառի համակարգային բարեփոխումներ շարունակվում էին բոլոր երեք կրթական մակարդակներում: Նախադպրոցական կրթական համակարգի վերականգնումը և նրա հասանելիության ապահովումը բոլորի համար դեռևս լուրջ խնդիր է: Հայաստանի ավելի քան 1000 համայնքներից 400-ում չկան նախադպրոցական հաստատություններ, իսկ վերջին՝ 2008 թվականի տվյալներով, նախադպրոցական ծրագրերում 0-6 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակը կազմում է ընդամենը 29,8 տոկոս:

Երևանին սահմանակից Արարատ և Արագածոտն մարզերում 41 նոր նախադպրոցական կենտրոններ են բացվել այս տարի, որոնցից յուրաքանչյուրը ծառայություններ կարող է տրամադրել մեկ ամսից մեկ տարի ժամանակահատվածով: Այս կենտրոնները մասնավորապես նախատեսված են տնտեսապես անապահով ընտանիքների երեխաների համար:

2008-ից սկսված ծրագրով, 2010-ին գործում էին 91 ավագ դպրոց, որից 31-ը՝ Երևանում: Միջազգային չափորոշիչներին համապատասխանելու նպատակով նախ 11, ապա 12-ամյակի անցած մեր հանրակրթության համակարգում առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծումը կրթության որակին միտված քայլ է: Ռազմավարական ծրագրով նախատեսվում

է ունենալ կրթական լավ միջավայր ունեցող շուրջ 300 ավագ դպրոց:

Այսուհանդերձ, մասնագիտական շրջանակներում պարբերաբար բարձրացվում են սոցիալապես անապահով համայնքների համար ավագ դպրոցների անմատչելիության հարցը:

Նախադպրոցական կրթական համակարգի վերականգնումը և նրա հասանելիության ապահովումը բոլորի համար դեռևս լուրջ խնդիր է:

Մասնագիտական կրթության մակարդակում 2010-ի նոր ուսումնական տարին նշանավորվեց կրթության որակի համատեքստում ոչ պետական յոթ բուհի գործունեության լիցենզիայի կասեցումով, իսկ վեց բուհ լիցենզիայից զրկվեց որոշ մասնագիտությունների գծով: Այս գործողությունների նպատակն էր մրցակցություն ապահովել և ինտեգրվել Բոլոնյայի գործընթացին:

Համակարգային այլ մարտահրավերների հետ մեկտեղ կրթական համակարգում լուրջ խնդիր էր մնում կոռուպցիան: 2010-ին հայտնի դարձավ դիպլոմների և գնահատականների «վաճառքի» ավելի քան չորս տասնյակ դեպք: Միայն մի քանի դեպքերում մեղավորները պատժվեցին:

Կոռուպցիայի խնդիր դարձավ նաև բարոյականությունը: 2010-ին մեծ արձագանք ստացավ դեռևս նախորդ տարվանից

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

սկսված ու հասարակությանը ցնցած հատուկ դպրոցի դեպքը: Ակտիվիստների ու լրատվամիջոցների հետևողականության շնորհիվ՝ նախկին սաների հանդեպ սեռական ոտնձգությունների համար ի վերջո երեք տարվա ազատազրկման դատապարտվեց դպրոցի ուսուցիչը: Իսկ տնօրենը միայն աշխատանքից ազատվեց:

Մասնագիտական շրջանակներում պարբերաբար բարձրացվում են սոցիալապես անապահով համայնքների համար ավագ դպրոցների անմատչելիության հարցը:

Բանակում պաշտոնական վիճակագրության համաձայն տարեցտարի նվազում է բռնությունների և խաղաղ պայմաններում զոհված զինվորների թիվը, և 2010-ին գրանցված ողբերգական դեպքերի թիվը ավելի քիչ էր, քան նախորդ տարիներին, այդուհանդերձ այս տարի թերևս առաջին անգամ բանակում բռնություններն ու խաղաղ պայմաններում գրանցված մահվան դեպքերը հասարակական ամենաթեժ քննարկման առարկա դարձան:

Յունիսին ադրբեջանական ներխուժման հետևանքով սահմանային դիրքերում զոհվեց չորս զինծառայող: Մեկ ամիս անց, հայաստանյան զորամասերից մեկում մի զինվոր կրակ էր բացել, սպանելով իր հինգ զինակիցներին, և ինքնասպան էր եղել: Հետագա երկու ամսում խաղաղ պայմաններում

մահացավ ևս չորս զինծառայող: Տարվա ընթացքում մի քանի անգամ տարածվեցին տեղեկություններ սպանությունների ու ինքնասպանությունների մի քանի նոր դեպքերի մասին:

Նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի սահմանային գոտում տեղի ունեցած միջադեպի հետևանքով հրազենային կրակահերթերից զոհվեց չորս ժամկետային զինծառայող և ևս չորսը վիրավորվեց:

Պաշտպանության նախարարությունը փորձեց համապատասխան արձագանք տալ բանակում կարծ ժամանակահատվածում կատարված սպանությունների, բռնության, ինչպես նաև կաշառակերության դեպքերի վերաբերյալ հրապարակումներին: Բոլոր գրանցված դեպքերում տարածվեցին մամուլի հաղորդագրություններ, հարուցվեցին քրեական գործեր, Պաշտպանության նախարարը հեռացրեց մի քանի բարձրաստիճան սպաների, հանդիպեց զոհված զինծառայողների ծնողների հետ:

Ընդհանուր առմամբ տարվա հիմնական հետևություններից մեկն այն էր, որ թեև միջադեպերի քանակը չի աճել, աճել է դրանց վերաբերյալ տեղեկացվածությունը: Հնչեցին տարբեր վարկածներ, թե ինչու հատկապես այս տարի փորձ արվեց կոտրել բանակի շուրջ մի շարք խնդիրների վերաբերյալ տաբուն: Այդուհանդերձ, բացի առանձին դեպքերի քննարկումից, համակարգային այլ խնդիրների վերաբերյալ շատ հարցեր մնացին անպատասխան:

Որո՞նք են բանակում տեղի ունեցող բռնությունների, սպանությունների, ինքնասպանությունների խորքային պատճառները: Բանակի և պաշտպանության

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

նախարարության ո՞ր օղակների պատճառով է, որ նման միջադեպերը չեն կանխվում:

Որքանո՞վ է բանակում տիրող իրավիճակը արտացոլում հասարակության խնդիրները, և ի՞նչն է, որ հնարավոր է բարեփոխել, անկախ հասարակական այլ ոլորտների վիճակից:

Արդյո՞ք զինված ուժերում գործող պայմանները հիմնված են բոլորի հավասար իրավունքների սկզբունքի վրա: Արդյո՞ք հասարակության բոլոր շերտերը ներկայացված են բանակում: Թե՞ տարբերակում կա վերնախավի՝ բարձր սպայական անձնակազմի ու հասարակության անպաշտպան շերտերի՝ զինվորների միջև:

Վստահության պակասը ներբանակային պրոցեսների հանդեպ շարունակում է լուրջ խնդիր մնալ: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի՝ «Կոռուպցիան Հայաստանում» հետազոտության համաձայն, Հայաստանում բնակչության 22 տոկոսը բանակում կոռուպցիան համարում է շատ տարածված, 20 տոկոսը՝ բավականին տարածված, և միայն 20 տոկոսն է համարում, որ բանակում կոռուպցիա չկա:

Տարածված կարծիքն այն է, որ Հայաստանի զինված ուժերում կա սպաների կողմից զինվորների նկատմամբ դաժան վերաբերմունք և որ խաղաղ պայմաններում բանակում եղած զոհերի, ինքնախեղումների համար պատժվում են միայն կրտսեր սպայական կազմի ներկայացուցիչները: Այս պայմաններում շարունակվում է քաղաքացիների՝ իրենց որդիներին հնարավորության դեպքում զինծառայությունից ազատելու կամ առնվազն իրենց համար ցանկալի զորամասում ծառայության տեղավորելու ձգտումը:

2009-ից Պաշտպանության նախարարությանը կից գործող Հասարակական խորհուրդը, ինչպես նաև 2010-ին նշանակված Պաշտպանության նախարարության նոր խոսնակը որոշակիորեն փորձեցին ավելի բաց տեղեկատվական դաշտում աշխատել հասարակական կազմակերպությունների հետ: Արվեցին մի շարք քայլեր բանակի հանդեպ քննադատությանը ավելի արագ արածագանքելու ուղղությամբ:

Բոլոր գրանցված դեպքերում տարածվեցին մամուլի հաղորդագրություններ, հարուցվեցին քրեական գործեր, Պաշտպանության նախարարը հեռացրեց մի քանի բարձրաստիճան սպաների, հանդիպեց զոհված զինծառայողների ծնողների հետ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով առկա իրավիճակը, երբ ադրբեջանական կողմից իրականացվում են զինադադարի հաճախակի խախտումներ, և զինվորներին մատչելի կրթական, սոցիալական և տնտեսական ծառայություններն ու պաշտպանությունը շատ ցածր են, իրադրությունը բանակում կմնա բավականին լարված:

Որպես ՀՀ զինված ուժերի բարեփոխումների գործընթացի մաս, տարեցտարի ավելանում է նաև պայմանագրային զինծառայողների թիվը: Կառուցվածքային փոփոխությունները ենթադրում են, որ բանակը կազմված լինի

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ոչ միայն զինակոչիկներից և պրոֆեսիոնալ սպաներից, այլ նաև պրոֆեսիոնալ զինվորներից, չնայած Ադրբեջանի հետ սառեցված հակամարտության պայմաններում անհրատեսական է ակնկալել, որ բանակի անհրաժեշտ մարդկային ռեսուրսները հնարավոր կլինի համալրել միայն պայմանագրային հիմունքներով:

Հայաստանի զինված ուժերում եղած ներքին խնդիրների հետ մեկտեղ բանակում քաղաքացիական վերահսկողության տարրեր են մտնում, ինչպես նախատեսված է ըստ Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության ծրագրի:

Հայաստանը շարունակում է փոքր զորախմբերով մասնակցել միջազգային խաղաղապահ առաքելություններին Կոսովոյում և Աֆղանստանում:

Վերջին շրջանում որոշ քայլեր են արվում նաև ռազմական արդյունաբերության զարգացման ուղղությամբ: Հայաստանում արտադրվում է ռազմական նշանակության ավելի քան երկու հազար անոն ապրանքատեսակ. զրահատեխնիկա, զինվորական հատուկ համազգեստներ, ռադիոտեխնիկական և օպտիկա-էլեկտրոնային սարքավորումներ, պահեստամասեր, ինչպես նաև ռազմական արվեստի ուսուցման նպատակով ստեղծված տարբեր համակարգչային ծրագրեր, հետախուզության և հակահետախուզության ռադիո-էլեկտրոնային տարբեր սարքավորումներ:

ՀԵՌԱՆԿԱՐ

2011 թվականը համարվելու է նախընտրական տարի, չնայած մինչև 2012-ի խորհրդարանական ընտրությունները դեռ 18 ամիս կա: Այս սպասողական իրավիճակը ավելի կսրի կառավարության

և ընդդիմության միջև եղած լարումը: Բոլոր կուսակցությունները, կոալիցիայի ներսում, թե՛ դրսում, կսկսեն վերադասավորվել ընտրությունների համար: Մի կողմից՝ սա կմեծացնի անորոշությունը, մյուս կողմից՝ եթե քաղաքական ուժերը կարողանան ավելի ընդունելի և խելամիտ քաղաքական միություններ ստեղծել, ապա քաղաքացիների սպասումներին ավելի արձագանքող համակարգի նոր հույս կարող է լինել:

Կոալիցիոն երկու ուժերը՝ ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն, մրցելու են իրար հետ: Խնդիրները չեն բացառվում նաև բուն ՀՀԿ շարքերում: Այդ կուսակցության մեջ կան մի քանի գործիչներ, որոնք հավակնում են գլխավորել նախընտրական ցուցակը:

Ընդդիմության բևեռում նույնպես սպասվում են խմորումներ: Հայ ազգային կոնգրեսը շարունակում է հավակնել ընդդիմության դաշտի առաջատարի դերին: Սակայն թե՛ Դաշնակցությունը, թե՛ Ժառանգությունը անկասկած չեն համակերպվելու այդ հավակնության հետ: Չի բացառվում, որ իշխանությունը փորձի վերակենդանացնել նաև լուսանցքային ընդդիմադիրներին:

Զգալի փոփոխությունների բացակայության պայմաններում, կշարունակվի գնալով ծանրացող ապատիան և տնտեսական ճգնաժամի ազդեցության հետ մեկտեղ կարող է ավելի հզորացնել վերջերս նորից գլուխ բարձրացրած արտագաղթի ալիքը:

Այն հեռուստաընկերությունները, որ թվանշային հեռարձակման լիցենզիա ունեն, իրենց ապահով կզգան: Բայց ունենալով նախընտրական անհանգստություններ՝ կառավարությունը կշարունակի օգտագործել իր իշխանական լծակները բովանդակությունը վերահսկելու նպատակով:

ԵՐԵՐՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում ներքին վերադասավորումները կլինեն բոլորի ուշադրության կենտրոնում: Սակայն արտաքին քաղաքական զարգացումները, ինչպես նաև Ղարաբաղ-Ադրբեջան համան գծի միջադեպերը նշանակալիորեն կազդեն ներքին զարգացումների վրա:

Բանակում ծառայության ապահովության մասին հարցերն ու քննարկումները կշարունակվեն, բայց կառուցվածքային փոփոխությունները խթան կստանան միայն պաշտպանության նախարարության բաց մասնակցության դեպքում:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Գործող քաղաքական ուժերի ղեկավարությունը պետք է ընդունի, որ քաղաքական դաշտում այնպիսի վերադասավորումներ են անհրաժեշտ, որոնք հնարավոր կդարձնեն եղած քաղաքական մենաշնորհների վերացումը և ավելի առողջ ու հավասարակշռված քաղաքական միջավայրի ստեղծումը:

Քաղաքացիական նախաձեռնությունները կարող են բարեփոխումների օգտակար գործիք դառնալ, եթե հանրային հաստատություններն ընդունեն հանրային մասնակցության անհրաժեշտությունը, իսկ քաղաքացիները կարողանան գաղափարապես և գործնականում որոշակիացնել իրենց պահանջները:

Իշխանությունը հանրային աջակցության կարիք կունենա արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար: Այդ նպատակով հասարակության և քաղաքացիների դերը պետք է բարձրացվի և ամրապնդվի:

Կրթության բնագավառում կառավարության քաղաքականությունը պետք է ուղղված լինի բոլոր առումներով կրթության որակի բարձրացմանը, օգտվելով եվրաինտեգրման գործընթացի բոլոր հնարավորություններից, և չկենտրոնանա հասարակական ուշադրության ներքո գտնվող կոնկրետ դեպքերի վրա: Բոլոր մակարդակների համար անհրաժեշտ է ներդնել բոլոր մասնավոր կրթական հաստատությունների որակավորման թափանցիկ համակարգ:

Ֆինանսական և քաղաքական անկախության բացակայության պայմաններում դժվար է ակնկալել, որ թե՛ հեռուստատեսությունը, թե՛ տպագիր մամուլը կկարողանան իրականացնել երկրում խնդիրների շուրջ անկողմնակալ և առարկայական բանավեճի հարթակի դերը: Միևնույն ժամանակ լրատվամիջոցները, հատկապես նախընտրական տարում պետք է կարողանան հնարավորինս ընդգրկուն դառնալ՝ թե՛ հանրությանը իրապես մտահոգող խնդիրների, թե՛ այդ խնդիրները լավագույնս ներկայացնող ամենատարբեր շրջանակների նկատմամբ: Այլապես կուսակցական, անձնավորված թեմաների գերակայությունը կշարունակի լուսանցքայնացնել ավանդական լրատվամիջոցները և էլ ավելի կնվազեցնի դրանց հանդեպ հասարակության ակտիվ շերտերի հետաքրքրությունը և հավատը:

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

Եթե 2009-ը համաշխարհային տնտեսությունը փրկելու և ճգնաժամից հետո վերականգնելու տարի էր, ապա 2010-ին բնորոշ էր տնտեսությունը խթանելու համար նախատեսված արտահերթ միջոցառումների ծավալի զգալի կրճատումը:

Այս միջոցառումներն իրենց ետևից թողեցին հսկայական պարտքեր և բյուջեի պակասորդ: Դրան էլ հաջորդեց խիստ միջոցներ ձեռնարկելու հրամայականը: Արևմտյան մի շարք խոշոր պետություններ, ինչպես օրինակ՝ Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Հունաստանն ու Իռլանդիան, մի մասը դժկամությամբ, մի մասն էլ՝ ստիպված, զուսպ բյուջեներ ընդունեցին: Այնուհետև, սկսվեցին քննարկումներ նշված միջոցների ձեռնարկման ժամկետների նպատակահարմարության առնչությամբ՝ հաշվի առնելով այն, որ համաշխարհային տնտեսությունը դեռևս շարունակում է խոցելի մնալ:

Այն երկրները, որոնք դեռ զգում են իրենց տնտեսության խթանման անհրաժեշտությունը, ապավինել են դրամավարկային քաղաքականությանը: Ճգնաժամի ամենասուր փուլում օգտագործված մեծ թվով հարկաբյուջետային խթանների նպատակն էր նվազեցնել անկման տեմպերը և մեղմել դրա հետևանքները: Ավելի ուշ, կառավարությունները դրամի ներհոսք ապահովեցին իրենց տնտեսությունների մեջ՝ շարունակելու համար աճի խթանումը դրամավարկային ընդլայնման և մասնավորապես պարտատոմսեր ձեռք բերելու միջոցով:

Չնայած այս մոտեցումը կիրառվեց շատ երկրների կողմից, Հայաստանը բացառությունների շարքում էր: Հայաստանի կողմից օգտագործվող խթանները չափահովեցին ակնկալվող արդյունքները: Հակաճգնաժամային գործողությունների պլանը, որի նպատակն էր հնարավորինս նվազեցնել տնտեսական անկումը և հող նախապատրաստել հետճգնաժամային վերականգնման համար, արդյունավետ չեղավ: Ավելին, կարճաժամկետ լուծումներն ունեցան խորը երկարաժամկետ հետևանքներ:

Հայաստանի հակաճգնաժամային գործողությունների պլանի՝ ակնկալվող արդյունքին չհասնելը 2010-ին, պայմանավորված է հետևյալ պատճառներով:

- Կառավարության ծրագիրը չէր ուղեկցվում կառուցվածքային բարեփոխումներով: Տնտեսությունը բազմազան չէ, շատ մենաշնորհներ կան, գործարար շրջանակներն ու կառավարությունը սերտորեն փոխկապակցված են, և չի իրականացվում արդյունավետ կառավարում:
- Չկային մրցունակության հնարավորություններ: Համաշխարհային տնտեսական ֆորումի մրցունակության ցուցանիշով 2010-ին Հայաստանը զբաղեցրեց 98-րդ տեղը 139 երկրների շարքում՝ ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրներից գերազանցելով միայն Տաջիկստանին և Ղրղզստանին: Չնայած Հայաստանը լավ դիրք է զբաղեցնում ձեռնարկությունների գրանցման դյուրինության վարկանշով, այն 93-րդն է ներդրողների պաշտպանվածության և 153-րդը հարկերի վճարման դյուրինության վարկանիշով 183 երկրների շարքում:

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄՆԻՑ ՀԵՏՈ

- Կառավարության ծրագրի հարկային բաղադրիչը քանակապես համեմատական չէր տնտեսությունը խթանելու նպատակին: Չնայած բիզնեսի աջակցությանն ուղղված ՀՆԱ հետաձգման ծավալուն ծրագրին, կառավարությունը սկսեց ցուցաբերել միևնույն ժամանակ հաստատական և ընտրողական մոտեցում հարկերի հավաքագրման նկատմամբ՝ պայմանավորված վարկերի և ծախսերի բարձր մակարդակներով: Հարկային բեռն անհամաչափորեն ծանրացավ փոքր և միջին ձեռնարկությունների վրա, մինչդեռ հատկապես ճգնաժամի ժամանակ նրանց դերը կարևոր է տնտեսական աճի խթանման համար:
- Ճգնաժամի ամենաակտիվ փուլում ՀՀ դրամի կուրսը արհեստականորեն բարձր էր պահվում: Մինչդեռ, եթե 2009-ի արժեզրկումից հետո դրամը շարունակեր արժեզրկվել շուկայական մակարդակով, կմեծանային թե՛ արտասահմանից մրցունակությունը, թե՛ արտասահմանից դրամական փոխանցումներից կախված բնակչության գնողունակությունը: Դրա փոխարեն՝ հիմնականում ելնելով գնաճի նկատմամբ երկյուղից ՀՀ դրամի բարձր արժեքը պահպանվում էր:
- Կառավարության ծրագրի նշանակալի ձեռնարկներից ոչ մեկը չվերածվեց փաստացի նախագծի: Ատոմակայանի, ինչպես նաև հյուսիս-հարավ մայրուղու շինարարության հեռանկարը մնաց ապագային: Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման հարցը նույնիսկ դադարեց քննարկվել, իսկ

Հայկական զարգացման բանկի մասին հիշատակություն եղավ միայն տարվա վերջում՝ վերջինիս նախագահի նշանակման առիթով:

- Բիզնեսի վարկավորման տոկոսադրույքները մնացին չափազանց (20 տոկոսից) բարձր՝ նվազեցնելով հնարավոր ներդրումների նկատմամբ հետաքրքրվածությունը:

Հայաստանի հապճեպ մշակված տնտեսության խթանման ծրագիրը ոչ միայն չնվազեցրեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, այլ ստեղծեց մի բոլորովին նոր մակրոտնտեսական իրողություն, որն ապագա աճն ավելի դժվար հասանելի մարտահրավեր դարձրեց: Անցնող տարվա ընթացքում Հայաստանի ճգնաժամը պայմանավորված էր մի քանի կառուցվածքային ու հիմնարար հանգամանքներով.

- ցածր բազմազանեցում, ցածր մրցունակություն, բարձր մոնոպոլիզացիա,
- արտաքին վարկառության սահմանափակ կարողություն,
- բյուջեի աճող դեֆիցիտ,
- գնաճի բարձր մակարդակ,
- բարձր արտաքին առևտրի դեֆիցիտ:

Այդ էր պատճառը, որ 2010-ին կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունը հետձգնաժամային այս իրավիճակի շտկումն էր: Կառավարությունը փոփոխության ենթարկեց իր տնտեսական ծրագիրը և փորձեց հանրային-մասնավոր գործընկերության միջոցով կենտրոնանալ հետևյալ նպատակների վրա.

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

- աճ և աղքատության նվազեցում,
- հարկաբյուջետային և պարտքի կայունացում,
- արտաքին առևտրի մեծ ձեռքվածքի հավասարակշռում,
- ֆինանսական կայունացում,
- մրցունակություն և լավ կառավարում:

Տարվա ընթացքում կառավարությունը երկրնտրանքի առաջ էր, թե ինչպես հավասարակշռություն գտնի մի կողմից կառավարության մեծածավալ ենթակառուցվածքներին ուղղված ծախսերի ու սոցիալական ծրագրերի և մյուս կողմից իր՝ հարկաբյուջետային ու դրամավարկային պատասխանատվության միջև:

Հարկաբյուջետային ճակատում կառավարության քաղաքականությունը միտված էր հետևյալին.

- բյուջեի ձեռքվածքը նվազեցնել ՀՆԱ-ի 7,5 տոկոսից մինչև 4,8 տոկոս,
- հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերությունը բարձրածնել կես տոկոսով, հարկերի հավաքման բարելավման շնորհիվ,
- վերադառնալ միջնաժանկետ ծախսերի ծրագրին՝ պետական պարտքը կրճատելու նպատակով և ծախսերը կենտրոնացնել սոցիալական ծրագրերի և ներդրումների վրա,
- 2011-ին պետական պարտքը կայունացնել ՀՆԱ-ի 50 տոկոսի չափով:

Դրամավարկային ճակատում՝

- կառավարության՝ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը գների կայունացումն էր: 2010-ի առաջին ամիսներին մտահոգություններ կային հնարավոր գնաճի վերաբերյալ, և կառավարությունը հինգ հաջորդական բարձրացումներով ամրապնդեց տոկոսադրույքների քաղաքականությունը: Երբ մայիսին աճը դանդաղեց, տոկոսադրույքները չփոխվեցին:
- կառավարության միջամտությունները տարադրամի փոխանակման շուկայում հիմնականում ուղղված էին փոխարժեքի մեծ տատանումները շտկելուն և ոչ թե հիմնարար միտումների դեմն առնելուն:
- Կառավարությունը շարունակեց ամրապնդել դրամավարկային փոխանցման մեխանիզմները, այդ թվում՝ կառավարության վերաֆինանսավորման հաշվարկային և բանկային տոկոսադրույքների փոխկապակցումը՝ դրամային ֆինանսական գործիքների զարգացող շուկան խրախուսելու միջոցով: Ակնկալվում է, որ 2010-ի հունիսին ընդունված ավտոտրանսպորտային միջոցների երրորդ կողմի պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքը և մասնավոր ներդրումային հիմնադրամներին վերաբերող օրենքը կխթանեն շուկայի զարգացումը:
- Նվազեցնելու համար դուլարով բանկային ավանդների բարձր աստիճանը, սեպտեմբերին

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

կառավարությունը 1/4-ից 1/2-ի բարձրացրեց արտարժույթային ավանդների պահուստների՝ դրամով պահվելու պահանջվող հարաբերությունը:

Սրանք էին 2010-ի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները, որոնցից մի քանիսն արվեցին ժամանակին, մյուսները՝ շատ ուշ արդյունավետ լինելու համար: Համենայն դեպս, տնտեսության իրական հատվածն էր, որ կարիք ուներ, բայց չստացավ հիմնարար, խորքային և գործուն շտկումներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Հստակ է, որ Հայաստանի տնտեսությունը դեռևս դուրս չի եկել դժվարին կացությունից: 2009 թվականի 14,4 տոկոս անկումից հետո 2010 թվականի առաջին երկու եռամսյակում տնտեսությունը սկսեց դանդաղ վերականգնվել՝ գրանցելով 5,4 և 7,6 տոկոս իրական ՀՆԱ աճ նախորդ տարվա համեմատ: Հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ՀՆԱ ընդհանուր աճը, այնուհանդերձ, կազմեց ընդամենը 2,8 տոկոս, ինչը նշանակում է, որ երրորդ եռամսյակում տնտեսությունը գրանցել էր բացասական աճ: Հոկտեմբերին այս անկումը շարունակվեց, և ՀՆԱ տարեկան ընդհանուր աճը հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածի համար կազմեց 2,4 տոկոս:

Չնայած խոստումներին և կառուցվածքային բարեփոխումների ու տնտեսության բազամազանեցման ուղղությամբ արվող փորձերին, 2010-ին միայն աննշան առաջընթաց գրանցվեց: Հայաստանի հիմնական մակրոտնտեսական թերությունները, մասնավորապես՝ աճի անկայուն խթանները, փոքրաքանակ և հիմնականում հումքի արտահանումը, ինչպես

նաև չափազանց մեծ կախվածությունը մասնավոր փոխանցումներից, դեռևս լայնորեն տարածված էին:

Չնայած խոստումներին և կառուցվածքային բարեփոխումների ու տնտեսության բազամազանեցման ուղղությամբ արվող փորձերին, 2010-ին միայն աննշան առաջընթաց գրանցվեց:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցված ՀՆԱ 2,8 տոկոս աճը 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատ, կարծես նշան էր, որ ձգնաժամի վատթարագույն փուլն անցել է: Սակայն երրորդ եռամսյակում գրանցվեց նշանակալի անկում՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսության ոլորտում բացասական միտումով: Սպասվող տարեկան 2,5-2,9 տոկոս աճը հեռու է երկնիշ տնտեսական աճից, որն առկա էր մինչձգնաժամային շրջանում: Պաշտոնական վիճակագրությամբ գործազրկության մակարդակը մի փոքր նվազել է՝ 7,3 տոկոսից հասնելով 7,1 տոկոսի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում:

Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբերի ամիսներին կտրուկ նվազել են համախառն **գյուղատնտեսական արտադրանքի** ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հսկայական 17,9 տոկոսի անկումը պայմանավորված է վատ եղանակային պայմաններով՝ ուժեղ անձրևների և կարկուտի պատճառով հետաձգվեց հիմնական գյուղատնտեսական

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

արտադրանքի՝ կարտոֆիլի և լոլիկի ցանքը և նվազեց ամենաեկամտաբեր մշակաբույսերի՝ ծիրանի և կեռասի բերքը: Չնայած 2010-ի սկիզբը խոստումնալից էր առաջին եռամսյակի 3,2 տոկոս փոքր աճի տեմպերով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ամռան ամիսներին այդ ցուցանիշն անկում ապրեց: Մինչ տարվա կեսը արտադրանքի անկման տեմպը կազմեց 13,1 տոկոս: Սեպտեմբերին այն շարունակեց նվազել գյուղատնտեսական ապրանքների մեծ մասի վատ բերքահավաքից հետո: Այս առումով բացառություն էր խաղողը, որի դեպքում արտադրության ծավալներն աճեցին 10-15 հազար տոննայով՝ հասնելով 215 հազար տոննայի: Մսի արտադրությունը նույնպես անկում գրանցեց 2010 թ. հունվար-օգոստոս ամիսներին՝ նվազելով 11,5 տոկոսով կամ 3 500 տոննայով 2009 թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Կառավարության կողմից տրամադրվող խթանները հիմնականում շրջանցեցին գյուղատնտեսության ոլորտը, որը միջինում կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի 25 տոկոսը:

Չնայած Հայաստանի գյուղատնտեսությունը որպես կանոն բախվում է վատ եղանակային պայմանների խնդրին, այս տարվա հսկայական անկումը կարելի է բացատրել երկու հավելյալ գործոններով: Նախ, կառավարության կողմից տրամադրվող խթանները հիմնականում շրջանցեցին այս ոլորտը, որը միջինում կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի 25 տոկոսը: Երկրորդ, արտադրանքի մասով թվերն արտացոլում են Առևտրի

համաշխարհային կազմակերպության պահանջով նվազած սուբսիդիաների հետևանքները:

Միակ ոլորտը, որը կայուն աճ է գրանցել, գինու և ոգելից խմիչքների արտադրությունն է՝ արտադրական սարքավորումներում և նոր խաղողի այգիներում կատարված նոր ներդրումների շնորհիվ: Համախմբվելու փորձեր արվեցին կոնսորցիումների և կոոպերատիվների ձևավորման միջոցով՝ անվանումներն ու ստանդարտները պաշտպանելու նպատակով: Այս ոլորտի հետագա զարգացումը կախված կլինի նրանից, թե որքանով են հայ արտադրողները պատրաստ արտահանմանը, ինչպես նաև պահանջարկի աճից տեղական և միջազգային շուկաներում, հատկապես Ռուսաստանում:

Արդյունաբերությունը աճ արձանագրեց 2010-ի ընթացքում: Ընդհանուր առմամբ, Հայաստանը երկրորդն էր ԱՊՀ երկրների արդյունաբերության աճի վարկանշով՝ գրանցելով 10,9 տոկոս միջին աճ 2010 թ. հունվար-սեպտեմբերի ամիսներին, որը, հիմնականում, ապահովվել էր հանքարդյունաբերության ոլորտի կողմից, որտեղ ապրանքների նկատմամբ համաշխարհային ավելի մեծ պահանջարկը ձևավորեց ավելի բարձր գներ:

Շինարարության ոլորտի ցուցանիշները տարվա ընթացքում տատանվում էին: Հունվար-սեպտեմբեր ամիսների 5,2 տոկոս անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վկայում է ոլորտի անկայունության մասին, որը հիմնված է էլիտար շուկայի վրա և փոքրաթիվ ապրանքներ է առաջարկում միջին կամ սահմանափակ բյուջեով շուկային: Այս անկումը տեղի ունեցավ հակառակ այն փաստի, որ կառավարությունն իր՝ տնտեսության խթանման փաթեթի մի մեծ

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԶԵՏՈ

մասը տրամադրել էր այս ոլորտին, անավարտ շինությունները վերջացնելու համար:

Մանրածախ առևտրի շրջանառությունը հիմնականում փոփոխություններ չի կրել նախորդ տարվա համեմատ: Մանրածախ առևտրի ոլորտում առկա մենաշնորհների արդյունքում ոլորտը դիմակայեց ճգնաժամին՝ գրանցելով գրեթե զրո տոկոս աճ: Ճգնաժամից հետո նկատվեց մանրածախ ոլորտի կառուցվածքի փոփոխություն հոգուտ պարենային ապրանքների:

Ի տարբերություն մանրածախ ապրանքների, **ծառայությունների** ծավալն աճել է 7,4 տոկոսով հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: **Ջրուսաշրջության ոլորտում** Սյունիքի մարզում իրականացվեց «Տաթևի վերածնունդ» նախագիծը, որի առանցքային բաղադրիչը աշխարհի ամենաերկար ձուլանուղու կառուցումն էր: Դեռևս վաղ է ասել, թե արդյոք և ինչպես անհատ ներդրողի կողմից ֆինանսավորված այս նախագիծը կազդի այս շրջանի զբոսաշրջության ընդհանուր կարողությունների վրա:

Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության ոլորտում ծառայությունների ցածր որակը, բարձր գների հետ համակցված, ավելի ուժեղացրեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը: Այնուհանդերձ, 2010 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ներգնա զբոսաշրջությունը գրանցեց 15,6 տոկոս աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2010 թվականին բարելավվեց **արտաքին առևտրի** շրջանառությունը: Առաջին երեք եռամսյակները դրական փոփոխություններ գրանցեցին նախորդ տարվա համեմատ: Սակայն երրորդ եռամսյակում գրանցված աճի տեմպերն ավելի ցածր էին: 2010 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Եվրոպական

Միության անդամ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ցուցանիշներն աճեցին 29,1 տոկոսով՝ գերազանցելով մեկ միլիարդ դոլարը, ինչը վկայում է առևտրի ոլորտում ԵՄ-ի հետ ավելի խորը ինտեգրման մասին:

Շինարարության ոլորտի անկումը տեղի ունեցավ հակառակ այն փաստի, որ կառավարությունն իր՝ տնտեսության խթանման փաթեթի մի մեծ մասը տրամադրել էր այս ոլորտին, անավարտ շինությունները վերջացնելու համար:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի **արտաքին առևտրի** կառուցվածքում ԵՄ երկրների տեսակարար կշիռը կազմում է 32,1 տոկոս: Եվրոպական Միության երկրներից Հայաստանի ամենախոշոր առևտրային գործընկերը Գերմանիան է, որին ընկնում է արտաքին առևտրի 7,2 տոկոսը՝ հիմնականում հանքարդյունաբերական ապրանքների արտահանման շնորհիվ: ԵՄ երկրներ Հայաստանի արտահանման ծավալները գրանցել են 65,9 տոկոսի կտրուկ աճ, որը 2010 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ամբողջ արտահանման կեսից ավելին է: ԵՄ երկրներից Հայաստան ներկրման ծավալներն աճել են 17,1 տոկոսով՝ կազմելով ամբողջ ներկրման 22,5 տոկոսը:

Արտահանման ընդհանուր ծավալներում հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է 43,9 տոկոս աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հունվար-

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

սեպտեմբեր ամիսների արտահանման ընդհանուր արժեքը գրեթե հավասար էր 2009 թվականի տարեկան ընդհանուր արժեքին: Արտահանման երեք հիմնական երկրներն են Բուլղարիան՝ արտահանման ընդհանուր 15,2 տոկոս ծավալով, որին հաջորդում է Գերմանիան՝ 14,2 տոկոսով և Ռուսաստանը՝ 13,9 տոկոսով: Հաշվի առնելով, որ Բուլղարիա և Գերմանիա արտահանվում է հիմնականում հանքանյութ, հստակ է դառնում, որ 2010 թվականին Հայաստանի արտահանումները հումքային էին մնում, ինչի հիմնական պատճառը ոչ հումքային ոլորտների նշանակալիորեն ցածր մրցունակությունն է: Հայաստանը չկարողացավ ընդլայնել ու բազմազանեցնել իր արտահանումները, այդպիսով ավելի զգայուն դառնալով արտաքին ցնցումների նկատմամբ:

Գերմանիան է, որին ընկնում է արտաքին առևտրի 7,2 տոկոսը՝ հիմնականում հանքարդյունաբերական ապրանքների արտահանման շնորհիվ: ԵՄ երկրներ Հայաստանի արտահանման ծավալները գրանցել են 65,9 տոկոսի կտրուկ աճ:

Տնտեսական ճգնաժամն ավելի փոքր ազդեցություն է ունեցել ներկրման վրա, որովհետև Հայաստանի ներկրման կառուցվածքը արտահանման համեմատ ավելի բազմազան է: 2010 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ներկրման

ծավալներն աճել են մոտ 19 տոկոսով, ինչը մոտավորապես հավասար է ներկրումների անկմանը 2009 թվականին:

Եթե 2009 թվականին զուտ **մասնավոր փոխանցումները** նվազեցին, ապա 2010 թ. առաջին 6 ամիսների ընթացքում գրանցվեց փոխանցումների շարունակական աճ: Քանի որ սփյուռքից ստացվող մասնավոր փոխանցումները հիմնականում ուղղվում են ներկրված ապրանքների սպառմանը, այլ ոչ թե բարձր ավելացված արժեքով ոլորտներ, դրանք նշանակալի դրական ազդեցություն չեն ունեցել արտադրության վրա:

ՀՀԴ/ԱՄՆ դոլար **փոխարժեքը** նվազել է 6,1 տոկոսով 2010-ի առաջին երեք եռամսյակում 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատ, որից հետո սկսեց տարեվերջի ակնկալվող բարձրացումը: 2010-ի հունվար-հոկտեմբեր հատվածի արժեզրկումը կազմել է 4,7 տոկոս 2009-ի համեմատ:

Պետբյուջեի մուտքերը՝ եկամուտները և պաշտոնական փոխանցումները, 2010-ի առաջին ինը ամիսներին աճել են 19,2 տոկոսով 2009-ի համեմատ: Ծախսերի մասով գրանցվել է ավելի դանդաղ աճ, քան եկամուտների մասով՝ 4,6 տոկոս հունվար-սեպտեմբեր ամիսներին: Հարկային և մաքսային մուտքերի ընդհանուր գումարը կազմել է 580,8 միլիարդ դրամ, ինչը կանխատեսվածից ավել է 37,8 միլիարդ դրամով: 2009-ի համեմատ այս ցուցանիշն աճել է 15,5 տոկոսով: Բացի այդ, 9,5 տոկոսով աճել են նաև պարտադիր սոցվճարների հավաքագրման տեմպերը:

Հայաստանի խոշոր հարկատու ընկերությունների կողմից վճարված **հարկերի ընդհանուր ծավալն** աճել է 18 տոկոսով: Այնուհանդերձ, այս աճը պայմանավորված է անուղղակի

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

հարկերի (ԱԱՀ և ակցիզային հարկ) հավաքագրմամբ, որոնք ավելացել են 29 տոկոսով, տնտեսական աճող ակտիվության ավելի քիչ ստվերում մնալու շնորհիվ: Ուղղակի հարկերը նվազել են 5,5 տոկոսով, ինչը խոսում է ձեռնարկությունների շահութաբերության նվազման մասին: Խոշոր հարկատուների կողմից վճարված ուղղակի հարկերի մասնաբաժինը 2009-ի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ 26 տոկոսից նվազել է 21-ի: Այնուամենայնիվ մեծ ձեռնարկատիրության վրա հենվել հիմնականում նշանակում է, որ հաճախ մենաշնորհային գներ են դրվում շատ ապրանքների վրա:

Ինչ վերաբերում է **արտաքին պետական պարտքին**, Հայաստանն այլևս ընդգրկված չէ Համաշխարհային բանկի պետական պարտքի ցածր մակարդակ ունեցող երկրների ցանկում: Մինչև 2010-ի վերջը Հայաստանի արտաքին պարտքը կհասնի ՀՆԱ-ի մոտ 42 տոկոսին, իսկ 2012-ին կհասնի ՀՆԱ-ի 50 տոկոսին: Այս արդեն իսկ խոշոր ցուցանիշը շատ ավելի ճնշող է դառնում 2008-ի հետ համեմատելիս, երբ արտաքին պարտքը կազմում էր ՀՆԱ-ի ընդամենը 13,5 տոկոսը:

Գների աճի մակարդակի նշանակալի աճ է գրանցվել 2010-ի առաջին ինն ամիսների ընթացքում: Այդ իսկ պատճառով այն դարձել է դրամավարկային կարգավորման առարկա: Այդ ժամանակահատվածում ԱՊՀ երկրներում այն ամենաբարձրն էր՝ 7,8 տոկոս, Ադրբեջանի 5,2 տոկոսի համեմատ: Գների այս աճը, մեծամասամբ, պայմանավորված է հետևյալով՝

- համաշխարհային շուկաներում պարենային և հումքային ապրանքների բարձր գները,
- 2009-ին որդեգրված հակաձգնա-ժամային հարկաբյուջետային և

դրամավարկային ընդլայնողական քաղաքականության երկարաձգված ազդեցությունը,

- 2009-ի դրամի արժեզրկման հետ կապված բացասական սպասումները:

Քանի որ սիյուոքից ստացվող մասնավոր փոխանցումները հիմնականում ուղղվում են ներկրված ապրանքների սպառմանը, այլ ոչ թե բարձր ավելացված արժեքով ոլորտներ, դրանք նշանակալի դրական ազդեցություն չեն ունեցել արտադրության վրա:

Սպառողական գների ցուցիչը նույնպես աճել է 7-ից 8,5 տոկոսի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: 2010-ի ընթացքում սպառողական գների ցուցիչի աճը եղել է ամսական մոտ 2,5 տոկոսի շրջակայքում:

Գյուղատնտեսական ապրանքների գների աճը բացատրվում է վատ բերքահավաքով: Տարվա առաջին կեսում գրանցված 17,7 տոկոս գնաճը էլ ավելի մեծացավ՝ հասնելով 26 տոկոսի հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում:

2010-ին **բանկային համակարգը** կայուն է եղել, և բանկերը 55 միլիոն դոլար եկամուտ են ունեցել: 2010-ի առաջին երեք

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԶԵՏՈ

եռամսյակներում ամեն տարի բանկային համակարգի ակտիվները 7 տոկոսանոց աճ են ապրել, իսկ պասիվները բարձրացել են 8 տոկոսով, և ընդհանուր կապիտալը ավելացել է տասը տոկոսով:

2010 թվականի առաջին երեք եռամսյակներում գրանցվել է **արտարժույթով ավանդների** միջինում 26,4 տոկոս աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Մինչդեռ ՀՀ դրամով ժամկետային ավանդների մասով գրանցվել է ընդամենը 10 տոկոս աճ: Սա նշանակում է, որ 2003 և 2007 թվականների ակնհայտ «դրամացման» միտման փոխարեն այսօր անցում է կատարվում դեպի «դոլարացում»:

Հայաստանի արտաքին պարտքը կհասնի ՀՆԱ-ի մոտ 42 տոկոսին և ՀՆԱ-ի 50 տոկոսին՝ 2012-ին:

Վարկավորման և ավանդների **տոկոսադրույքները** ավելի բարձր են, քան նախաձգնաժամային ժամանակահատվածում: Սա ձգնաժամի հետևանք է և շեշտադրում է առկա տնտեսական և ֆինանսական ռիսկերը: Այն նաև գների աճով պայմանավորված ճնշումների արդյունք է: Ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում ավանդների տոկոսադրույքները 8,3 տոկոսից հասան 9,3 տոկոսի, մինչդեռ վարկավորման տոկոսադրույքների մասով գրանցվեց ոչ նշանակալի անկում 19,5 տոկոսից 18,8 տոկոս: Այս թվերն ավելի բարձր են, քան վարկավորման տոկոսադրույքները նախաձգնաժամային ժամանակահատվածում (օրինակ՝ 16,7 տոկոս 2008-ի երրորդ եռամսյակում):

Վարկերը հեշտությամբ հասանելի չեն եղել հեռավոր բնակավայրերում և սահմանամերձ

շրջաններում ապրող բնակչության համար, չնայած որ տնտեսական ձգնաժամի հետևանքով առաջացած ֆինանսական սահմանափակումները բերել են հավելյալ վարկավորման անհրաժեշտություն, հատկապես տնտեսության այնպիսի խոշոր ճյուղերում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, շինարարությունը և արդյունաբերությունը: Բոլոր առևտրային բանկերի տրամադրած վարկերի ծավալը 2009-ի սեպտեմբերին կազմել է 724 միլիոն դրամ 2010-ի սեպտեմբերի 848 միլիոնի դիմաց: Վերջին թիվը գրեթե 30 տոկոսով ավելի բարձր է, քան 2008-ին: Վարկերի այս աճը գալիս է մասնավոր հատվածի կարիքներից, իսկ անհատներին տրվող վարկերը նվազել են: Շատ բանկեր դադարեցրել են անշարժ գույքի և սպառողական վարկերի տրամադրումը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԻՄՆԱԶԱՐՑԵՐ

Հայաստանի ներկայիս ամենակարևոր հիմնահարցերից մեկը ինստիտուցիոնալ բարեփոխումներն են: Պաշտոնապես Հայաստանում այսօր ընթանում են երկրորդ սերնդի ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումներ, սակայն իրականում դեռևս շոշափելի առաջընթաց չի նկատվում: Երկիրը դեռ չի կարող անցնել ազատ շուկայական արժեքների ավելի բարձր մակարդակի, և վտանգ կա, որ ավելի կամրապնդվեն ոչ ֆորմալ կապերն ու գործելաոճը: Այս իրավիճակը լուրջ է Հայաստանի համար: Եթե այսպես շարունակվի, երկիրը կարող է ընկնել ինստիտուցիոնալ ծուղակի մեջ, այսինքն երբ ոչ ֆորմալ խաղի կանոնները հետզհետե դառնում են ֆորմալ: Դրա լավագույն օրինակը Հայաստանում լայնորեն տարածված սերտաճումն է իշխանության և գործարարության միջև:

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

Տնտեսական կյանքում այս երևույթն իր արտացոլումն է ստանում գործարար խմբերի և կոնցլոմերատների առկայությամբ, որոնք վերահսկում են տնտեսության տարբեր ճյուղեր և ապրանքային շուկաներ և իրենց կարգավիճակից ելնելով՝ հարկային դաշտում գտնվում են արտոնյալ դիրքում:

Ինչպես և նախորդ տարիներին, այս տարվա Համաշխարհային մրցունակության զեկույցի արդյունքներով, Հայաստանի ամենացածր ցուցանիշները վերաբերում են հենց **մրցակցության միջավայրին**՝ երեք ցուցանիշներն էլ 139 երկրների շարքում գտնվում են ամենաներքևի հորիզոնականներում, իսկ մրցակցային քաղաքականության արդյունավետության տեսանկյունից մեր երկիրը նախավերջին տեղում է:

Սա վկայում է այն մասին, որ չնայած բոլոր մակարդակներում հայտարարվում է ազատ մրցակցության կարևորության մասին՝ երկրի կայուն զարգացման տեսանկյունից, այնուամենայնիվ, իրականում հայաստանյան շուկաներում իրավիճակն էական փոփոխության չի ենթարկվում:

Այս ամենին զուգահեռ, կառավարությունը քայլեր է ձեռնարկում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման ուղղությամբ: Դրա մասին է վկայում այս տարվա օրենսդրական բարեփոխումների նոր փաթեթը, որով նախատեսվում է ուժեղացնել Հանձնաժողովի լիազորությունները հակամրցակցային գործողությունների կանխարգելման ուղղությամբ և լուծել հանձնաժողովի ֆինանսական անկախության հիմնահարցը: Ընդունվել է նաև մրցակցային միջավայրի եռամյա բարելավման ռազմավարությունը, որի իրականացման արդյունքում հանձնաժողովը կունենա ինստիտուցիոնալ լրիվ այլ պատկեր:

Սակայն հարկ է նշել, որ այս ջանքերը կդատապարտվեն ծախսողման, քանի դեռ չի լուծվել մրցակցային դաշտը խաթարող ամենակարևոր գործոններից մեկը՝ տնտեսության ստվերային հատվածի խնդիրը:

Վերջինիս դեմ պայքարը դուրս է հանձնաժողովի լիազորությունների շրջանակից: Բացի այդ, առկա խաղի ոչ ֆորմալ կանոնները ուղղակի թույլ չեն տալիս հանձնաժողովին արդյունավետ աշխատել: Դրա վկայությունն է նախորդ տարում հանձնաժողովի կողմից սկսած պայքարը դեղերի շուկայում առկա հակամրցակցային համաձայնությունների դեմ, երբ արդյունքում պատժվեցին դեղեր ներկրող յոթ խոշոր տնտեսվարող սուբյեկտներ, ինչը աննախադեպ երևույթ էր հանձնաժողովի պատմության մեջ, սակայն արդեն իսկ 2010 թվականին հանձնաժողովի նոր ղեկավարությունը նախորդի կայացրած որոշումը չեղյալ համարեց:

Հարկային և մաքսային ոլորտները մնում են գործարար միջավայրի զարգացման և ազատ մրցակցային դաշտի ապահովման հիմնական խոչընդոտներից մեկը: Հիշյալ ոլորտներին առանձնահատուկ ուշադրություն են դարձնում նաև հեղինակավոր դոնոր կազմակերպությունները, որոնք լուրջ ֆինանսական ռեսուրսներ են ուղղում դաշտը բարելավելու ուղղությամբ:

Չնայած արձանագրված ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ընդհանուր առմամբ գործարար շրջանակները դեռևս ակնհայտ դրական տեղաշարժ չեն նկատում հարկային և մաքսային ծառայությունների աշխատատեղում: Պատճառը բյուջետային եկամուտներից բխող յուրաքանչյուր հարկային տեսչության վրա հաստատված պլանի առկայությունն է, որն էլ հարկային տեսուչներին դրդում է իրենց բոլոր կարողությունները կիրառել գումարներ հավաքագրելու համար: Եթե սրա հետ մեկտեղ գոյություն ունեն հարկային

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԶԵՏՈ

արտոնություններ վայելող մի քանի արտոնյալ խմբեր, ապա պարզ է դառնում, որ հարկային վարչարարությունն առավելապես ծանրացած է հիմնականում փոքր և միջին բիզնեսի ուսերին: Այն, որ խոշոր բիզնեսը պատշաճ չի հարկվում, վկայում է ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետների իրականացրած հետազոտությունը՝ հիմք ընդունելով պաշտոնապես հրապարակված 1000 խոշոր հարկատուների տվյալները: Բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ հարկային պարտավորությունների կատարման տեսանկյունից խոշոր բիզնեսի «կարողությունները» մնում են չբացահայտված, ինչն էլ իր հերթին տրամաբանորեն պարզ է դարձնում պահանջվող բարեփոխումների հիմնական ուղղությունը՝ թեթևացնել փոքր և միջին ձեռնարկությունների հարկային և մաքսային բեռը և վարչարարության արդարացի իրականացում ապահովել:

Ինչպես և նախորդ տարիներին, այս տարվա Համաշխարհային մրցունակության զեկույցի արդյունքներով, Հայաստանի ամենացածր ցուցանիշները վերաբերում են հենց մրցակցության միջավայրին:

2010 թվականին ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ ձգնաժամի պատճառով ժամանակային առումով ճշգրտումների ենթարկված հարկային վարչարարության 2008-2011 թթ. ռազմավարական ծրագրի դրույթների իրականացմանը: Հիմնական շեշտադրումը դրված է հարկատուների

կողմից հարկային պարտավորությունների թեթևացմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Հիշյալ միջոցառումների շարքին են մասնավորապես դասվում հարկ վճարելու գործարքային ծախսերի նվազեցումը, հարկային հաշվետվությունների պարզեցումն ու միասնականությունը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգի ներդրումը:

Հարկային վարչարարության արդյունավետության և արդարացի կիրարկմանն ուղղված կառավարության միջոցառումներն են.

- ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրություն,
- ռիսկային չափորոշիչների հիման վրա ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատ համակարգերի ներդրում (ոչ ռիսկային արտահանողների մեծ մասի համար),
- հարկային մարմինների գործունեության թափանցիկության և գործարարների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացում,
- փոքր բիզնեսով զբաղվելու կանոնների պարզեցում, որոնց համաձայն արտոնագրային վճար վճարող կարող են համարվել տարեկան մինչև 6 միլիոն դրամ հասույթ ունեցողները:

Մաքսային վարչարարության բնագավառում շարունակվել են արտաքին առևտրի, ինչպես նաև ընդհանուր գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները, որոնց հաջող գործարկման արդյունքում կթեթևացվի արտահանողների և ներկրողների բեռը և կնվազեցվեն վերջիններիս գործարքային ծախսերը:

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

Դրանցից հարկ է առանձնացնել պետական եկամուտների կոմիտեի ինտերնետային կայքում ըստ առանձին ապրանքատեսակների արտաքին առևտրի համար պահանջվող համապատասխան փաստաթղթերի սպառիչ ցանկի և հետքացթողումային հսկողության ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերի տեղադրումը, ավտոմատ համակարգչային ծրագրում կիրառվող «կանաչ ուղու» գործարկումը, հետքացթողումային հսկողության բնագավառում ռիսկերի կառավարման հստակեցումը:

Հայաստանում **գործարար միջավայրի բարելավման** հիմնահարցերը մնում են կառավարության ուշադրության ներքո, սակայն ձեռնարկված միջոցառումները հիրավի անբավարար են, ինչպես նշում է Համաշխարհային բանկի կողմից թողարկված «Գործարարությանը զբաղվելը» 2011 թվականի զեկույցը: Հատկանշական է, որ Հայաստանը նախորդ տարվա համեմատ բացասական արդյունք է գրանցել հիմնական ցուցիչը բնութագրող ինը ենթացուցիչներից ութում:

Էական առաջընթաց է գրանցել «միջազգային առևտուր» ենթացուցիչը՝ բարձրանալով 21 կետով և հասնելով 82-րդ հորիզոնականին, սակայն ինքնին մնալով որպես անբավարար ցուցանիշ: Սա հիմնականում պայմանավորված է արտաքին առևտրի հետ կապված մաքսային ընթացակարգերի պարզեցմամբ, էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրմամբ և այլ ինստիտուցիոնալ բարեփոխումներով:

Ի թիվս հարկային և մաքսային բարեփոխումների, աշխատանքներ են իրականացվում նաև գործարար միջավայրի բնագառավում, որոնց հիմնական նպատակն է կրճատել գործարարությանը զբաղվելու և շուկա մուտք գործելու վարչական խոչընդոտները, որի արդյունքում գործատուն կխնայի իր

ժամանակն ու նյութական միջոցները, ինչպես նաև կուժեղանա մրցակցությունը որոշ ապրանքային շուկաներում: Հիշյալ նպատակների իրականացմանն են միտված մասնավորապես ընկերությունների հիմնադրման համար «մեկ պատուհան» համակարգի ներդրումը և էլեկտրոնային եղանակով ընկերությունների գրանցումը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների զգալի կրճատումը, շինարարական թույլտվությունների ամբողջական գործընթացի բարելավումը: Նպատակը մնում է ցանկալի, չնայած վերջին տարիներին այս համակարգը հավանաբար արդեն մի քանի անգամ ներդրվել է: Ի վերջո Հայկական զարգացման գործակալությունն ստեղծելու հիմքում հենց այս գաղափարն էր:

Հարկային և մաքսային ոլորտները մնում են գործարար միջավայրի զարգացման և ազատ մրցակցային դաշտի ապահովման հիմնական խոչընդոտներից մեկը:

Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորման գործընթացում կարևորվում է միջազգային հեղինակավոր կառույցների աջակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվող Կորպորատիվ կառավարման կանոնագիրը: Այն միտված է կանոնակարգելու ոչ միայն մասնավոր ընկերությունների այլև պետական սեփականության ներքո գործող ձեռնարկությունների գործունեությունը, ինչը հրատապ խնդիր է՝ պետական սեփականության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

Հայաստանում **ֆինանսական համակարգը** թեև ինստիտուցիոնալ զարգացվածության առումով կայուններից մեկն է, այնուամենայնիվ երկրի տնտեսության մրցունակությանը նպաստելու տեսանկյունից այն դեռևս գտնվում է ոչ բավարար մակարդակում: Դրա մասին է վկայում Համաշխարհային մրցունակության զեկույցը որտեղ 139 երկրների շարքում Հայաստանը ֆինանսական շուկայի զարգացման մակարդակով զբաղեցնում է 110-րդ հորիզոնականը, իսկ գործարարություն ծավալելու թվով երրորդ ամենաէական խոչընդոտը ֆինանսական միջոցների անհասանելիությունն է: Իրական հատվածի զարգացման վրա ֆինանսական համակարգի ոչ բավարար ազդեցության մասին են վկայում նաև ավանդների և վարկերի միջև առկա տոկոսադրույքների տարբերության մեծ չափերը և ՀՆԱ-ի համեմատ ներքին վարկավորման ծավալների փոքր լինելու հանգամանքը:

Առանձնապես ուշադրության են արժանի կենսաթոշակային համակարգի փոփոխության և ավտոտրանսպորտային միջոցների պատասխանատվության պարտադիր ապահովագրության պահանջի ներմուծումը, որպես երկար փողերի առաջացման կարևոր գործիքներ:

Ավտոտրանսպորտային միջոցների պատասխանատվության պարտադիր ապահովագրության նոր համակարգը ոչ միանշանակորեն ընդունվեց փորձագիտական շրջանակներում՝ ըստ որոշ փորձագետների այն բավականին ուշացել է, ոմանք էլ կարծում են, որ այն դեռ վաղաժամ է:

Այնուամենայնիվ, Հայաստանում գրանցված մոտ 450 հազար ավտոմեքենա առ 2011 թվականի հունվարին արդեն իսկ պետք է ապահովագրված լինեն: Համակարգի ներդրումն, ըստ էության, հետապնդում է ռազմավարական երկու խնդիր՝ ավտոտրանսպորտային պատահարների

ինստիտուցիոնալ դաշտն ավելի քաղաքակիրթ և կանխատեսելի դարձնելու, ինչպես նաև զարգացնելու ապահովագրական ոլորտը:

Ապահովագրական շուկայի զարգացմանը զուգահեռ տեղի է ունենում համակենտրոնացում շուկայում, որն ակնկալվում է, որ կշարունակվի նաև ապագայում: 2010 թվականին ապահովագրական ընկերությունների թիվը կրճատվեց 3-ով՝ դառնալով 9: Ապահովագրության շուկայի զարգացմանը կարող է նոր թափ հաղորդել հնարավոր օրենսդրական փոփոխություններն ուղղված շինարարության և առողջության պարտադիր ապահովագրման համակարգի ներդրմանը:

Կենսաթոշակային բարեփոխումները յուրաքանչյուր երկրի համար բարդագույն և սոցիալական առումով կարևորագույն միջոցառումներից է: Վերջինիս գրագետ մշակումը և իրականացումը պետության տնտեսական և սոցիալական կայունության հենասյուներից է: Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումները ևս դարձել են ժամանակի հրամայական: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սերունդների համերաշխության համակարգը իրականում «ապահով ծերություն» չի երաշխավորում կենսաթոշակառուներին (աշխատող/կենսաթոշակառու պաշտոնական գործակիցը 1/1 է) և ելնելով երկրի ժողովրդագրական պատկերի առանձնահատկություններից (ծնելիության կրճատում 1990-ականների սկզբին), կառավարությունը ձեռնամուխ եղավ նոր բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման աշխատանքներին:

Հայաստանում 2011 թվականից կգործի էապես նոր կենսաթոշակային համակարգ, որի կարևորագույն առանձնահատկությունը կամավոր (կգործի 2011 թվականից և չունի տարիքային սահմանափակում) և պարտադիր (կգործի 2014 թվականից և կտարածվի մինչև

ՃՂՆԱԺԱՄ ՃՂՆԱԺԱՄԻՑ ԶԵՏՈ

40 տարեկան անձանց վրա) կուտակային համակարգի ներդրումն է, որի արդյունքում խնայված գումարները կուտակվելու են համապատասխան հիմնադրամներում և ներդրվելու են կայուն եկամտաբերություն ունեցող ակտիվներում, և որի հիմնական առաքելությունն է «այսօր ապահովել վաղվա ծերությունը»:

Սակայն արդեն իսկ բազմաթիվ հարցեր և մտահոգություններ են ծագում նոր համակարգի ներդրման հետ՝ կապված Հայաստանում ընդհանրապես ինստիտուտների և մասնավորապես ֆինանսական համակարգի թերզարգացվածության, ապագայում գումարների վերադարձելիության, բնակչության և գործատուների վրա հարկային բեռի ավելացման, պետության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման, երկրում կոռուպցիայի բարձր մակարդակի և այլ հարցերի հետ:

Իհարկե, այս համակարգերը, լինելով աննախադեպ Հայաստանի համար, կունենան որոշակի թերություններ, որոնցից շատերն էլ ակնհայտ կդառնան դրանց գործարկմանը զուգընթաց, սակայն տնտեսության տեսանկյունից կարևորագույն հարցերից է կուտակված գումարների տեղադրման խնդիրը, որն առավել սուր կլինի կենսաթոշակային համակարգի դեպքում՝ ելնելով վերջինիս մասշտաբայնությունից: Արդյոք այդ գումարները կհոսեն երկրից դուրս վերապահովագրման կամ այլ արժեթղթերում ներդրման նպատակով, թե դրանք կմնան երկրի ներսում:

Վերջինիս դեպքում, որն երկրի տեսանկյունից առավել նախընտրելին է, առանցքային հիմնախնդիրն իրական հատվածի կողմից կուտակված միջոցների կլանման կարողությունների զարգացումն է: Հակառակ դեպքում այն միջոցները, որոնք կձևավորվեն ի հաշիվ այսօրվա սպառման կրճատման, կհոսեն երկրից

դուրս և կուղղորդվեն այլ պետությունների կամ ընկերությունների ֆինանսավորմանը: Փաստորեն ակնհայտ է, որ ֆինանսական համակարգի բարեփոխումների հաջողությունը տնտեսական հարթությունում անմիջականորեն կախված է իրական հատվածում հիմնարար վերափոխումների իրականացումից, որի հետևանքով կձևավորվի խնայողությունների կլանման արդյունավետ պոտենցիալ:

ԶԵՌԱՆԿԱՐ

2011-ին համաշխարհային տնտեսությունը կգրանցի չափավոր, սակայն աշխարհագրության տեսանկյունից ոչ հավասարաչափ աճ: Չինաստանի ու Ռուսաստանի դեպքում աճը կհասնի 6-8 տոկոսի՝ առաջացնելով գնաճի հետ կապված մտահոգություններ, ինչը հիմք կհանդիսանա տնտեսական աճը դանդաղեցնող միջոցառումների համար: Եվրոպական երկրներում և Միացյալ Նահանգներում տնտեսական աճը կկազմի շուրջ 1-3 տոկոս: Համաշխարհային տնտեսության գերակա մարտահրավերները կլինեն պարտքերը և պակասորդի կրճատումը: Եվրոպական շատ երկրներում պետական պարտքի խնդիրը կմնա չլուծված:

Այս զարգացումներն իրենց ազդեցությունը կունենան Հայաստանի հիմնական առևտրային և տնտեսական գործընկերոջ՝ Ռուսաստանի տնտեսության վրա: Չնայած նավթի բարձր գներին, Ռուսաստանի տնտեսության աճը չափավոր կլինի, ինչով էլ, համապատասխանաբար, կպայմանավորվեն Հայաստանում կատարվող արտաքին ուղղակի ներդրումների և դրամական փոխանցումների ծավալները:

Հայաստանի տնտեսական աճը կլինի փոքր: Չնայած համաշխարհային տնտեսության չափավոր աճին, Հայաստանի տնտեսությունը դեռևս կշարունակի զգալ տնտեսական

ՃԳՆԱԺԱՍ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

ձգնաժամի ուշացած ազդեցությունը: Բացի այդ, համաշխարհային տնտեսական ձգնաժամի արդյունքում նոր դժվարություններ ի հայտ կգան երկրի տնտեսության զարգացման ճանապարհին, ինչպիսիք են արտաքին վարկառության սահմանափակ կարողությունները, մեծ արտաքին պարտքը և բյուջեի մեծ պակասորդը:

Պահանջարկը, հավանաբար, կշարունակի ցածր լինել և՛ ներքին շուկայում՝ պայմանավորված գործազրկության և աղքատության մակարդակի աճով ու գնողունակության նվազմամբ, և՛ արտաքին շուկայում: Հայաստանի տնտեսությունը կշարունակի զգայուն լինել Ռուսաստանի և Եվրոպական երկրների տնտեսությունների չափավոր զարգացման և եվրոյի արժեզրկման նկատմամբ:

Հայաստանի բյուջեի պակասորդի և արտաքին պարտքի մակարդակները դեռևս բարձր կլինեն հակառակ դրանց նվազեցմանն ուղղված փորձերին: Չնայած կառավարության հարկաբյուջետային կարգապահության փորձերին, 2011-ը լինելով նախընտրական տարի, քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից ծախսերն ավելի են գերակայելու:

Անկախ խոստումներից և լուրջ ջանքերից, կառավարությունը դեռևս ի վիճակի չի լինի իրականացնել երկրորդ սերնդի բարեփոխումներ՝ չցանկանալով հակառակվել քաղաքական դաշտում ազդեցիկ գործարարներին, հատկապես նախընտրական տարում:

Հարկերի հավաքագրման խտրական քաղաքականությունը՝ ուղղված կոնկրետ ոլորտների, կշարունակի դուրս մղել փոքր և միջին ձեռնարկություններին շուկայից՝ էլ ավելի փոքրացնելով դաշտը և սահմանափակելով մրցակցությունը:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Կառավարությունը օգտագործել է բոլոր հարկաբյուջետային և դրամավարկային այլընտրանքները: Այդ իսկ պատճառով, նոր հարկաբյուջետային միջավայր ձևավորելու համար այն ստիպված կլինի սկսել քաղաքականության տեսակետից զգայուն բարեփոխումների գործընթաց, որը կունենա հստակ տնտեսական հետևանքներ:

Անհրաժեշտ է, որ կառավարությունը մակրոտնտեսական քաղաքականությունից ուշադրությունը ուղղորդի բարեփոխումների քաղաքականությանը: Տնտեսական աճի հիմնական արգելքներն են տնտեսության բազմազանեցման և մրցունակության պակասը, ինչպես նաև գործարարների ու պետական գործիչների փոխկապակցվածությունը: Այս բնագավառներում բարեփոխումների իրականացումը պետք է լինի կառավարության ուշադրության կենտրոնում:

Անհրաժեշտ է լրջորեն վերաբերվել միջազգային գործակալությունների կողմից հրապարակվող տարբեր տնտեսական ցուցիչներին: Դրանք օգտակար են ոչ միայն ընդհանուր վարկանիշային առումով, այլև այդ ցուցանիշների և կատեգորիաների մանրամասն մեկնաբանությունների տեսանկյունից: Մրցունակության մակարդակի բարելավման համար կառավարությունը պետք է զարգացնի իր հաստատությունները, վերափոխի կրթական համակարգը, արդյունավետ դարձնի ապրանքների և աշխատուժի շուկաները և ամրապնդի տնտեսության տեխնոլոգիական պատրաստվածությունը:

Հայաստան-Եվրոպական Միություն ստացիացման համաձայնագիրն ընձեռում է իրական բարեփոխումների և փոփոխությունների կատարման և կոնկրետ ոլորտներում աճի ապահովման հսկայական

ՃԳՆԱԺԱՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ

հնարավորություններ, որոնք մեծապես կնպաստեն տնտեսության մրցունակությանը: Համաձայնագիրը Հայաստանի համար ստեղծում է շահեկան հնարավորություններ եվրոպական շուկա մտնելու նպատակով նոր կանոնակարգեր ու չափանիշներ ներդնելու համար: Հայաստանը պետք է օգտվի եվրոպական Միության հետ տնտեսական ինտեգրացիայի այս հնարավորությունից, ապահովելով պահանջվող ստանդարտի-զացիան ու արտոնագրումը և արտահանում-ները դարձնելով մրցունակ եվրոպական և այլ շուկաներում:

Անհրաժեշտ է, որ երկրի ղեկավարները մի կողմ դնեն վերջին երկու տարիներին բնորոշ, արտակարգ իրավիճակներին արձագանքելու ձևաչափով մտածելակերպը և ուշադրությունը կենտրոնացնեն համընդհանուր զարգացման վրա: Անհրաժեշտ է լրջորեն վերանայել կառավարության քաղաքականության հիմնական փաստաթուղթը՝ կայուն զարգացման ծրագիրը, ելնելով վերջին երկու տարիների տնտեսական անկման արդյունքում առաջացած նոր տնտեսական պայմաններից:

Կա ներկրման փոխարինման հավելյալ ռազմավարության կարիք նախկինում (2000-2005) գործադրված ջանքերը ավելի բարձր մակարդակի հասցնելու և այս գործընթացում տարբեր ոլորտներն ընդգրկելու համար՝ սննդի արտադրությունից մինչև բարձր տեխնոլոգիաներ: Սա չափազանց կարևոր է արտաքին առևտրի հաշվեկշիռը բարելավելու տեսանկյունից:

Հակառակ կառավարության հայտարարություններին այն մասին, որ արտարժույթի փոխարժեքի մասով միջամտությունները հետապնդում են ընդամենը այդ փոխարժեքի տատանումները մեղմելու նպատակ, դեռևս առկա է հակազդեցություն հիմնական միտումների

նկատմամբ: Պետք է միջամտել դրամի արժեքի փոփոխությանը և թույլ տալ, որ այն այնքան արժեզրկվի և ձևավորի, այնպիսի դրամավարկային իրավիճակ, որը շահեկան է արտահանման և բնակչության՝ հատկապես արտասահմանից կատարվող փոխանցումներից կախված քաղաքացիների գնողունակության բարձրացման համար:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՆԱ աժ՝ 2,9 տոկոս
Գնաժ՝ 8 տոկոս
ՀՆԱ՝ \$8,8 մլրդ
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$2676 (գնողունակությամբ կշռված՝ \$5178)
Բնակչություն՝ 3,2 մլն

2011 ՀԵՌԱՆԿԱՐ
 Տնտեսությունը կշահի աճող դրամական փոխանցումներից, հատկապես Ռուսաստանից՝ պայմանավորված հումքային շուկայում գների շարունակվող աճով: 2011-ին սպասվող տնտեսական աճը կտատանվի 3%-ի շուրջ՝ զուգակցվելով 4-ից 5% միջակայքում ընկած գնաժով: Ընթացիկ հաշվեկշիռը հավանաբար կբարելավվի մի քանի տոկոսով՝ այսօրվա բացասական 14,5%-ից, մինչդեռ համախառն պետական պարտքը կշարունակի աճել մինչև ՀՆԱ-ի 50%-ը:

Երբաղաքական իմաստով՝ 2011-ը համարվելու է նախընտրական, թեև 2012թ. խորհրդարանական ընտրություններին դեռ 18 ամիս կա: Իշխանություն-ընդդիմություն լարվածությունը կաճի, կռալիցիայի մաս կազմող և արտախորհրդարանական ուժերը կսկսեն նախապատրաստվել ընտրություններին: Սրանով պայմանավորված, մի կողմից անորոշությունը ավելի կխորանա, մյուս կողմից, եթե մի քանի քաղաքական ուժեր նախաձեռնեն համարձակ ու ստեղծագործ քայլեր՝ ձևավորելու ավելի ընդունելի և խելամուտ միավորումներ, ապա նրանք կարող են իրական ներկայացուցչական համակարգի նոր հույսը դառնալ:

Արտաքին քաղաքական ոլորտում դարաբաղյան հակամարտությունը կլինի մարտահրավերների ցուցակի վերևում, և տարածաշրջանային չկարգավորված այս հիմնահնդրի շուրջ կպատվեն մյուս բոլոր հարցերը, ներառյալ Թուրքիայի հետ հարաբերությունները, թեև 2011-ի խորհրդարանական ընտրությունները հետին պլան կմղեն հայ-թուրքական հարաբերությունները:

ԱՂՐԲԵՋԱՆ

ՀՆԱ աժ՝ 4,3 տոկոս
Գնաժ՝ 6 տոկոս
ՀՆԱ՝ \$52 մլրդ
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$5764 (գնողունակությամբ կշռված՝ \$9953)
Բնակչություն՝ 9 մլն

2011 ՀԵՌԱՆԿԱՐ
 Աղբբեջանի տնտեսությունը, ըստ սպասումների, կաճի՝ պայմանավորված միջազգային հումքային շուկայում գների բարձրացումով: Երկրի տնտեսությունը դեռևս կառուցվածքային լուրջ թուլություններ ունի՝ ներառյալ ակնհայտ կախվածությունը նավթարդյունաբերությունից: Երկրի առջև ծառայած խնդիրներից են գործարար միջավայրի բարելավումը, ռազմավարական հատվածների և ներդրումների խթանումը և ֆինանսական հատվածի բարեփոխումները:

Քաղաքական իմաստով՝ այս տարի Աղբբեջանը համապետական ընտրություններ չունի: 2010 թ. խորհրդարանական ընտրություններից հետո, թեև ներքաղաքական մթնոլորտը բարենպաստ չէ, իրավիճակը կայուն է: Նախագահ Ալիևը և իր կուսակցությունն ու աջակիցները վերահսկում են քաղաքական և տնտեսական ոլորտները: Հաշվի առնելով աճող եկամուտներն ու աշխարհում էներգիայի առևտրում նրա տեսանելի դերը, Աղբբեջանն ավելի համառ կլինի տարածաշրջանային և միջազգային հարցերում, ներառյալ դարաբաղյան հակամարտությունը: Աղբբեջանի ռազմատենչ հռետորությունը ավելի կնվազեցնի առաջընթացը դարաբաղյան բանակցություններում:

ՎՐԱՍՏԱՆ

ՀՆԱ աժ՝ 5,5 տոկոս
Գնաժ՝ 10 տոկոս
ՀՆԱ՝ \$11,2 մլրդ
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$2559 (գնողունակությամբ կշռված՝ \$5057)
Բնակչություն՝ 4,4 մլն

2011 ՀԵՌԱՆԿԱՐ
 Վրաստանի տնտեսությունը մեջ 2011-ին սպասվում է դանդաղանկուն՝ կապված սահմանափակ օտարերկրյա ուղիղ ներդրումների ներհոսքով: Ընդլայնման քաղաքականությունը և վարկային ծրագրերը կշարունակեն խթանել ներքին պահանջարկը: Ընթացիկ հաշիվների պակասորդը կպահպանվի 12%-ի շրջակայքում, միջդեռ պետական պարտքը կաճի մինչև ՀՆԱ-ի 48%-ը: Պետական պարտքն ու գնաժի վերահսկումը, ինչպես նաև օրենքի գերակայության հաստատումն ու ներդրումային միջավայրի բարելավումը կշարունակեն մնալ երկրի հիմնական մարտահրավերները:

2012-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ ընդդիմությունը կփորձի միավորվել և վտանգ ներկայացնել Վրաստանի գործող վարչակազմին, սակայն նախագահ Սակաշվիլին կշարունակի պահել իշխանությունն ու կայունությունը: Վրաստանը շարունակելու է խորացնել համագործակցությունը ԵՄ-ի հետ: Ռուսաստանի հետ հարաբերությունները կմնան սառեցված, Թբիլիսին կշարունակի խորացնել կապերը Թուրքիայի և Աղբբեջանի հետ:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՀՆԱ աճ՝ 4 տոկոս	2011 ՀԵՌԱՆԿԱՐ Ռուսաստանի տնտեսության վերականգնումը պայմանավորված էր դրամավարկային խոշոր ներդրումով, ապրանքների շուկայում կայուն գնեղում, ինչպես նաև՝ շուկայական պահանջարկով: 2011-ին տնտեսությունում սպասվում է մինչև մեկ տոկոս աճ միայն, քանի որ առկա են կառուցվածքային և այլ բացթողումներ՝ չնայած կառավարության ջանքերին՝ արդիականացնելու արդյունաբերությունը և բազմազանեցնելու տնտեսությունը առաջին հերթին բանկային և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:
Գնաճ՝ 8 տոկոս	
ՀՆԱ՝ \$1476 մլրդ	
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$10521 (գնողունակությամբ կշռված՝ \$15806)	
Բնակչություն՝ 140,3 մլն	

Քաղաքական երկնակամարում Մեդվեդև-Պուտին տանդեմը մնալու է ամուր՝ ժամանակ առ ժամանակ երևան հանելով իրական կամ ձևական մրցակցություն: Մինչև աշուն հստակ չի լինի, թե նրանցից ով է լինելու նախագահի թեկնածուն գալիք ընտրություններում: Կովկասում Ռուսաստանը շարունակելու է ամրապնդել իր դիրքերն ու ներկայությունը: Համաշխարհային քաղաքականության տիրույթում Մոսկվան շարունակելու է մարտահրավեր նետել ԱՄՆ գերիշխանությանը և հնարավոր է, որ փորձի այլ խոշոր պետությունների հետ ձևավորել երկրորդ րևեռ՝ հակակշռելու ԱՄՆ-ին:

ԹՈՒՐԻՔԻԱ

ՀՆԱ աճ՝ 7,8 տոկոս	2011 ՀԵՌԱՆԿԱՐ Կայունությունը Թուրքիայի տնտեսությունում այս ֆինանսական ծգնաժամի ընթացքում կարող է վերագրվել ոչ միայն բարելավվող արտաքին պայմաններին և պահանջարկին, այլև դրամավարկային շրջահայաց քաղաքականությանը, մասնավորեցմանն ու ընթացիկ բարեփոխումներին: Քաղաքական բարեփոխումները և ուժեղ կառավարությունը ևս, թվում է, թե վերականգնել են վստահությունը: 2011-ին կշարունակվի տնտեսական աճը, որը մոտ կլինի զարգացած երկրների միջինին՝ մոտ 3,6% և կգուզակցվի ցածր գնաճով:
Գնաճ՝ 8,2 տոկոս	
ՀՆԱ՝ \$729 մլրդ	
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$10206 (գնողունակությամբ կշռված՝ \$13392)	
Բնակչություն՝ 71,5 մլն	

Ներքաղաքական իմաստով՝ 2011-ը Թուրքիայի համար կարևոր տարի է: Ամռան խորհրդարանական ընտրություններում սպասվում է «Արդարություն և զարգացում» կուսակցության հաղթանակը: Խորհրդարանում ներկայացվածության աստիճանը կպայմանավորի Թուրքիայի՝ ԵՄ-ի հետ ինտեգրացիան, տարածաշրջանային ընդարձակումը, հարաբերությունները Կիպրոսի ու Հայաստանի հետ և քրդական խնդրով ձեռնարկվելիք քայլերը:

ԻՐԱՆ

ՀՆԱ աճ՝ 1,5 տոկոս	2011 ՀԵՌԱՆԿԱՐ Միջազգային հումքային շուկաներում կայունությունը պահպանեցին ստատուս-քվոն Իրանի տնտեսության մեջ, անգամ նկատվեց փոքր-ինչ բարելավում ՀՆԱ-ի և գնաճի բաղադրիչներում: Սպասվում է, որ տնտեսությունը կաճի 3%-ով՝ չնայած միջազգային նոր ծնշումներին և պատժամիջոցներին:
Գնաճ՝ 8 տոկոս	
ՀՆԱ՝ \$338 մլրդ	
ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$4484 (գնողունակությամբ կշռված՝ \$11024)	
Բնակչություն՝ 75,3 մլն	

Ներքաղաքական կյանքում, չնայած հետընտրական անկայունությանը, կառավարությունը ավելի ինքնավստահ է: Իշխանության ներսում նախագահի և կրոնապետի կողմնակիցների միջև լարվածությունը առավել ակներև է դառնալու և կարող է բերել նոր փոփոխություններ կառավարությունում՝ ամրապնդելով նախագահի ազդեցությունը:

Արտաքին քաղաքականության հարցում Իրանը շարունակելու է հաստատական ու աննկուն մնալ միջուկային հարցում: Միջուկային հարցերով նախարարի նշանակումը արտգործնախարարի պաշտոնում ցույց է տալիս, որ միջուկային հարցը շարունակելու է մնալ Իրանի արտաքին քաղաքականության առաջնային նպատակը: Արևմուտքը փորձելու է ավելացնել Իրանի նկատմամբ ծնշումները, որը տարածաշրջանում նոր մտահոգությունների տեղիք է տալու:

* Բոլոր ցուցիչները մոտավոր հաշվարկներ են 2009-ի համար:

Աղբյուրներ. Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամի Համաշխարհային տնտեսության կանխատեսում, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Էկոնոմիստ, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Դան և Բրադսթրիթ, ԱՄՆ մարդահամարների գործակալություն:

